# ԱՌԵՎՏՐԻ ԻԱՄԱՃԻԱՐԻԱՅԻՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ

2004

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

INTERNATIONAL
ECONOMICS

YEREVAN STATE UNIVERSITY
INTERNATIONAL ECONOMICS DEPARTMENT

# IMPACT OF WTO ACCESSION ON THE FOREIGN ECONOMIC & TRADE RELATIONS OF ARMENIA

*(A Practical Textbook)*

YEREVAN
A R T
2004

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱՄԲԻՈՆ

# ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ

*(ուսումնագիտական ձեռնարկ)*

ԵՐԵՎԱՆ
ԱՌՏ
2004

# IMPACT OF WTO ACCESSION ON THE FOREIGN ECONOMIC & TRADE RELATIONS OF ARMENIA

*(a practical textbook)*

*Team Leader and Scientific Editor*
*Head of International Economics Department of*
*Yerevan State University*
*Doctor of Economics, Full Professor*

**Toros Torosyan**

*Research Team:*

- Hasmik Hovhanisyan
- Marieta Mkrtchyan
- Grigor Hayrapetyan
- Nara Balasanyan
- Arman Gabrielyan
- Aram Araqelyan

This textbook has been submitted for publication by the International Economics Department of Yerevan State University.

This publication was undertaken with the support of the Government of Canada provided through the Canadian International Development Agency (CIDA) in cooperation with the Centre for Trade Policy and Law (CTPL) Ottawa, Canada.

***Publishing Editor:***
H. Hambardzoumyan

***Coordinator:***
H. Kaspar

***Proof Reader:***
R. Vardanyan

The International Economics Department of Yerevan State University extends its gratitude to Ms. Martina Philipson, CTPL Program Director for CIS and Eastern Europe and Mr. Phil Rourke, CTPL Executive Director, for their assistance and cooperation.

ISBN 99930 - 990 - 7 - 4

© Toros Sh. Torosyan, 2004

# ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ

*(ուսումնագիտական ձեռնարկ)*

*Աշխատանքների ղեկավար և գիտական խմբագիր,*
*ԵՊՀ «Միջազգային տնտեսագիտություն» ամբիոնի վարիչ,*
*տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

Թորոս Թորոսյան

*Աշխատանքային խումբ.*

- Հասմիկ Հովհաննիսյան
- Մարիետա Մկրտչյան
- Գրիգոր Հայրապետյան
- Նառա Բալասանյան
- Արման Գաբրիելյան
- Արամ Առաքելյան

Գիրքը հրատարակության է երաշխավորել
Երևանի պետական համալսարանի
«Միջազգային տնտեսագիտության» ամբիոնը:

Աշխատանքն իրականացվել է
Կանադայի կառավարության աջակցությամբ՝
Կանադայի Միջազգային Զարգացման
Գործակալության (ԿՄԶԳ) ու Օտտավայի Առևտրային
Քաղաքականության և Իրավունքի Կենտրոնի (ՕԱՔԻԿ)
համագործակցությամբ:

**Հրատ. խմբագիր՝**
Հ. Համբարձումյան

**Կոորդինատոր՝**
Հ. Գասպար

**Սրբագրիչ՝**
Ռ. Վարդանյան

ՀՏԴ 33
ԳՄԴ 65.9
Ա 707

ISBN 99930 - 990 - 7 - 4

© Թորոս Շահենի Թորոսյան, 2004

# TABLE OF CONTENTS

**Introduction**

**SECTION 1. Effects of WTO Accession on Armenia's Foreign Trade Policy**

1.1 WTO Main Requirements Regarding the Acceding Countries' Foreign Trade Policy
1.2 Main Approaches in Armenia's Foreign Trade Policy
1.3 Main Principles of Armenia's Foreign Trade Policy
1.4 Consistency of Armenia's Customs Policy with the WTO Requirements
1.5 Consistency of Armenia's Non-Tariff Policy with the WTO Requirements

**SECTION 2. Compliance of Armenia's Foreign Trade Agreements with WTO Requirements**

2.1 WTO Approaches to Foreign Trade Relations
2.2 Armenia's Principles for Joining Foreign Trade Agreements
2.3 Process of Structuring Armenia's Foreign Trade Agreements

**SECTION 3. WTO Accession and Foreign Trade Relations with Neighboring and Main CIS Partner Countries**

3.1 WTO Accession Process for Armenia and Neighboring Countries
3.2 WTO Accession Process for Armenia's Main CIS Trade Partners
3.3 Armenia's Foreign Trade with Neighboring Countries before and after WTO Accession
3.4 Armenia's Foreign Trade with CIS Main Partners before and after WTO Accession

**SECTION 4. The Impact of WTO Accession on Armenia's Trade Balance**

4.1 General Characteristics of Armenia's Trade Balance
4.2 Armenia's Trade Balance by Commodity
4.3 Armenia's Trade Balance by Countries
4.4 Expectations of Benefits for Armenia's Trade Balance after WTO Accession

**SECTION 5. Effects of WTO Accession on the Development of Export Oriented Sectors in Armenia**

5.1 Armenia's Export Legislature
5.2 WTO Regulating Role in Exports System
5.3 Benefits for Foreign Economic Relations and Exports of Armenia after WTO Accession

5.4 Armenia's Exports Dynamics and Structure before and after WTO Accession
5.5 Export Enhancement
5.6 Armenia's Export Oriented Sectors

SECTION 6. The Macroeconomic Situation in Armenia before and after WTO Accession

6.1 Armenia's Economic Growth and International Trade
6.2 An Analysis of Armenia's Economic Growth and Foreign Trade
6.3 Demand and Supply Shocks in Armenia and the Regulation of Tariffs

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Նախաբան** ..... 11

**ԲԱԺԻՆ 1. Առևտրի համաշխարհային կազմակերպությանն ադամակցության ազդեցությունը Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրային քաղաքականության վրա** ..... 13

1.1. ԱՀԿ հիմնական պահանջներն անդամակցող երկրների արտաքին առևտրային քաղաքականության վերաբերյալ ..... 15

1.2. ՀՀ արտաքին առևտրային քաղաքականության հիմնական մոտեցումները ... 18

1.3. ՀՀ արտաքին առևտրային քաղաքականության հիմնական սկզբունքները .... 21

1.4. ՀՀ մաքսային քաղաքականության համապատասխանելիությունը ԱՀԿ պահանջներին ..... 24

1.5. ՀՀ ոչ մաքսային քաղաքականության համապատասխանելիությունը ԱՀԿ պահաջներին . ..... 30

**ԲԱԺԻՆ 2. ՀՀ միջազգային առևտրատնտեսական պայմանագրերի համապատասխանեցումը ԱՀԿ պահանջներին** ..... 35

2.1. ԱՀԿ դիրքորոշումը միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների վերաբերյալ ..... 35

2.2. ՀՀ առևտրատնտեսական պայմանագրերի կնքման սկզբունքները ..... 40

2.3. ՀՀ առևտրատնտեսական պայմանագրերի ձևավորման գործընթացը ..... 41

**ԲԱԺԻՆ 3. Հայաստանի անդամակցությունը ԱՀԿ-ին, առևտրատնտեսական կապերը հարևան և ԱՊՀ հիմնական գործընկեր երկրների հետ** ..... 56

3.1. Հայաստանի և հարևան երկրների անդամակցության գործընթացը ..... 57

3.2. Հայաստանի՝ ԱՊՀ հիմնական գործընկեր երկրների անդամակցության գործընթացը ... ..... 63

3.3. Հայաստանի արտաքին առևտուրը հարևան երկրների հետ՝ ԱՀԿ-ին անդամակցությունից առաջ և հետո ..... 68

3.4. Հայաստանի արտաքին առևտուրը ԱՊՀ հիմնական գործընկեր երկրների հետ՝ ԱՀԿ-ին անդամակցությունից առաջ և հետո ..... 72

**ԲԱԺԻՆ 4. ԱՀԿ անդամակցության ազդեցությունը ՀՀ առևտրային հաշվեկշռի վրա** ..... 78

4.1. ՀՀ առևտրային հաշվեկշռի ընդհանուր բնութագիրը ..... 78

4.2. ՀՀ առևտրային հաշվեկշռի ապրանքային կառուցվածքը ..... 82

4.3. ՀՀ առևտրային հաշվեկշռի աշխարհագրական կառուցվածքը ..... 90

4.4. ՀՀ առևտրային հաշվեկշռի բարելավման ակնկալիքը ԱՀԿ-ին անդամակցությունից ..... 96

**ԲԱԺԻՆ 5. ԱՀԿ-ին ՀՀ անդամակցության ազդեցությունը արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտների զարգացման վրա** ..... 106
5.1. ՀՀ արտահանումը կարգավորող օրենսդրական դաշտը ..... 106
5.2. ԱՀԿ դերը արտահանման համակարգի կարգավորման գործում ..... 111
5.3. ԱՀԿ անդամակցությունից Հայաստանի արտաքին տնտեսական կապերի և արտահանման ակնկալիքները ..... 113
5.4. Հայաստանի արտահանման դինամիկան և կառուցվածքը ԱՀԿ անդամակցությունից առաջ և հետո ..... 117
5.5. Արտահանման խրախուսման ձևերը ..... 123
5.6. ՀՀ արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտները ..... 125

**ԲԱԺԻՆ 6. ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը մինչև ԱՀԿ-ին անդամակցությունը և դրանից հետո** ..... 131
6.1. ՀՀ տնտեսական աճը և միջազգային առևտուրը ..... 132
6.2. ՀՀ տնտեսական աճի և արտաքին առևտրի վերլուծությունը ..... 137
6.3. ՀՀ առաջարկի ու պահանջարկի շոկերը և մաքսային սակագների կարգավորումը ..... 141

# INTRODUCTION

Armenia has been negotiating membership in the General Agreement in Trade and Tariffs (GATT) and, consequently, the World Trade Organization (WTO), since 1992. It officially acceded to the WTO on February 5, 2003.

According to its accession obligations and rights, Armenia assumed both a set of responsibilities and a greater opportunity for integration into the international division of labour. This new global horizon also assumed the need for a new generation of experts.

A new partnership between the Yerevan State University (YSU) and the Centre of Trade Policy and Law (CTPL) of Ottawa, Canada, gave the mandate for addressing the above-mentioned need to the International Economics Department of YSU.

Thanks to this new initiative, the International Economics Department of YSU has successfully implemented CTPL's Certificate Program on Trade Policy and Commercial Diplomacy in Armenia, for Masters students registered at the Economics Faculty during AY 2003/4.

Within the framework of this collaboration, a team of experts from the International Economics Department of YSU has prepared six new modules to complement the curriculum developed by CTPL Ottawa for its certificate program. These new modules, to be used mainly by Masters students enrolled in the certificate program in the future, discuss the impact of WTO accession on Armenia's foreign trade and economic relations.

We are very pleased to present herewith these new six modules in the Armenian language. This publication will serve both as a textbook and a reference source for our Bachelors, Masters and Post Graduate students, as well as for lecturers, scientific researchers and government officials interested in WTO.

**Dr. Toros Torosyan**
**Full Professor, YSU**
**Team Leader and Scientific Editor**

# Ն Ա Խ Ա Բ Ա Ն

1992 թվականից սկսած՝ բանակցություններ էին վարվում Տարիֆների և առևտրի գլխավոր համաձայնագրին (GATT- ՏԱԳՀ), իսկ հետագայում (դրա վերափոխումից հետո) Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (WTO-ԱՀԿ) Հայաստանի Հանրապետության (ՀՀ) անդամակցության վերաբերյալ: 2003թ. փետրվարի 5-ին Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես ճանաչվեց որպես ԱՀԿ լիիրավ անդամ: Բնականաբար այդ կապակցությամբ Հայաստանը ստանձնել է կոնկրետ պարտավորություններ և ունի որոշակի անելիքներ՝ համաշխարհային շուկա մուտք գործելու համար: Շատ կարևոր է նաև համապատասխան կադրերի պատրաստումը:

Երևանի պետական համալսարանի և Կանադայի Առևտրային քաղաքականության և իրավունքի կենտրոնի միջև կնքվել է պայմանագիր, ըստ որի՝ ԵՊՀ Միջազգային տնտեսագիտության ամբիոնը ճանաչվել է որպես Առևտրի համաշխարհային կազմակերպության ուղղությամբ կադրերի պատրաստման օղակ հանրապետությունում: Ամբիոնը Կանադայի Առևտրային քաղաքականության և իրավունքի կենտրոնի կողմից իրավունք է ստացել սերտիֆիկատներ շնորհող դասընթացներ կազմակերպել նաև ԵՊՀ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտացմամբ մագիստրանտների համար:

Որպես այդ դասընթացների ծրագրի լրացում՝ Կանադայի Առևտրային քաղաքականության և իրավունքի կենտրոնի պատվերով ամբիոնը մշակել է 6 նոր դասընթացներ, որոնք վերաբերում են Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության ազդեցության հիմնախնդիրներին:

Սույն ուսումնագիտական ձեռնարկը ներառում է նշված 6 նոր դասընթացները և նախատեսված է ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, դասախոսների, գիտաշխատողների և արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող հանրապետության բոլոր օղակների համար:

**Աշխատանքների ղեկավար և գիտական խմբագիր՝**
**տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր**
**Թորոս Թորոսյան**

# ԲԱԺԻՆ 1

## ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) Հայաստանի Հանրապետության (ՀՀ) անդամակցության գործընթացը տարիների բանակցություններ պահանջեց: Բազմակողմ բանակցություններին զուգահեռ, 1996թ. Հայաստանը նաև երկկողմ բանակցություններ վարեց ԱՀԿ անդամների հետ, որն ընթացավ 11 փուլով: Արդյունքում, 2003թ. փետրվարի 5-ին Հայաստանը դարձավ ԱՀԿ լիիրավ անդամ:

ԱՀԿ-ին ՀՀ անդամակցության գործընթացի ժամանակացույցը հակիրճ ներկայացված է աղյուսակ 1.1-ում:

*Աղյուսակ 1.1*

| |
|---|
| 1992 թ. - Հայաստանը դիմում ներկայացրեց՝ ՄԱԳՀ դիտորդի կարգավիճակ ստանալու համար: |
| 1993 թ. - ՀՀ դիմում ներկայացրեց ՄԱԳՀ (GATT) միանալու համար: |
| 1993 թ. դեկտեմբերի 17 - Հայաստանի դիմումը քննության առնելու նպատակով ստեղծվեց Աշխատանքային խումբ՝ Ավստրալիայի դեսպան Դոն Քենյոնի նախագահությամբ: ՄԱԳՀ-ին Հայաստանի անդամակցության հարցի ուսումնասիրության աշխատանքներն սկսվեցին 1994թ. աշնանը: |
| 1995 թ. - ՀՀ հարցերով ՄԱԳՀ Աշխատանքային խումբը վերանվանվեց ԱՀԿ-ի Աշխատանքային խմբի: |
| 1995 թ. ապրիլ – ՀՀ արտաքին առևտրային քաղաքականության վերաբերյալ հուշագիր է ներկայացվել ԱՀԿ Քարտուղարություն: |
| 1995 թ. հուլիս - ԱՀԿ անդամ երկրներից ստացվեց ավելի քան 300 հարց՝ ներկայացված Հուշագրի վերաբերյալ: |
| 1995 թ. սեպտեմբեր – 1995թ. հուլիս ամսին ԱՀԿ անդամ երկրներից ստացված հարցերին տրվել են գրավոր պատասխաններ: |

| |
|---|
| 1996 թ. հունվարի 24 - ԱՀԿ-ին ՀՀ անդամակցության հարցերով Աշխատանքային խմբի առաջին հանդիպումը: |
| 1996 թ. փետրվար - Առաջին հանդիպումից հետո ԱՀԿ անդամ երկրները ներկայացրին ևս 130 հարց: |
| 1996 թ. մարտ - Հայաստանը բազմակողմ բանակցություններին զուգահեռ, սկսեց երկկողմ բանակցությունները ԱՀԿ անդամ երկրների հետ: |
| 1996 թ. ապրիլ - 130 հարցերի պատասխանները ներկայացվեցին ԱՀԿ Քարտուղարությանը:<br><br>Կայացավ ԱՀԿ-ին ՀՀ անդամակցության հարցերով Աշխատանքային խմբի երկրորդ հանդիպումը, որից հետո երկրները ներկայացրին ևս 150 հարց: |
| 1997 թ. մարտ - Երկրորդ հանդիպումից հետո ԱՀԿ անդամ երկրների 150 հարցերի պատասխանները ներկայացվեցին ԱՀԿ Քարտուղարությանը: |
| 1997 թ. մարտ – Պատրաստվեց ԱՀԿ-ին ՀՀ անդամակցության հարցերով Աշխատանքային խմբի Զեկուցագրի առաջին նախագիծը, որը ներկայացնում էր բազմակողմ և պարտադիր պարտավորությունների վերաբերյալ բանակցությունների արդյունքները, ինչպես նաև մինչ այդ կատարված աշխատանքները: |
| 1997 թ. մայիս - Կայացավ ԱՀԿ-ին ՀՀ անդամակցության հարցերով Աշխատանքային խմբի երրորդ հանդիպումը, որտեղ քննարկվեց Զեկուցագրի նախագիծը: |
| Սկսած 1997թ. վերջից՝ ՀՀ կառավարության կառուցվածքում և պաշտոնյաների տեղի ունեցող հաճախակի փոփոխությունները խոչընդոտում էին ԱՀԿ-ին անդամակցության գործընթացը, որն էլ ՀՀ անդամակցության հետաձգման պատճառ հանդիսացավ: |
| 2002 թ. դեկտեմբերի 10 - ԱՀԿ Գլխավոր խորհուրդն ընդունեց Անդամակցության վերաբերյալ արձանագրություն: |
| 2002 թ. դեկտեմբերի 26 – ՀՀ Ազգային Ժողովը վավերացրեց ԱՀԿ ստեղծման Մարաքեշի համաձայնագրին ՀՀ անդամակցության վերաբերյալ Արձանագրությունը: |
| 2003 թ. հունվարի 6 - Արձանագրությունը փոխանցվեց ԱՀԿ Գլխավոր տնօրենին: |
| 2003 թ. փետրվարի 5 – ՀՀ-ն դարձավ ԱՀԿ լիիրավ անդամ: |

## 1.1. ԱՀԿ հիմնական պահանջներն անդամակցող երկրների արտաքին առևտրային քաղաքականության վերաբերյալ

Առևտրի համաշխարհային կազմակերպությունը հիմնադրվել է 1995թ. հունվարի 1-ին՝ Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրի (ՄԱԳՀ) հիման վրա: ԱՀԿ հիմնական նպատակներն են.

- աջակցել ազատ առևտրին,
- հանդես գալ որպես խորհրդատու՝ առևտրային բանակցությունների սահուն անցկացման համար,
- ապահովել բանավեճերի լուծումը:[1]

ԱՀԿ համաձայնագրերը կարգավորում են առևտրային հարաբերություններն անդամ երկրների միջև՝ հետևյալ հիմնական փաստաթղթերի միջոցով.

- Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագիր,
- Առևտրի և ծառայությունների գլխավոր համաձայնագիր,
- Մտավոր սեփականության իրավունքի առևտրային հարցերին առնչվող համաձայնագիր:

Կան նաև լրացուցիչ համաձայնագրեր և հավելվածներ, որտեղ սահմանվում են որոշակի ոլորտներին կամ խնդիրներին առնչվող պահանջներ: Դրանք հիմնականում սահմանում են տնտեսական ազատականացման սկզբունքները և թույլատրելի բացառությունները: Ավելի որոշակի՝ դրանք վերաբերում են.

**Ապրանքների կտրվածքով՝**

- գյուղատնտեսությանը,
- գյուղատնտեսական արտադրանքին ներկայացվող սանիտարական պահանջներին,
- գործվածքների և հագուստի ներմուծման սահմանափակումներին,
- ապրանքների սերտիֆիկացման պահանջներին,
- ներդրումային միջոցառումներին,
- մաքսային արժեքի որոշման մեթոդներին,
- նախառաքումային ստուգումներին,
- ծագման կանոններին,

[1] *Մանրամասները տե՛ս www.wto.org:*

- ներմուծման թույլատրագրերին,
- լրավճարման և դրանց հակազդման միջոցներին,
- անվտանգության կանոններին.

**Ծառայությունների կտրվածքով՝**

- ֆիզիկական անձանց շարժին,
- օդային տրանսպորտին,
- ֆինանսական ծառայություններին,
- ապրանքների տեղափոխմանը,
- հեռահաղորդակցությանը:

**Մտավոր սեփականության ոլորտում՝**

- հեղինակային իրավունքներին,
- ապրանքանիշերին,
- ապրանքների հատկանշման համար օգտագործվող աշխարհագրական անվանումներին,
- ինտեգրալ սխեմաների նախագծերի և հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությանը:

Այսպիսով, ԱՀԿ-ին նոր անդամակցող և անդամ երկրից պահանջվում է, որ առևտրային համակարգը լինի.

- ոչ խտրական,
- առավել ազատական,
- կանխատեսելի,
- առավել մրցակցային,
- ավելի բարենպաստ՝ չզարգացած և զարգացող երկրների համար:

Սակայն ԱՀԿ նման պահանջները կարող են չհամապատասխանել անդամակցող երկրի տվյալ ժամանակահատվածի տնտեսական և քաղաքական պայմաններին: Այս դեպքում երկրին թույլ է տրվում բանակցությունների օգնությամբ իրենց համար ապահովել առավել բարենպաստ պայմաններ: ԱՀԿ պահանջների և այլ երկրներին տրվող առավելությունների լավ իմացությունը կարող է նպաստել ԱՀԿ բանակցությունների ժամանակ առավել բարենպաստ պայմաններ ձեռք բերելուն:

Սակայն վերոհիշյալ շարադրանքից կարող է թվալ, թե ԱՀԿ-ին անդամակցող երկրներին ներկայացվում են միայն պահանջներ: Այդ դեպքում ինչո՞ւ են երկրները ձգտում անդամակցել այս կա-

ռույցին: Քննարկենք նշված հարցերը՝ շեշտադրելով այն առավելությունները, որոնք հատկապես արժեքավորվում են ՀՀ տնտեսության համար:

ԱՀԿ-ին անդամակցությունը հնարավորություն է տալիս.

- Խաղաղություն հաստատել: Այն հատկապես կարևորվում է ՀՀ համար՝ տնտեսական շրջափակման պայմաններում[2]:
- Վեճերը կարգավորել կառուցողական սկզբունքներով[3]:
- Կանոնների առկայությունը նպաստում է ձեռներեցության զարգացմանը:
- Ազատ առևտուրը կրճատում է ծախսերը:
- Առաջարկում է ապրանքների և որակների ավելի լայն ընտրություն[4]:
- Առևտրի զարգացումը հանգեցնում է եկամուտների աճի[5]:
- Կառավարությունը պաշտպանված է լոբբինգից:
- Համակարգն ապահովում է ավելի լավ կառավարում[6]:

Ինչպիսի՞ն էին ՀՀ արտաքին առևտրային քաղաքականության հիմնական սկզբունքները մինչև 2002թ. և 2002թ.-ից հետո, երբ սկսեց գործել նոր Մաքսային օրենսգիրքը, որը համապատասխանեցված է ԱՀԿ պահանջներին, և փոփոխություններ են իրականացվել ՀՀ արտաքին առևտրային քաղաքականության մեջ՝ ելնելով ԱՀԿ պահանջներից:

---

*[2] ՀՀ կառավարությունը հնարավորություն ստացավ մեղադրել Թուրքիային ԱՀԿ հիմնական սկզբունքները չապահովելու համար: Սակայն Թուրքիան ավելի պրոֆեսիոնալ գտնվեց և ՀՀ նկատմամբ կարողացավ կիրառել ԱՀԿ համաձայնագրի XII հոդվածը, համաձայն որի՝ Թուրքիան հրաժարվում է կիրառել ԱՀԿ պահանջները Հայաստանի նկատմամբ:*

*[3] Սա նույնպես հնարավորություն է տալիս Հայաստան - Թուրքիա քաղաքական հակասության մեջ առանձնացնել տնտեսական հակասությունը և լուծել տնտեսական շրջափակման խնդիրը:*

*[4] Ապրանքների ընտրության լայն հնարավորությունները ստիպում են ՀՀ արտադրողներին ավելի մեծ ուշադրություն հատկացնել ապրանքի որակի և ստանդարտավորման վրա, այդպիսով՝ բարձրացնել տեղական ապրանքների մրցունակությունը և անուղղակիորեն խթանել ՀՀ ապրանքների արտահանումը:*

*[5] ՀՀ ՀՆԱ մեջ առևտուրը կազմում է մոտ 15 տոկոս՝ բնակչության մի մասի համար հանդիսանալով եկամտի աղբյուր:*

*[6] Ստեղծված ազատ առևտրային ռեժիմն ապահովում է առավել եկամուտներ և ուղղակիորեն ստիպում կառավարություններին հանդիսանալ տնտեսության զարգացումը խթանող և ոչ թե արգելակող լծակ:*

## 1.2. ՀՀ արտաքին առևտրային քաղաքականության հիմնական մոտեցումները

Անկախացումից հետո Հայաստանի ազատականացված առևտրային քաղաքականության ուղին բավական տեղին էր, քանի որ նախկին խորհրդային միության տնտեսական կապերը փլուզվել էին, և հայկական ընկերություններին անհրաժեշտ էր ազատ մուտք այլ (այդ թվում՝ նոր) երկրների շուկա: Սակայն լինելով «նորեկ» համաշխարհային շուկայում՝ Հայաստանը չկարողացավ միաձուլել ազատ մրցակցության սատարման և ազատ առևտրի դրական կողմերը՝ առավել վատացնելով հայկական արտադրողների վիճակը:

ՀՀ-ում հանվեց արտաքին առևտրով զբաղվելու պետության մենաշնորհը և մտցվեց արտաքին առևտրի մեջ ընդգրկված ձեռնարկությունների ու մասնավոր ձեռներեցների պարտադիր գրանցումը Ձեռնարկությունների պետական ռեգիստրում: 1993թ. օգոստոսին Ազգային ժողովի կողմից ընդունված Մաքսադրույքների մասին օրենքը հանդիսացավ ՀՀ մաքսային հարաբերությունները կարգավորող իրավական մի փաստաթուղթ, իսկ նույն թվականի դեկտեմբերին, 1994 թ. մայիսին և 1995 թ. հունվարին ՀՀ կառավարության, համապատասխանաբար՝ 615, 224 և 39 որոշումներով հաստատվեցին նոր մաքսային դրույքները: Ընդ որում, 1995թ. ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվեց, որ ՀՀ մաքսադրույքները կարող են փոփոխվել միայն ՀՀ Ազգային ժողովի կողմից:

1993 թվականից Հայաստանի մաքսային ցանկում ընդգրկված էր միայն 132 անվանում ապրանք, իսկ ապրանքները ներկայացված էին հիմնականում երկնիշ մակարդակով: Ներմուծվող ապրանքների նկատմամբ գործում էին մաքսի հետևյալ դրույքաչափերը՝ 0, 5, 10, 30 և 50 տոկոս: Մաքսի 30 և 50 տոկոս դրույքաչափի ենթակա էին միայն մի քանի անվանում ապրանքներ, իսկ մաքսերի կշռված միջին մակարդակը ցածր էր 5 տոկոսից: Կառավարության ազատական քաղաքականության արդյունքում 1997թ. մաքսի հինգ դրուքաչափի համակարգին փոխարինեց մաքսի երկու դրույքաչափը՝ 0 և 10 տոկոս, իսկ մաքսային ցանկի ապրանքային անվանումների թիվը հասավ մոտ 300-ի՝ չորս և ավելի նիշանոց մակարդակներով: Ընդ որում՝ 0%-ը կիրառվում էր հիմնականում կիսաֆաբրիկատների և ռեսուրսների ներմուծման վրա, իսկ կապիտալ

ներդրումներին ուղղված ապրանքների ներմուծումը ազատված էր մաքսատուրքերից: Սակայն վերջինս չուղղորդվեց տնտեսական գործունեության կոնկրետ ոլորտները խթանող այլ լծակներով, որոնք կխրախուսեին օտարերկրյա ներդրումներն այդ ոլորտներ, ինչպես նաև կնպաստեին տնտեսական աճին:

Կարող ենք փաստել, որ մինչև 2001 թ. ՀՀ արտաքին առևտրային քաղաքականությունն առավել հովանավորչական էր տեղական արտադրողների համար: Այսպես, 2000թ. տեղական արտադրության և ներմուծվող ծխախոտի համար կիրառվում էին տարբեր հաստատագրված վճարներ: Բնական է, որ տեղական արտադրողի համար այն ավելի ցածր էր: Օրինակ՝ 1000 միավոր ներմուծվող սիգարների դիմաց կիրառվում էր 3000 ԱՄՆ դոլար դրույքաչափ, իսկ տեղական արտադրության ապրանքի վրա՝ 2200: Մինչ 2002թ. կիրառվող ակցիզային հարկերը մի փոքր ավելի ցածր էին: Որպեսզի ալկոհոլային խմիչքների ակցիզային հարկը նույնը լիներ բոլորի համար, ԱՀԿ-ն պահանջեց փոփոխություններ, համաձայն որի՝ հարկը սկսվեց կիրառվել 100% սպիրտայնության համար:

Սակայն այդ հովանավորչական քաղաքականությունը չուներ նպատակասլաց երկարաժամկետ ուղղվածություն, այլ ավելի շատ բնորոշվում էր տարերայնությամբ և խթանում էր այն ապրանքների տեղական արտադրությունը, որոնց բնորոշ էր աշխատատարությունը: Այնինչ, այդ քաղաքականությունը կարող էր խթանել «մեծ արժեք - փոքր ծավալ» ապրանքների տեղական արտադրությունը և արտահանումը: Ավելին, դա կարելի էր միաձուլել մի շարք այլ տնտեսական լծակներով: Այսպես, դեռ չհանդիսանալով ԱՀԿ անդամ, ՀՀ-ն կարող էր ներդրողների (օտարերկրյա և տեղական) համար ստեղծել առավելագույն բարենպաստ պայմաններ՝ ապահովելով «արտադրական» ֆինանսական կապիտալի հոսքը երկիր, որն իր հերթին նոր շուկաներ մուտք գործելու հնարավորություն կընձեռեր: Այդ պարագայում մեր երկրի անդամակցությունն ԱՀԿ-ին շատ ավելի դրական ազդեցություն կունենար տնտեսության վրա:

Բացի այդ, բավական ազատականացված քաղաքականություն իրականացվեց գյուղատնտեսական ապրանքների համար, սակայն ագրոարդյունաբերության մեջ սարքավորումների, ենթակառուցվածքների սեփականաշնորհման թերացումները այս ոլորտի ողջ ներուժը օգտագործելու հնարավորություն չընձեռեցին: Այնուամենայնիվ, այս ոլորտը շարունակում է կազմել ՀՆԱ-ի մոտ

25%-ը[7]: Գյուղատնտեսության ոլորտում առկա հարկային տնտեսական խթանները վերջին 7 տարիների ընթացքում հանգեցրել էին ներմուծման փոխարինմանը տեղական արտադրությամբ: Սակայն ԱՀԿ շրջանակներում ընդունված մի շարք պարտավորություններ, հատկապես 2009 թվականից ԱԱՀ կիրառելու պարտավորությունը, գյուղատնտեսական ապրանքների ներմուծումը կդարձնի ավելի էժան, քան տեղական արտադրության կազմակերպումը, այդպիսով վաթարացնելով առևտրային հաշվեկշիռը: Ցանկալի կլիներ, որ մինչև 2009 թ. ՀՀ կառավարությունը մշակեր մի շարք միջոցառումներ, որոնք նախընտրելի պայմաններ կստեղծեին հայ ֆերմերների համար՝ միաժամանակ չհակասելով ԱՀԿ պահանջներին: Հակառակ դեպքում, կառաջանան լուրջ հիմնախնդիրներ, որոնք կխոչընդոտեն այս ոլորտի զարգացումը:

1993 թվականից սկսած՝ Հայաստանը ներմուծվող ապրանքների դիմաց ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) և ակցիզային հարկի գանձումն իրականացնում էր ըստ ապրանքի ծագման երկրի սկզբունքի. ԱՊՀ երկրներից կատարվող ներմուծումներն ազատված էին նշված հարկերից, իսկ այլ երկրների ծագում ունեցող ապրանքների ներմուծումը հարկվում էր: ԱՀԿ պահանջների կատարման նպատակով Հայաստանը 1997թ. վերացրեց ըստ ծագման սկզբունքի կիրառումն ու անցավ ըստ նշանակման (առաքման) վայրի սկզբունքին՝ այդպիսով երաշխավորելով ԱԱԲ[8] սկզբունքի պահպանումը: Սա այնքան էլ դրական քայլ չէր, քանի որ ԱԱՀ «երկկողմ» կարգով չէր կիրառվում ԱՊՀ երկրների հետ: Դա հզոր լծակ էր՝ խթանելու համար ՀՀ արտադրանքի արտահանումը ԱՊՀ երկրների սպառողական շուկա: Միաժամանակ, դա ազդեցիկ միջոց էր օտարերկրյա ներդրումների ներհոսքը Հայաստան գրավիչ դարձնելու համար, քանի որ այսօր արտադրողների խնդիրը ոչ թե «ինչ արտադրելն է», այլ՝ «որտեղ սպառելը», իսկ հանրապետության էժան աշխատուժի առկայությունը և ազատ մուտքը ԱՊՀ երկրների շուկա կարող էր շահադրդող լինել օտարերկրյա ընկերությունների համար:

---

*[7] Աշխատանքում օգտագործված վիճակագրական բոլոր տվյալների աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է:*

*[8] ԱԱԲ - ազգի առավել բարենպաստ ռեժիմ: ԱՀԿ հիմնական սկզբունքներից մեկն է, որը ենթադրում է, որ եթե որևէ առևտրային գործընկերոջ տրամադրվում են առավել բարենպաստ պայմաններ, ապա դա ինքնըստինքյան տարածվում է նաև ԱՀԿ բոլոր անդամ երկրների վրա:*

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի համար բավական բարենպաստ պայմաններ ստեղծվեցին: Սակայն այս տնտեսական գործունեության ոլորտի զարգացումը խոչընդոտեց ՀՀ կառավարության ոչ ճիշտ քաղաքականությունը հեռահաղորդակցման սեփականաշնորհման հարցում, որը ևս մեկ փաստ է, որ ՀՀ-ում բացակայում է երկարաժամկետ նպատակային տնտեսական ռազմավարությունը (բացառությամբ հանքահումքային և թանկարժեք քարերի ու զարդերի մշակման ոլորտներից, որոնք տնտեսական զարգացման հեռանկարային ոլորտներ չեն կարող դիտարկվել):

Հայաստանը պետք է մինչև 2004 թ. դեկտեմբերի 31-ը իր համօրինակներն ու տեխնիկական կանոնակարգերը համապատասխանեցնի Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագրի դրույթներին: Սա դրական ազդեցություն կունենա ՀՀ արտահանման վրա այն առումով, որ համօրինակներն ու տեխնիկական կանոնակարգերը գրեթե նույնը կլինեն ԱՀԿ բոլոր անդամ երկրների համար, հետևաբար՝ ՀՀ արտահանողների մուտքը այլ երկրներ շատ ավելի հեշտ կդառնա:

### 1.3. ՀՀ արտաքին առևտրային քաղաքականության հիմնական սկզբունքները

Անկախացումից հետո Հայաստանը ընտրեց ազատ առևտրային քաղաքականության ուղին: Ավելի քան 13 տարիների ընթացքում ՀՀ կառավարությունը ընդունեց մի շարք օրենքներ, որոշումներ և իրավական ակտեր, ինչպես նաև իրականացրեց դրանց բարեփոխումները, որոնց հիմնական նպատակը ԱՀԿ պահանջներին և սկզբունքներին համապատասխանեցնելն էր: Որպես հետևանք, ՀՀ ներկա արտաքին առևտրային քաղաքականությունը դիտվում է առավել ազատականացված՝ ԱՊՀ մյուս անդամ երկրների համեմատ: «Heritage foundation»-ի և «Wall Street» ամսագրի գնահատումներով՝ ՀՀ-ն տնտեսական ազատականացման առումով 2003թ. զբաղեցնում է 44-րդ տեղը Ֆրանսիայի հետ միասին. հաշվարկը կատարվել է ըստ 50 տարբեր ցուցանիշների (տե՛ս աղյուսակ 1.2[9]):

[9] *Մանրամասները տե՛ս www.heritage.org/index:*

*Աղյուսակ 1.2*

**Տնտեսական ազատականացման ինդեքսը ըստ երկրների**

*(համաձայն Heritage Foundation-ի գնահատումների)*

| Երկիր | Տնտեսական ազատականացման դիրքը | | | |
|---|---|---|---|---|
| | 2000 | 2001 | 2002 | 2003 |
| Հայաստան | 84 | 68 | 45 | 44 |
| Ադրբեջան | 147 | 139 | 118 | 104 |
| Վրաստան | 120 | 114 | 108 | 113 |
| Ֆրանսիա | 37 | 39 | 45 | 44 |
| Գերմանիա | 22 | 20 | 20 | 19 |
| Ռուսաստան | 122 | 127 | 131 | 135 |
| Ուկրաինա | 116 | 133 | 137 | 131 |
| ԱՄՆ | 4 | 5 | 4 | 6 |
| Թուրքիա | 49 | 63 | 105 | 119 |

Այսօր ապրանքների և ծառայությունների միջազգային առևտրի վրա ազդող քաղաքականության համար (համաձայն ՀՀ կառավարության վերջին փոփոխությունների) պատասխանատու է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը, իսկ մաքսային որոշումները ընդունվում են այդ ու ՀՀ ֆինանսաների և էկոնոմիկայի նախարարությունների փոխհամաձայնությամբ: ՀՀ արտաքին առևտրային քաղաքականությունը հիմնականում կարգավորվում է Մաքսային օրենսդրությամբ, որը ՀՀ Ազգային ժողովն ընդունեց 2001թ. հուլիսին: Այն ուժի մեջ մտավ 2002թ. հունվարի մեկից և գրեթե ամբողջովին համապատասխանում է ԱՀԿ հիմնական պահանջներին ու սկզբունքներին, որոնց հիմքը կազմում է ՄԱԳՀ-ի II հոդվածը[10]: ՀՀ մաքսային քաղաքականության կարևորագույն սկզբունքներն են.

- ՀՀ արտահանումն ազատ է որևէ առևտրային սահմանափակումից,
- ներմուծման մաքսը կազմում է կամ 10 կամ զրոյական տոկոս, որտեղ 10 տոկոսը հիմնականում կիրառվում է սպառման ապրանքների նկատմամբ,

[10] *ԱԱԲ ռեժիմ:*

- մաքսերը կիրառվում են ապրանքի համապատասխան արժեքի վրա և դրվում են CIF[11] արժեքի վրա,
- ապրանքների դասակարգման համար ՀՀ-ն օգտագործում է միջազգային շուկայում ընդունված «Ապրանքների դասակարգման ներդաշնակեցված համակարգը» կամ ինչպես ՀՀ մաքսային օրենսգրքում է նշված. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը» (ԱՏԳԱԱ),

Մաքսադրույք չի կիրառվում հետևյալ ապրանքների համար.

- այն ապրանքների ներմուծման համար, որոնք համալրում են կապիտալ ներդրումները և սահմանված են ՀՀ կառավարության կողմից,
- տրանզիտ ապրանքներ,
- արժույթ և արժեթղթեր,
- պետությունների միջև բեռների տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներ,
- մշակման և վերամշակման նպատակով ՀՀ ժամանակավոր ներմուծված կամ արտահանված ապրանքներ:
- ՀՀ-ում բացակայում է արտահանման կամ ներմուծման որևէ քանակական սահմանափակում,
- ՀՀ-ում օգտագործվում է մետրային չափը,
- ՀՀ մաքսային փաստաթղթերի լրացման լեզուն հայերենն է կամ միջազգայնորեն ընդունված մեկ այլ օտար լեզու, որը սահմանվել է ՀՀ մաքսային մարմինների կողմից,
- ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականությունը, համաձայն ԱՀԿ-ի պահանջների, ոչ խտրական է, իսկ մինչև 2004թ. ավելի բարենպաստ էր օտարերկրյա, քան թե տեղական ներդրողների համար,
- ներմուծողները/արտահանողները բողոքների դեպքում կարող են դիմել մաքսային վերադաս մարմիններին կամ դատարան,
- վիճահարույց հարցերի դեպքում, համաձայն ՀՀ օրենսդրության, գերակա են համարվում միջազգային պայմանագրերը և համաձայնագրերը,
- մաքսային բոլոր վճարումները պետք է իրականացվեն ՀՀ արժույթով[12]:

---

*[11] Տե՛ս Թորոսյան Թ. Միջազգային տնտեսագիտություն, Ե., ԱՌՏ, 2003, էջ 80:*
*[12] Մանրամասները տե՛ս www.customs.am:*

## 1.4. ՀՀ մաքսային քաղաքականության համապատասխանելիությունը ԱՀԿ պահանջներին

Նկատենք, որ ՀՀ մաքսային օրենսգիրքը կարևորագույն սկզբունքների առումով բավական ազատական է և նպատակ է հետապնդում առավելագույնս խթանել համաշխարհային տնտեսությանը ՀՀ ինտեգրման գործընթացը: Սակայն ՀՀ մաքսային քաղաքականության մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար վերլուծենք ՀՀ մաքսային օրենսգիրքը:

Այսպես, համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի, անձինք հավասար հիմունքներով իրավունք ունեն ներմուծել և արտահանել ապրանքներ ու տրանսպորտային միջոցներ: Ընդ որում, խտրականություն չի դրվում՝ անձը ՀՀ քաղաքացի է, թե՝ ոչ: Բնական է, որ սա նպաստում է ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության ավելացմանը և համապատասխան է ՄԱԳՀ-ի հիմնական պահանջներին:

ՀՀ մաքսային օրենսգրքում սահմանված մաքսային ռեժիմներն են. ներմուծում ազատ շրջանառության համար, վերաներմուծում, տարանցիկ փոխադրում, ներմուծում մաքսային պահեստ, ներմուծում անմաքս առևտրի խանութ, ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար, ժամանակավոր ներմուծում, ժամանակավոր արտահանում, ներմուծում ազատ մաքսային պահեստ, ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար, արտահանում՝ ազատ շրջանառության համար, վերաարտահանում, սեփականության իրավունքից հրաժարում՝ հօգուտ պետության և ոչնչացում[13]: Դրանք սահմանվել են՝ հիմք ընդունելով ՄԱԳՀ-ում սահմանված ռեժիմները: Բնականաբար, դրանք օգտագործվում են ԱՀԿ անդամ բոլոր երկրների կողմից:

ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է արժեքային (ադվալորային) սկզբունքով: ՀՀ մաքսային արժեքը որոշվում է գործարքի, նույն ապրանքի[14], համանման ապրանքների[15] ներքին շուկայում ապրանքի միավորի

---

*[13] Մանրամասների համար տե՛ս ՀՀ մաքսային օրենսգիրք:*

*[14] Նույն ապրանքներ են այն ապրանքները, որոնք նույնական են բոլոր առումներով:*

*[15] Համանման են միևնույն երկրից ծագած այն ապրանքները, որոնք, նույնական չլինելով, ունեն նման հատկանիշներ և բաղադրություններ, ինչը հնարավորություն է տալիս դրանք կիրառել նույն նշանակությամբ:*

իրացման գների, ըստ հաշվարկային արժեքի կամ պահուստային մեթոդներով, որոնք կիրառվում են նշված հերթականությամբ: Մաքսային արժեքի որոշման նման մեթոդների կիրառումը պահանջվում է ԱՀԿ կողմից, և դա հնարավորություն է տալիս այդ հաշվարկը իրականացնել ԱՀԿ անդամ այլ երկրների նման: Սա նույնպես հեշտացնում է ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը, քանի որ ստեղծում է ոչ խտրական և լայն տարածում ունեցող՝ արժեքի որոշման սկզբունք: Սակայն այն ամբողջովին չի համապատասխանում (հատկապես՝ գործընթացը) ՄԱԳՀ-ի 1994 թ. VII հոդվածի պահանջներին և, բնականաբար, ՀՀ-ն պարտավորվել է այն ամբողջովին համապատասխանեցնել առաջիկա մի քանի տարիների ընթացքում:

Ընդ որում, մաքսային արժեքը որոշելու համար արտարժույթի փոխանակումը իրականացվում է տվյալ ապրանքների հայտարարագրման օրը ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ) կողմից սահմանված փոխարժեքով: Այն կազմում է նախորդ օրվա շուկայական փոխարժեքի միջինը, որը վկայում է ազատ շուկայական տնտեսության սկզբունքների մասին:

ՀՀ մաքսային քաղաքականությունը բավական ազատական է նաև մաքսային վճարների տեսանկյունից: ՀՀ-ում գործում են հետևյալ երեք հիմնական մաքսային վճարները՝ մաքսատուրքեր, մաքսավճարներ և մաքսային մարմինների կողմից գանձվող՝ օրենքով սահմանված տուրքեր ու այլ պարտադիր վճարներ: Դրանք սահմանվել են՝ հիմք ընդունելով ՄԱԳՀ-ի հիմնական հոդվածները:

Չնայած ըստ ՀՀ մաքսային օրենսգրքի սահմանված են արտահանման, ներմուծման և սեզոնային մաքսատուրքեր, այնուամենայնիվ, հիմնականում կիրառվում են արտահանման և ներմուծման մաքսատուրքերը: Ընդ որում, արտահանման մաքսատուրքերի մակարդակը կազմում է 0 տոկոս, իսկ ներմուծմանը՝ 0 կամ 10 տոկոս: Համաձայն ՀՀ պարտավորության՝ ապրանքների համար կիրառվող մաքսատուրքերի միջինը չպետք է գերազանցի 5%-ը:

ՀՀ ներմուծվող ապրանքներից 10 տոկոս դրույքաչափով հարկվում է մոտ 99 ապրանքատեսակ: Ներմուծվող ագրոարդյունաբերական ապրանքներից 10 տոկոս դրույքաչափով հիմնականում հարկվում են՝ «Միս և մսի ենթամթերք», «Ձկնեղեն, խեցգետնանմաններ, կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ»,

«Կաթ և կաթնեղեն, թռչնի ձու», «Բանջարեղեն, ուտելի արմատապտուղներ և պալարապտուղներ», «Ուտելի պտուղներ, ընկույզ, բոստանային կամ ցիտրուսային մշակաբույսերի կեղևներ և կճեպներ», «Սուրճ, թեյ, մատե (պարագվայական թեյ) և համեմունքներ», «Ալրաղացային արդյունաբերական արտադրանք, ածիկ, օսլա, ինուլին, հացահատիկային սոսնձանյութ», «Արևածաղկի սերմ», «Բուսական հյութեր», «Կենդանական կամ բուսական ճարպեր և յուղեր», «Մսի, ձկան, խեցգետնանմաններից, կակղամորթերից և ջրային այլ անողնաշարավորներից արտադրանք», «Շաքար, շաքարից պատրաստված մթերք», «Կակաո, կակաոյից պատրաստված մթերք», «Մակարոնեղեն», «Հացահատիկային մշակաբույսերից պատրաստված կերակրատեսակներ», «Քաղցր թխվածքներ, վաֆլի», «Բանջարեղենի վերամշակումից ստացվող մթերք», «Ալկոհոլային, ոչ ալկոհոլային խմիչքներ», «Սիգարներ, ծայրը կտրած սիգարներ, սիգարետներ» և «Կերակրի աղ» ապրանքատեսակները: Նկատենք, որ 10 տոկոս մաքսը հիմնականում կիրառվում է այն գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ, որոնց արտադրությունը/մշակումը հնարավոր է կազմակերպել ՀՀ-ում, կամ որոնք առաջին անհրաժեշտության ապրանքներ չեն:

Օրինակ՝ հացահատիկի ներմուծման մաքսը կազմում է 0%, այնինչ՝ դրանից պատրաստված արտադրանքի ներմուծման համար կիրառվում է 10% մաքս: Դա վերջին 3 տարիների ընթացքում խթանեց հրուշակեղենի, մակարոնեղենի և թխվածքների տեղական արտադրության աճը՝ նպաստելով ներմուծման փոխարինմանը տեղական արտադրությամբ: Ընդհանուր առմամբ, դրանք չեն հակասում ՄԱԳՀ պահանջներին, քանի որ ՀՀ մաքսատուրքերի հավասարակշռված միջինը չի գերազանցում 5 տոկոսը:

Շինարարական քարերի տեղական արտադրության և մշակման խթանմանն է ուղղված նույն ապրանքների ներմուծման մաքսատուրքը. գրեթե բոլոր ներմուծվող ապրանքների համար կազմում է 10%:

Եթե ՀՀ կառավարությունը նպատակ ունի զարգացնել բարձր տեխնոլոգիաների ոլորտը, ապա օրգանական քիմիայի նկատմամբ ոչ հովանավորչական մոտեցում է ցուցաբերվում, այնինչ Հայաստանն ունի բավական ներուժ՝ այս ոլորտների զարգացման համար: 10% մաքսադրույք կիրառվում է միայն պլաստմասսայից իրե-

րի ներմուծման համար, իսկ ճիշտ գնահատման դեպքում կարելի էր 10 տոկոս կիրառել նաև այլ ապրանքների ներմուծման նկատմամբ, որոնց արտադրությունը հնարավոր է կազմակերպել ՀՀ-ում:

Դրական արդյունքի է հանգեցրել հովանավորչական քաղաքականության առկայությունը նաև ռետինի և դողերի ներմուծման ոլորտում, որտեղ նույնպես կիրառվում է 10% մաքս:

Թեթև արդյունաբերության արտադրանքի ներմուծման 10% դրույքաչափ կիրառվում է հիմնականում պատրաստի ապրանքների ներմուծման նկատմամբ (օրինակ՝ կաշվե արտադրանք, մորթե հագուստեղեն, ծղոտից, հյուսելու այլ նյութերից արտադրանք, զուգարանի և համանման թուղթ, արկղեր, տուփեր, պարկեր, պայուսակներ, գործվածք՝ սինթետիկ և արհեստական համանման թելից, երբ քիմիական թելերի ներմուծումը հարկվում է զրոյական դրույքով, գորգեր և հատակի այլ ծածկոցներ, հատուկ կտորներ, խավավոր կտորներ, գոբելեն, ժանյակներ, լինոլեում, տրիկոտաժե և տեքստիլ հագուստ, գլխարկներ, հովանոցներ, ձեռնափայտեր, մտրակներ, բմբուլից իրեր, արհեստական ծաղիկներ): Ընդհանուր առմամբ, ՀՀ վարած մաքսային քաղաքականությունը ոչ մի կետով չի հակասում ԱՀԿ պահանջներին:

Էլեկտրոնային ապրանքների ներմուծման մաքսատուրքերը հիմնականում զրոյական են: Ավելի քան 100 ապրանքատեսակներից ներմուծման 10% մաքս կիրառվում է միայն որոշ ապրանքների նկատմամբ (լուսանկարչական խցիկ, պատճենահանման սարքեր, ժամացույցներ և ժամացույցի մասեր, լվացքի մեքենաներ և սառնարաններ): Այնինչ, պետք է լիակատար ազատություն տրվեր սարքերի մասերի ներմուծմանը: Դա հնարավորություն կտար ՀՀ-ում խթանել էլեկտրոնային սարքերի տեղական կոմպլեկտավորումը, որն անուղղակիորեն կխթաներ նաև արտահանումը: Ավելի որոշակի. էլեկտրոնային սարքերի տեղական կոմպլեկտավորումը հիմք կարող էր դառնալ մի շարք օտարերկրյա ընկերությունների ներգրավման համար: Վերջիններս Հայաստանը կդիտարկեին որպես միջանկյալ երկիր՝ իրենց ապրանքների արտադրությունը և հարևան երկրներ արտահանումը կազմակերպելու համար:

Համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի, մաքսատուրքից ազատվում են տարանցիկ փոխադրում, ժամանակավոր ներմուծում, ժամանակավոր արտահանում, ներմուծում մաքսային պահեստ, ներ-

մուծում ազատ մաքսային պահեստ, ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար, ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար, վերաներմուծում և վերաարտահանում, ներմուծում ազատ առևտրի խանութ ռեժիմներով բաց թողնվող ապրանքները, ինչպես նաև՝ ցուցահանդեսների համար նմուշային քանակությամբ ներմուծումը: Այս ցանկը նույնպես ներառվել է ԱՀԿ պահանջներից ելնելով:

Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ հատկապես աշխատատար պատրաստի ապրանքների ներմուծման նկատմամբ է հիմնականում կիրառվում 10% մաքսադրույքը: Ստացվում է, որ ՀՀ մաքսային քաղաքականությունն ունի միջնաժամկետ ուղղվածություն, որտեղ կարևորվում է աշխատատար ապրանքների արտադրությունը: Զարգացման ներկա փուլում դա դրական ազդեցություն ունի տնտեսության վրա, սակայն երկարաժամկետում կարող է շատ ավելի բացասական հետևանքներ ունենալ:

Ինչ վերաբերում է ֆիզիկական անձանց, ապա նրանք կարող են ներմուծել/արտահանել մինչև 500 ԱՄՆ դոլարին համարժեք և 50 կգ չգերազանցող ապրանք՝ որպես ուղեկցող բեռ:

Համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի, Հայաստանում կիրառվում են նաև մաքսավճարներ, որոնք պետական բյուջե կատարվող պարտադիր վճարներ են և ուղղվում են մաքսային գործի զարգացմանն ու մաքսային մարմինների նյութատեխնիկական և սոցիալական բազայի զարգացմանը: Այսպես, ՀՀ մաքսային սահմանով ապրանքների, տրանսպորտային միջոցների և արժույթի մաքսային ձևակերպումների համար գանձվում է 3500 դրամ մաքսավճար, ապրանքների զննման ու հաշվառման համար, 1 տոննայի դիմաց՝ 1000 դրամ (իսկ յուրաքանչյուր լրացուցիչ 1 տոննայի համար՝ 300 դրամ), խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների դիմաց՝ 500000 դրամ, մաքսային մարմնի կողմից տրամադրվող յուրաքանչյուր փաստաթղթի համար՝ 1000 դրամ, ՀՀ տարածքով ապրանքների մաքսային ուղեկցման յուրաքանչյուր 100 կմ համար՝ 10000 դրամ, ապրանքների պահպանման համար (մեկ տոննայի հաշվով)՝ օրական 1000 դրամ (յուրաքանչյուր լրացուցիչ մեկ տոննայի համար՝ 300 դրամ) և տրանսպորտային միջոցների պահպանման համար (մինչև 10 նստատեղով մարդատար ավտոմեքենաներ)՝ 2000 դրամ, իսկ այլ

տրանսպորտային միջոցների համար՝ 5000 դրամ: Մաքսավճարները փոփոխվում են յուրաքանչյուր տարի՝ հիմք ընդունելով արժույթի տարեկան միջին անվանական փոխարժեքի փոփոխությունները: Մաքսավճարներից ազատվում են մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքները, միջազգային կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները և «ժամանակավոր արտահանում» ռեժիմով՝ մշակութային արժեքները: Նման բացառությունները սահմանում և պահանջում է ԱՀԿ-ն:

ՀՀ հաստատագրված մաքսավճարները չեն հակասում ՄԱԳՀ որևէ հոդվածի, սակայն այս համակարգում առկա են որոշակի թերացումներ, որոնք ՀՀ-ն պարտավորվել է վերացնել առաջիկա մեկ - երկու տարիների ընթացքում:

ՀՀ մաքսային քաղաքականությունն իրականացնող մարմիններից պահանջվում է իրավական ակտերով և օրենքներով սահմանված պարտականությունների հստակ իրականացում, հակառակ դեպքում ներմուծողները/արտահանողները բախվում են վարչական խոչընդոտների և շատ անգամ դադարեցնում իրենց գործունեությունը:

Արտարժույթի արտահանումը և ներմուծումը, ինչպես նաև արժութային ցանկացած իրավական գործարք, ՀՀ-ում իրականացվում է առանց որևէ սահմանափակման: Նման ազատականացված համակարգը գործում է դեռ 1997թ. մայիսի 29-ից, երբ ՀՀ-ն ընդունեց Արժույթի միջազգային հիմնադրամի համաձայնագրի VIII հոդվածով սահմանված պարտավորությունները: Սա նույնպես դրական ազդեցություն ունի ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության վրա, քանի որ ապրանք արտահանողները/ներմուծողները որևէ մտահոգություն չեն ունենում իրենց գործարքների դիմաց ստացվող գումարների առումով:

ՀՀ մաքսային օրենսգրքով կարգավորվում են նաև մաքսային մարմինների կողմից ապրանքների և տրանսպորտային միջոցների պատասխանատու պահպանման, հայտարարագրման, մաքսային հսկողության, արժութային հսկողության, ապրանքների ծագման երկրի, օտարերկրյա որոշ անձանց մաքսային արտոնությունների (հիմնականում՝ դիվանագիտական), մաքսային վիճակագրության և արտաքին տնտեսական գործունեության ապրանքների անվանա-

ցանկի վարման, մաքսանենգության, հետաքննության և մաքսային մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեության հետ կապված հիմնական սկզբունքները:

## 1.5. ՀՀ ոչ մաքսային քաղաքականության համապատասխանելիությունը ԱՀԿ պահանջներին

ՀՀ արտաքին առևտրի կարգավորման համար, բացի մաքսային լծակներից, կիրառվում են նաև ոչ մաքսային լծակներ: Համաձայն ՀՀ կառավարության 1995թ. դեկտեմբերի 29-ի «Ոչ մաքսային միջոցների կարգավորում» թիվ 124 որոշման՝ ներմուծվող և արտահանվող ապրանքները չունեն քանակական սահմանափակում ու որևէ ապրանքի ներմուծում արգելված չէ: Արգելված է միայն այն ապրանքների ներմուծումն ու արտահանումը, որոնք վնասակար են առողջության, հասարակության և շրջակա միջավայրի համար. զենք, զինամթերք, թմրանյութեր և պոռնոգրաֆիա: Դրանց արտահանում-ներմուծումը հիմնականում կատարվում է ՀՀ կառավարության թույլտվությամբ:

Բացի քանակական սահմանափակման լծակներից, ոչ մաքսային լծակ է համարվում նաև արտոնագրումը: Ըստ ԱՀԿ Լիցենզավորման մասին համաձայնագրի՝ ներմուծման և արտահանման արտոնագրման ընթացակարգերը պետք է իրականացվեն առանց խտրականության, քանի որ դա կարող է արհեստական խոչընդոտներ առաջացնել թե՛ արտահանողի և թե՛ ներմուծողի համար: ՀՀ-ում ենթակա արտադրանքների ցանկը նորացվել է Կառավարության 2000թ. սեպտեմբերի 20-ի թիվ 581 որոշմամբ և հիմնականում ընդգրկում է հետևյալ ապրանքները. ձկնեղեն, խեցգետնանմաններ, կակղամորթեր ու ջրային այլ անողնաշարավորներ և դրանցից պատրաստված մթերքներ, ձու, բնական մեղր, վերամշակված բանջարեղեն ու մրգեր, մանկական կերեր, նավթամթերք, դեղեր, միս և մսամթերք, շաքար ու դրանից ապրանքներ, վիտամիններ, զինամթերք, ռազմական տեխնիկա և դրանց արտադրության համար կոպլեկտավորվող իրեր, պայթուցիկ նյութեր, իոնացնող ճառագայթման աղբյուր հանդիսացող և միջուկային նյութեր, բուսաբանական հավաքածուներ և առանձին նմուշներ,

վայրի կենդանիներ և կենդանաբանական հավաքածուներ և այլն: Ցանկը նույնպես համապատասխանեցված է ԱՀԿ պահանջներին, ավելի կոնկրետ՝ ԱՀԿ «Ներմուծման թույլտվություններ» համաձայնագրին:

Բացի այդ, համաձայն Եվրոմիության հետ կնքված երկկողմ պայմանագրի, լիցենզավորման ենթակա է նաև մանածագործվածքների և հագուստեղենի արտահանումը Եվրոմիության երկրներ:

Ներմուծման համար պահանջվում են հետևյալ հիմնական փաստաթղթերը. հաշիվ-ապրանքագիր կամ պայմանագիր, որտեղ նշված են ներմուծվող ապրանքի հատկանիշները, քանակը և արժեքը, ինչպես նաև ներմուծման թույլտվությունը՝ եթե պահանջվում է: Արտահանման համար պահանջվող փաստաթղթերն են. պայմանագիրը, ծագման սերտիֆիկատը[16] և արտահանման թույլտվությունը՝ եթե պահանջվում է (արտահանման թույլատվություն հիմնականում պահանջվում է դեղագործական ապրանքների համար, ինչպես նաև մանածագործվածքների և հագուստեղենի համար, եթե դրանք արտահանվում են Եվրոմիության երկրներ, մշակութային արժեքների ու հազվագյուտ բույսերի և կենդանիների համար):

Իսկ որոշ ապրանքների՝ ձկնեղենի, խեցգետնանմանների, կակղամորթերի և ջրային այլ անողնաշարավորների ու դրանցից պատրաստված մթերքների, մանկական կերերի, խաղալիքների, պլաստմասսայից որոշ ապրանքների, սուրճի, գարեջրի, սիգարետների, շպարման ապրանքների, խմիչքների և սպիրտի, վերամշակված մրգերի ու բանջարեղենի և այլնի ներմուծման համար առկա պետք է լինի նաև արտադրողի անունը, ապրանքի բաղադրությունը, քաշը և օգտագործման վերջին ժամկետը:

ՀՀ կառավարությունը պարտավորվել է չկիրառել ԱՀԿ-ի՝ Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին համաձայնագրի պահանջներին հակասող, ինչպես նաև խրախուսման որևէ միջոց:

Հայաստանի Հանրապետությունը ISO (Միջազգային ստանդարտավորման կազմակերպություն) անդամ է և սկսել է իր ստանդարտավորման համակարգը համապատասխանեցնել այդ կազմա-

---

*[16] ՀՀ մաքսային օրենսգրքում ծագման կանոնները սահմանվել են՝ հիմք ընդունելով ԱՀԿ-ի Ծագման կանոնների մասին համաձայնագիրը:*

կերպության պահանջներին: Այսօր ՀՀ որակի տեսչությունը, որը ստեղծվել է 2002թ. և գործում է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ենթակայությամբ, ընդունել է ISO 9001 և ISO 9002 ստանդարտները: Բացի այդ, ՀՀ-ն ստորագրել է ԱՀԿ-ի Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագիրը: Այս առումով ՀՀ կառավարությունը թեև իրականացրել է մի շարք բարեփոխումներ, սակայն դեռ անելիքներ կան:

Բացի մաքսային և ոչ մաքսային լծակներից, արտահանման և ներմուծման վրա ազդում են նաև ԱԱՀ և ակցիզային հարկը: Ակցիզային հարկը ՀՀ-ում կիրառվում է հիմնականում հետևյալ ապրանքների նկատմամբ. գարեջուր, խաղողի գինիներ, վերմուտ և այլ խմիչքներ՝ բուսական և բուրավետ էքստրակտների հավելումներով, էթիլային սպիրտ, ալկոհոլային խմիչքներ, այդ թվում՝ խաղողի գինու կամ գինենյութերի թորումից ստացվող սպիրտային թրմեր (կոնյակ, արմանյակ և այլն), թութունի փոխարինիչ, նավթ և նավթային ապրանքներ, նավթային ու այլ կարբոհիդրիտային գազեր՝ բացառությամբ բնական գազի: Մինչ 2000 թ. օգոստոսի 1-ը ՀՀ-ում գործում էին ակցիզային հարկի տարբեր դրույքներ տեղական արտադրության և ներմուծվող ապրանքների համար, որից հետո ԱՀԿ պահանջով ընդունվեց «Ակցիզային հարկի մասին» նոր օրենք, որն այդ խտրականությունը վերացրեց:

ՀՀ-ում ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) նոր օրենքը ուժի մեջ է մտել 2001թ. հունիսի 25-ից, համաձայն որի՝ այն կազմում է 20 տոկոս: ԱԱՀ-ն չի տարածվում արտահանվող ապրանքների վրա, սակայն կիրառվում է ներմուծվող և տեղական ապրանքների նկատմամբ: Ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ գանձվում է ՀՀ մաքսային սահմանի վրա՝ անկախ երկրի ծագումից, բացառությամբ այն ապրանքների, որոնց մաքսատուրքը կազմում է 0% և չեն հարկվում ակցիզային հարկով, որը գանձվում է հարկային մարմինների կողմից՝ այդ ապրանքների վաճառքի կամ սպառման ժամանակ: Սակայն ոչ կատարյալ իրավական ակտերի առկայությունը ստեղծում է մի շարք դժվարություններ: Ըստ գործող կարգի, արտահանման դեպքում արտադրողները չպետք է վճարեն ԱԱՀ, սակայն իրականում նրանք վճարում են այն պայմանով, որ դա կվերադարձվի ՀՀ մաքսային սահմանն անցնելիս, ինչը գործնականում գրեթե չի իրականացվում, միաժամանակ, չի թույլատրվում

դա վերահաշվարել որպես այլ հարկի վճարում: Այսպիսով, մեր արտահանողները հիմնականում ենթարկվում են կրկնակի հարկման: Նշենք նաև, որ ԱՀԿ կիրառման առումով, ՀՀ-ն ընդունել է ԱՀԿ-ի ԱԱԲ մոտեցումը՝ համաձայն ՄԱԳՀ 1994թ. III հոդվածի: Այնուամենայնիվ, ՀՀ կառավարությունը պարտավորվել է, որ ԱՀԿ անդամակցության օրվանից ՀՀ-ում կկիրառվեն միանման ակցիզային և ավելացված արժեքի հարկեր թե՛ տեղական արտադրության և թե՛ ներմուծվող արտադրանքի նկատմամբ, որը համապատասխանում է ՄԱԳՀ-ի 1994թ. I և III հոդվածների պահանջներին: Դրանք կնպաստեն ՀՀ շուկայում մրցունակության բաձրացմանը և համաշխարհային տնտեսությանն ինտեգրմանը:

Այսպիսով, ԱՀԿ-ն լայն հնարավորություններ է ընձեռում անդամ երկրներին, եթե վերջիններս որոշակի տնտեսական զարգացման քաղաքականություն են ընտրել: ԱՀԿ սկզբունքների և արտոնությունների լավ իմացությունը հնարավորություն է տալիս երկրին ի շահ օգտագործել ցանկացած դրույթ, պահանջ:

Սակայն անդամակցության գործընթացում ՀՀ կառավարությունը «չփայլեց» իր ազգանպաստ գործողություններով՝ դա են փաստում բանակցությունների տնտեսական և քաղաքական արդյունքները: Այսպես, Հայաստան - Թուրքիա տնտեսական հարաբերություններում մեղադրող կողմ պետք է հանդիսանար Հայաստանը, քանի որ իր ազատ շուկայական տնտեսության զարգացմանը խոչընդոտում է Թուրքիան, այնինչ՝ եղավ ճիշտ հակառակը:

Միաժամանակ, հանդիսանալով մի երկիր, որտեղ ագրոարդյունաբերությունը մեծ բաժին ունի ՀՆԱ-ում, ՀՀ-ն չկարողացավ առավել նպաստավոր պայմաններ ապահովել իր արտադրողի համար, այնինչ՝ Չինաստանը, Մերձբալթյան երկրները շատ ավելի բարենպաստ պայմաններ ձեռք բերեցին իրենց երկրների ֆերմերների համար:

Նկատենք, որ ՀՀ արտաքին առևտրի ազատականացման քաղաքականությունն իր դրական ազդեցությունը, այնուամենայնիվ, ունեցավ ՀՀ արտահանման վրա. 2000 թվականից գրանցվում է արտահանման սահուն աճ: Սակայն, դրան զուգահեռ, աճում է նաև ներմուծումը: Բացառություն է կազմում 2001 թվականը, երբ գրանցվել է 1% նվազում (տե՛ս աղյուսակ 1.3):

*Աղյուսակ 1.3*

**ՀՀ արտահանման և ներմուծման միտումները**

*ըստ տարիների (%-ով՝ նախորդ տարվա համեմատ)*

| Տարի | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|---|---|---|---|---|
| Արտահանում | 18 | 14 | 48 | 34 |
| Ներմուծում | 9 | -1 | 13 | 29 |

Արտահանման հիմնական ապրանքների ցանկը փաստում է, որ ՀՀ-ում ստեղծված են բարենպաստ պայմաններ ոսկյա և ադամանդյա, գյուղատնտեսական, հանքահումքային ապրանքների ու մանածագործվածքների և հագուստեղենի արտահանման համար: ՀՀ մաքսային քաղաքականությունն առավել բարենպաստ է աշխատատար և ռեսուրսատար ապրանքների տեղական արտադրության և արտահանման խթանման համար: Հայաստանը շատ ավելի մեծ արդյունքների կարող է հասնել գիտատար կամ «փոքր ծավալ՝ մեծ արժեք» ապրանքների արտադրության մեջ: Սակայն ՀՀ կառավարության ոչ ճիշտ մոտեցումն այլ ապրանքների արտադրությունն է դարձրել «շահավետ»:

Այնուամենայնիվ, ՀՀ-ն կարող է կրկին հայտնվել շահողի դիրքերում, եթե կարողանա ազատ շուկայական արտաքին առևտրային քաղաքականությունը միաձուլել ոչ ուղղակի հովանավորչական քաղաքականության հետ: Վերջինս ենթադրում է պետական աջակցություն կրթական համակարգին, ձեռնարկությունների մասնագետների վերապատրաստում, օտարերկրյա շուկայում տեղական ապրանքների գովազդում և այլն՝ շեշտադրելով տնտեսական գործունեության գիտատար ոլորտները:

Այդ դեպքում արտահանման միտում կդրսևորվի այն ապրանքների գծով, որոնք ներքին սպառման նշանակություն չունեն, և «բումերանգի էֆեկտն» այստեղ չի գործի, երբ արտահանման խթանումը հանգեցնում է ներմուծման ավելացմանը:

ՀՀ ստանձնած պարտավորությունները պահանջում են բանիմաց մոտեցում, հակառակ դեպքում Հայաստանը կվերածվի «բանանային» մի երկրի, որտեղ նույնիսկ «բանանի» արտադրությունը կդառնա ոչ շահավետ:

# ԲԱԺԻՆ 2

# ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄԸ ԱՀԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

## 2.1. ԱՀԿ դիրքորոշումը միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունը անկախացումից հետո կորցրեց իր բոլոր տնտեսական կապերը նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հետ: Դրա հետևանքով հանրապետության տնտեսական համակարգը, հատկապես արդյունաբերական ոլորտը, փաստորեն, դադարեց գործել: Անհրաժեշտ էր ձևավորել տնտեսական նոր կապեր, վերականգնել կապերը նախկին միութենական հանրապետությունների, արտասահմանյան երկրների հետ, առևտրատնտեսական հարաբերությունների ուղիներ փնտրել և, վերջապես, խիստ կարևորվում էր ԱՀԿ-ի համակարգին հանրապետության անդամակցությունը: Հաշվի առնելով համաշխարհային տնտեսությունում զարգացող երկրների, այդ թվում Հայաստանի, աճող դերը և կարևորելով նման երկրների հատուկ կարիքները՝ ԱՀԿ-ն առավել երկար ժամանակահատված է հատկացնում ստանձնած պարտավորությունները կատարելու, առևտրային հնարավորությունները զարգացնելու միջոցառումներ մշակելու համար, հստակեցնում դրույթները, որոնք պարտավորեցնում են ԱՀԿ անդամներին պաշտպանելու զարգացող երկրների առևտրային շահերը (օրինակ՝ դրանց նկատմամբ ներքին շուկայի պաշտպանության միջոցների կիրառում և վեճերի կարգավորման և տեխնիկական ստանդարտների իրականացման գործընթացի օժանդակում):

Կարևոր նշանակություն ունի Հայաստանում 1991 թվականից մինչև մեր օրերը ընկած ժամանակաշրջանում կնքված առևտրատնտեսական միջազգային պայմանագրերի ուսումնասիրությունը, դրանց նկատմամբ ԱՀԿ պահանջների հստակեցումը: Քանի որ այդ

պայմանագրերը քանակով շատ են, բնույթով՝ տարբեր, երկրները՝ բազմաթիվ, ուստի անհրաժեշտ է դրանք դասակարգել ըստ այդ հատկանիշների: Մյուս կողմից, հարկ է նշել, որ սկզբնական շրջանում (1991-1995թթ.) առևտրատնտեսական պայմանագրերը կնքվել են հիմնականում ԱՊՀ երկրների հետ (Բելառուս, Ուկրաինա և այլն), ինչը այդ ժամանակահատվածի համար կարելի է գնահատել դրական և տրամաբանական, քանի որ օբյեկտիվորեն անհրաժեշտ էր ՀՀ առևտրատնտեսական պայմանագրերը կնքել նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հետ, հիմք ընդունելով տարիներ շարունակ հաստատված ավանդական տնտեսական կապերը, դրանց ներքին շուկայի տարողունակությունը, պահանջները և այլն: Հետագայում արդեն առավել կարևորվում է արտասահմանյան երկրների (թե՛ զարգացած և թե՛ զարգացող) հետ առևտրատնտեսական պայմանագրերի կնքումը: Մինչև վերջերս այդ պայմանագրերը կնքվել են տարերայնորեն՝ առանց օրենսդրական դաշտը հաշվի առնելու: Մի շարք երկրների հետ ոչ պաշտոնական առևտրատնտեսական հարաբերությունները դեռևս շարունակվում են (օրինակ՝ Թուրքիայի հետ), իսկ ամենակարևորը՝ դրանք չեն համապատասխանում ԱՀԿ պահանջներին:

Նախ անհրաժեշտ է վերլուծել ՀՀ առևտրատնտեսական պայմանագրերի նկատմամբ ԱՀԿ պահանջները: Այնուհետև պետք է ուսումնասիրել ՀՀ առևտրատնտեսական պայմանագրերը՝ դասակարգելով դրանք ըստ տարիների՝ 1991 - 1995թթ., 1996 - 1998թթ., 1999 - 2003թթ., ինչպես նաև բացահայտել այլ երկրների հետ ՀՀ առևտրատնտեսական պայմանագրերի առավելությունները՝ հաշվի առնելով ԱՀԿ պահանջները: Իսկ ԱՀԿ-ն իրենից ներկայացնում է կազմակերպություն և, միաժամանակ, իրավական փաստաթղթերի համալիր՝ յուրահատուկ բազմակողմ առևտրային պայմանագիր, որը սահմանում է ապրանքների և ծառայությունների միջազգային առևտրում կառավարությունների իրավունքներն ու պարտականությունները: ԱՀԿ հիմքում ընկած են համաձայնագրեր, որոնք ընդունել են ԱՀԿ անդամ երկրները: Հիմնականում դրանք ապահովում են անդամ երկրների առևտրային իրավունքների պաշտպանությունը և անդամ երկրների կառավարություններին պարտավորեցնում են վարել համաձայնեցված առևտրային քաղաքականություն, որի նպատակն է աջակցել արտադրողներին, արտահանողներին,

ներմուծողներին և ներդրողներին՝ իրականացնելու իրենց գործունեությունը, այսինքն՝ բարձրացնել անդամ երկրների տնտեսական աճը, զարգացումը և բնակչության կենսամակարդակը:

Առևտրատնտեսական տեսանկյունից ԱՀԿ հիմնական նպատակը երկրների միջև առևտուրը առավելագույնս ազատական դարձնելն է և միջազգային առևտրին վնասող զանազան արգելքներից և խոչընդոտներից զերծ պահելը, ինչպես նաև կառավարություններին միջազգային առևտրի կանոններին իրազեկելը: Կարևոր է նաև վեճերի կարգավորումը, որոնք կարող են առաջանալ համաձայնագրերի կիրառման ընթացքում:

ԱՀԿ կարևոր սկզբունքներից է նաև առանց խտրականության առևտրի կազմակերպումը, այսինքն՝ ցանկացած երկիր պետք է խտրականություն չդնի իր առևտրային գործընկերների միջև, քանի որ բոլորը հավասարապես օգտվում են «առավելագույն արտոնյալ երկիր» կարգավիճակից: Բացի այդ, պետք է ավելի ազատ կազմակերպվի առևտուրը, այսինքն՝ կարելի է բանակցությունների միջոցով նվազեցնել առևտրային արգելքները:

ԱՀԿ համակարգը հիմնվում է կանոնների վրա, որի արդյունքում անդամ երկրները՝ մեծ թե փոքր, հզոր թե թույլ, հարուստ թե աղքատ, ունեն հավասար իրավունքներ և պարտավորություններ: Հարկ է նշել, որ ԱՀԿ-ն հատկապես մեծացնում է փոքր երկրների բանակցային ուժը: Փոքր երկրները (նաև Հայաստանը) միայնակ գործելու դեպքում ավելի թույլ դիրքերում կգտնվեն և անցանկալի ճնշմանը դիմադրելու ավելի քիչ հնարավորություններ կունենան:

Նշենք ԱՀԿ առևտրային համակարգի գլխավոր սկզբունքները, որոնք անհրաժեշտ է պահպանել առևտրատնտեսական պայմանագրերի կնքման դեպքում: Դրանք են.

- կիրառել միանման կանոններ՝ ներմուծողների և տեղական արտադրողների նկատմամբ,
- առևտրային քաղաքականության, կանոնակարգումների և կանոնների վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն,
- պարզեցնել առևտրային ռեժիմը՝ նվազեցնելով առևտրային արգելքները և ապահովել այլ երկրների համար տվյալ երկրի շուկայի մատչելիությունը,
- պարզեցնել մաքսային միջոցառումները, վերացնել բյուրոկրատիզմը, կենտրոնացնել տեղեկատվության տվյալների բազան և այլ միջոցառումները:

Որպես ԱՀԿ անդամ՝ Հայաստանը կարող է օգտվել բազմակողմ բանակցությունների արդյունքում ձեռք բերված համաձայնություններից, պաշտպանել իր շահերը առևտրային հարցերի լուծման ժամանակ:

ԱՀԿ-ին անդամակցությունը կարող է հանգեցնել օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման ծավալների էական աճի, որը ներկայումս Հայաստանի համար արտահանման կայուն և բարձր տեմպերի ապահովման հիմնական աղբյուրն է, քանի որ երկրում առկա են գործարարության կարգավորման միջազգային պահանջներին համապատասխանող տնտեսական օրենսդրությունը և գործարարությունը խթանող ազատական տնտեսության հիմքերը, ինչպես նաև դրանք խորացնելու և զարգացնելու պարտավորություններն ու ռազմավարությունը:

Մյուս կողմից, անընդհատ աճող առևտրի ծավալը, ապրանքների ընդլայնվող տեսականին, առևտուր իրականացնող երկրների և ձեռնարկությունների թվի աճը ավելացնում են առևտրային վեճերի առաջացման պատճառները: Հենց ԱՀԿ համակարգը կարող է օժանդակել այդ վեճերի խաղաղ և կառուցողական կարգավորմանը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ որքան ավելանում է ԱՀԿ անդամների թիվը, աշխարհում ավելի են սերտանում առևտրատնտեսական կապերը, և երկրները վստահություն են ձեռք բերում ԱՀԿ համակարգի նկատմամբ:

Բացի այդ, ԱՀԿ առևտրային համակարգը հնարավորություն է տալիս իրականացնելու հովանավորչությունից զուրկ առավել հավասարակշռված առևտրային քաղաքականություն: Հետևապես ԱՀԿ-ին անդամակցելու շնորհիվ երկրներն ապահովագրում են իրենց, որպեսզի ստանձնած առևտրային և տնտեսական ազատական պարտավորությունները չենթարկվեն այնպիսի փոփոխությունների, որոնք կարող են հանգեցնել հովանավորչության և խտրականության աճի: ԱՀԿ համաձայնագրերը ներքին արտադրողների շահերը պաշտպանելու համար նախատեսում են մի շարք միջոցառումներ: Այսպես, դրանք ապահովում են տեղական արտադրողներին խրախուսելու, նրանց շահերը պաշտպանելու և մրցունակությունը ներքին և արտաքին շուկաներում բարձրացնելու մեծ դաշտ:

ԱՀԿ համաձայնագրերի փաթեթը ներկայումս պարունակում է մոտ 60 հիմնարար փաստաթուղթ՝ համաձայնագրեր, համաձայնություններ, որոշումներ և այլն:

Արտաքին առևտրատնտեսական գործունեության ազատականացման գործընթացում կարևոր դեր ունի նաև ներքին տնտեսական հարաբերությունների ճիշտ ձևավորման և ընդլայնման նպատակով մաքսային գործի կազմակերպումը: Ավելորդ չէ նշել, որ ՀՀ Ազգային Ժողովը 2000թ. հուլիսի 6-ին ընդունել է ՀՀ մաքսային օրենսգիրքը[17], որտեղ ամփոփվել են մաքսային հարաբերությունները կարգավորող մի շարք հիմնարար օրենքներ և իրավական ակտեր:

Բնական է, որ ԱՀԿ համաձայնագրերը և պայմանագրերը չեն կարող շրջանցել Համաշխարհային մաքսային կազմակերպության (ՀՄԿ) ծրագրերը: ԱՀԿ-ն վերջերս ընդունել է Մաքսային բարեփոխումների և արդիականացման ծրագիր, որի նպատակն է կազմակերպության անդամներին՝ այդ թվում նաև Հայաստանին, օգնել ավելի ինքնավստահ, արդյունավետ աշխատելու՝ օգտագործելով առկա ռեսուրսները, հզորացնելով կազմակերպական հնարավորությունները, որոնք կնպաստեն համընդհանուր գործունեության բարելավմանը թե՛ քաղաքականության և թե՛ տնտեսական բնագավառներում: Այսինքն՝ մեր հանրապետությունը, անդամակցելով ԱՀԿ-ին, պետք է իր արտաքին տնտեսական գործունեությունը ծավալի թե՛ ԱՀԿ և թե՛ ՀՄԿ պահանջներին համապատասխան:

Մինչև ԱՀԿ-ին անդամակցելը, Հայաստանում բացակայում էին ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերը, ինչը հնարավորություն չէր տալիս վարել առևտրային արդյունավետ քաղաքականություն: 1995 - 2003 թթ. ընթացքում ՀՀ առևտրատնտեսական պայմանագրերը այլ երկրների հետ կնքվել են՝ արդեն հաշվի առնելով ԱՀԿ պահանջները:

Դառնալով ԱՀԿ անդամ և միանալով դրա համաձայնագրերին, Հայաստանը աշխատում է ձևավորել համապատասխան իրավական դաշտ և պաշտպանել սեփական արտադրողների շահերը: Իրականացնելով մի շարք միջոցառումներ՝ ներքին արտադրողները կարող են բարձրացնել սեփական արտադրության ապրանքների և ծառայությունների որակը՝ այն համապատասխանեցնելով միջազգային նորմերին և ստանդարտներին, քանի որ առանց դրա հնարավոր չէ մուտք գործել հատկապես զարգացած երկրների շուկաներ և դիմակայել արտաքին մրցակցությանը:

---

[17] *ՀՀ մաքսային օրենսգիրք, ՀՀ պաշտոնական տեղեկագիր # 19/117/, 2000*

## 2.2. ՀՀ առևտրատնտեսական պայմանագրերի կնքման սկզբունքները

Անկախության հռչակումից հետո, Հայաստանը ձգտում է իրագործել տնտեսական բարեփոխումների ծրագիր, հատկապես՝ ինտեգրվել համաշխարհային տնտեսությանը, ընդլայնել առևտրատնտեսական կապերը այլ երկրների հետ: Նախկին Խորհրդային Միության երկրների հետ առևտրային կապերի վերականգնմանը զուգահեռ, առաջ եկան նորերը, որոնցից ամենակարևորներն են՝ ԵՄ-ի, Մերձավոր Արևելքի երկրների, ԱՄՆ-ի և այլ երկրների հետ տնտեսական կապերը:

Հայաստանը առևտրային հարաբերություններ է հաստատել ավելի քան 100 երկրների հետ և դրանք զարգացնելու նպատակով բազմակողմ և երկկողմ համաձայնագրերի և պայմանագրերի ցանց է ստեղծել իր առևտրային գործընկերների հետ: Այսպես, 1993թ. ԱՊՀ 9 անդամ երկրներ (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա, Ռուսաստան, Տաջիկստան և Ուզբեկստան) կնքեցին Տնտեսական միության համաձայնագիրը, որով նախատեսվում էր ստեղծել Մաքսային միություն և ԱՊՀ երկրների ընդհանուր շուկա: Ընդ որում, յուրաքանչյուր կողմ, ըստ իր հայեցողության, պետք է որոշեր ԱՊՀ տնտեսական կառույցներին միանալու արագությունն ու ժամանակը: Դրանցով սահմանվում էր այն ապրանքների ցանկը, ըստ որի կողմերը պատրաստ էին ազատ առևտուր անել միմյանց հետ: Սակայն ԱՀԿ պահանջներին դրանք չէին համապատասխանում, և 1995թ. Հայաստանի կառավարությունը վերացրեց ինչպես ազատ առևտրի պարտավորություններից առանձին արտադրանքների բացառման, այնպես էլ քլիրինգային պայմանավորվածություններ կնքելու գործելակերպը: Սրանով երաշխավորվեց ազատ առևտրի երկկողմ համաձայնագրերի համապատասխանությունը ԱՀԿ դրույթներին: Հարկ է նշել նաև, որ ԱՀԿ շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորություններին չեն հակասում երկկողմ և տարածաշրջանային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները: Դա շատ կարևոր հանգամանք է այն առումով, որ ԱՀԿ-ին նոր անդամակցած (որոնք ԱՀԿ-ի անդամ են դարձել 1995թ.-ից հետո) կամ այդ գործընթացում գտնվող որոշ երկրներ (Ղրղզստան, Բելառուս և

այլն), լինելով Մաքսային միության անդամ, բարդությունների են հանդիպում:

ԱՀԿ-ին անդամակցության գործընթացի ժամանակաշրջանում Հայաստանը դարձել է նաև Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ՝ տասն այլ երկրների հետ միասին (Ալբանիա, Ադրբեջան, Բուլղարիա, Վրաստան, Հունաստան, Մոլդովա, Ռումինիա, Թուրքիա, Ռուսաստան և Ուկրաինա): Այս համագործակցությունն ընդգրկում է մի շարք ոլորտներ՝ տնտեսական, գիտական, տեխնոլոգիական, առևտուր, ներդրումներ և այլն: Սակայն համաձայնագրում չկար արտոնյալ առևտրի վերաբերյալ որևէ դրույթ, չնայած ապագայում նախատեսվում էին ազատ առևտրային գոտիների ստեղծման հնարավորություններ:

1996թ. հետո Հայաստանը առևտրի և համագործակցության համաձայնագրեր է ստորագրել ԱՀԿ մի շարք անդամների հետ, ներառյալ՝ Արգենտինան, ԵՄ-ն, Ավստրալիան, Բուլղարիան, Կանադան, Չինաստանը, Կիպրոսը, Հունգարիան, Հնդկաստանը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Լիբանանը, Լիտվան, Լեհաստանը, Ռումինիան, Սիրիան, Շվեյցարիան, Չեխիան, Սլովենիան, ԱՄՆ-ը, Վիետնամը և այլն: Այդ համաձայնագրերի նպատակն էր զարգացնել և ամրապնդել առևտրատնտեսական երկկողմ կապերը:

## 2.3. ՀՀ առևտրատնտեսական պայմանագրերի ձևավորման գործընթացը

1996թ. մարտի վերջին Հայաստանը սկսեց երկկողմ բանակցություններն ԱՀԿ անդամների հետ: Սակայն 1997թ.-ից փոփոխություններ կատարվեցին ՀՀ կառավարության կառուցվածքում, որոնք էլ երկրի ներսում առևտրային գործընթացների ընդհատումների պատճառ դարձան, ինչը լրացուցիչ դժվարություններ ստեղծեց ԱՀԿ-ին անդամակցելու գործում, ընդ որում՝ անդամ երկրները լրացուցիչ պահանջներ ներկայացրին: 1999թ. իրադրությունը բարելավվեց, ապրանքների և ծառայությունների առևտրի շուրջ բանակցությունների վերաբերյալ ընդունվեցին մի շարք կարևոր օրենսդրական փաստաթղթեր: Մինչև 2003թ. խստացան և

ավելի պարտադրող դարձան անդամ երկրների պահանջները: Այսպես, ԱՄՆ-ը հարցերի և պահանջների մի շարք ներկայացրեց օրենսդրական և կանոնակարգային համակարգի, ինչպես նաև ծառայությունների և գյուղատնտեսության ոլորտներում պարտավորությունների վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, ԱՀԿ անդամակցության գործընթացն ընդգրկում է ԱՀԿ անդամ երկրների հետ համաձայնագրերի երկու հիմնական տեսակ՝ երկկողմ և բազմակողմ:

Երկկողմ համաձայնագրերի էությունն այն է, որ ապրանքներին և ծառայություններին առնչվող զիջումների և պարտավորությունների շուրջ բանակցությունները վարվում են երկկողմ հիմունքներով՝ դիմող երկրի և ԱՀԿ շահագրգիռ անդամների միջև: Դրանք կարող են սկսվել ԱՀԿ անդամների ներկայացրած պահանջների կամ դիմող երկրի ներկայացրած առաջարկների հիման վրա: Ապրանքների և ծառայությունների առևտրում շուկայի մատչելիության շուրջ ՀՀ-ն երկկողմ համաձայնագրեր է կնքել ԱՄՆ-ի, Ավստրալիայի, Բուլղարիայի, ԵՄ անդամ երկրների, Լեհաստանի, Կանադայի, Կուբայի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Մեքսիկայի, Չեխիայի, Սլովակիայի, Ուրուգվայի հետ:

Բազմակողմ համաձայնագրերի նպատակն է երաշխավորել դիմող երկրի գործելակարգի (ռեժիմի) համապատասխանությունը ԱՀԿ-ի սկզբունքներին և պահանջներին: Դրանք վերաբերում են անդամակցող երկրի օրենսդրական ու կանոնակարգային դաշտերին, սահմանակարգային (ինստիտուցիոնալ) ու օրենքների կիրարկման համակարգերին: Այն ընդգրկում է այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են ապրանքների, մտավոր սեփականության առևտրին առնչվող իրավունքները ու ծառայություններն ու կանոնները:

Ինչպես են ընթացել բազմակողմ պարտավորությունների վերաբերյալ քննարկումները: Նախ, դրանք իրականացվել են ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցության հարցերով Աշխատանքային խմբի շրջանակներում: Այդ գործընթացը սկսվել էր, երբ Հայաստանը ներկայացրեց իր արտաքին առևտրային գործելակարգի վերաբերյալ Հուշագիրը, ինչպես նաև արտաքին առևտուրը կանոնակարգող օրենսդրական փաստաթղթերի պատճենները և վիճակագրական տվյալները: ԱՀԿ անդամակցության շուրջ վարվող բանակցությունների շրջանակներում Հայաստանի կառավարությունն օրենսդրա-

կան ու սահմանակարգային բարեփոխումների մի ընդարձակ շարք իրականացրեց՝ ԱՀԿ համաձայնագրերի խիստ պայմանները և ԱՀԿ անդամ երկրների պահանջները կատարելու համար:

Բնական է, որ օրենսդրական ու սահմանակարգային աշխատանքներն ընդգրկում էին առևտրին առնչվող բազմաթիվ ոլորտներ: Նախ, կարևոր է մաքսային քաղաքականության և մաքսային համակարգի համապատասխանությունը ԱՀԿ պահանջներին: Դրանք շուկայական տնտեսությանն անցնելուն ուղղված բարեփոխումների սկզբից ի վեր ենթարկվել են էական փոփոխությունների և բարելավման, ինչը մեծ մասամբ իրականացվել է ԱՀԿ անդամակցության գործընթացի շրջանակներում, և ի վերջո, ամփոփվեցին Մաքսային օրենսգրքում: Անհրաժեշտ էր համապատասխանեցնել մաքսային օրենսդրությունը և ընթացակարգերը ԱՀԿ հիմնադրույթների հետ (մաքսավճարներ, մաքսային գնահատում, ներմուծման հարկերի կիրառում, ապրանքի ծագման երկրի որոշման կանոններ և այլն): Մասնավորապես, ԱՀԿ անդամ երկրները մատնանշեցին որոշ դրույթներ, որոնք անհամապատասխան էին արժեքային մաքսավճարի կիրառման հետ: Ըստ այդ հոդվածի, մաքսավճարը չպետք է ավելին լինի, քան ներմուծման կամ արտահանման առանձին գործարքների հետ կապված մաքսային ձևակերպումների ծախսը:

Այսպիսով, հենվելով վերը նշված դրույթների և հիմնավորումների վրա, ավելի կոնկրետ վերլուծենք երկկողմ ազատ առևտրային համաձայնագրերի, առևտրի և տնտեսական համագործակցության համաձայնագրերի գործընթացը ԱՊՀ երկրների հետ: Նշենք, որ Հայաստանը երկկողմ ազատ առևտրի համաձայնագրեր է կնքել Ռուսաստանի (1993թ.), Ղրղզստանի (1995թ.), Թուրքմենստանի (1995թ.), Վրաստանի (1996թ.), Ուկրաինայի (1996թ.), Ղազախստանի (1999թ.), Բելառուսի (2000թ.) հետ և սահմանվել են իրավական պարտավորություններ: Ազատ առևտրի պայմանագրերի կնքման և ուժի մեջ մտնելու պահից մաքսավճարները սահմանվեցին զրոյական դրույքաչափով: Ընդգծենք, որ ազատ առևտրի համաձայնագրերը առևտրի և տնտեսական համագործակցության համաձայնագրերի արդյունք են, որոնք Հայաստանը ստորագրել է ԱՊՀ երկրների հետ: Այս համաձայնագրերի շուրջ բանակցությունները վարվում էին յուրաքանչյուր տարի և նախատեսում էին ազատ

առևտուր՝ հաշվի առնելով այն ապրանքների ցուցակը, որոնց առևտրի շուրջ կողմերը եկել էին համաձայնության: Մասնավորապես, 1992թ. հետո ապրանքների ցուցակը կազմվում էր առանց գների շուրջ նախնական համաձայնության, իսկ ստանձնած պարտավորությունները կատարվում էին միայն մասամբ: 1995 թվականից ապրանքների վերաբերյալ ստանձնած պարտավորությունները դադարեցին գործելուց: Սակայն, ըստ Ռուսաստանի Դաշնության հետ ազատ առևտրի համաձայնագրի, կողմերից յուրաքանչյուրը կարող է արտահանվող ապրանքի վրա չտարածել մաքսազերծման ընթացակարգը: Քանի որ Հայաստանը չունի արտահանման որևէ սահմանափակում (բացի նրանցից, որոնք վերաբերում են հասարակության անվտանգությանը, առողջությանը և ապահովության հարցերին), ազատ առևտրի համաձայնագրի շրջանակներում չի ներկայացրել բացառություն հանդիսացող ապրանքների ցուցակ: Սակայն Ռուսաստանն ունի արտահանման որոշակի սահմանափակումներ, որոնք իրականացվում են ազատ առևտրի համաձայնագրերի շրջանակներում բացառությունները սահմանող դրույթներով: Այդ սահմանափակումները իրականում չեն գործում՝ յուրաքանչյուր տարի Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվող առևտրի և տնտեսական համագործակցության համաձայնագրերի շնորհիվ: Ազատ առևտրի երկկողմ համաձայնագրերի ստորագրումից հետո 1992-1997թթ. ընթացքում Ռուսաստանի Դաշնությունը զգալիորեն ազատականացրեց իր արտաքին առևտուրը (վերացրել է բաժնեմասերը, արտահանման հարկերը և այլն): Ռուսաստանի օրենսդրությամբ՝ արտահանման սակագնային և ոչ սակագնային կանոնակարգման հարցերի շուրջ չի ներկայացվում հատուկ ապրանքների ցուցակ, որն էլ ապահովում է Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքված Ազատ առևտրի համաձայնագրերի համապատասխանությունը ազատ առևտրի վերաբերյալ ԱՀԿ կանոններին: Դեռ ավելին, 1997թ. օգոստոսի 28-ին կնքված երկկողմ համաձայնագիրը հաստատեց այն փաստը, որ Հայաստանի և Ռուսաստանի միջև ազատ առևտրային ռեժիմից էական շեղումներ կամ բացառություններ չկան: Մաքսազերծ ռեժիմից բացառություններ կամ շեղումներ չկան նաև Թուրքմենստանի, Ուկրաինայի, Ղրղզստանի և Վրաստանի հետ վավերացված երկկողմ համաձայնագրերում:

Ներկայումս ԱՊՀ երկրների հետ կնքած ազատ առևտրի համաձայնագրերը չեն հակասում ԱՀԿ հոդվածներին, հակառակը,

ազատ առևտրի երկկողմ և բազմակողմ համաձայնագրերով վերացվել են կողմերի միջև ազատ առևտուրը սահմանափակող պարտավորություններն ու կանոնակարգերը:

Հայաստանը անկախանալուց հետո լայնորեն կիրառեց նաև բարտերային առևտուրը՝ ԱՊՀ երկրների հետ կնքելով քլիրինգային համաձայնագրեր: Այսպես, միայն 1993թ. ըստ այդ համաձայնագրերի իրականացվել է արտահանման 74 և ներմուծման 56%-ը, իսկ 1994թ., համապատասխանաբար՝ 46 և 29%-ը, այսինքն՝ բարտերային առևտրի նշանակությունը նվազել է, և արդեն 1995թ. քլիրինգային համաձայնագրերով առաքումները գործնականում դադարեցին: 1996 թվականից Հայաստանի կառավարությունը դադարեցրել է բարտերային առևտուրը և հետագայում ընդհանրապես հրաժարվել է կնքել քլիրինգային կամ բարտերային համաձայնագրեր:

Հայաստանը երկկողմ առևտրատնտեսական համաձայնագրեր է կնքել արտասահմանյան մի շարք երկրների հետ (Արգենտինա, Լիբանան և այլն), որոնց նպատակն է ամրապնդել առևտրատնտեսական կապերը, սակայն դրանք չեն ընդգրկում արտոնյալ առևտուր սահմանող որևէ դրույթ:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, հաշվի առնելով ԱՊՀ և արտասահմանյան այլ երկրների հետ առևտրատնտեսական (և ոչ միայն այդ) կապերի զարգացման, ընդլայնման և խորացման, հասարակությանը ներկայացնելու կարևորությունը, 2002թ. հունիսի 12-ին հրատարակել է պաշտոնական տեղեկագիր՝ միջազգային երկկողմ պայմանագրերի ժողովածու (հայերեն, ռուսերեն և անգլերեն): Այդ պայմանագրերը ըստ ժամանակագրական կարգի ներառում են 1991 թվականից հետո ընկած ժամանակահատվածը[18] և դասակարգվել են հետևյալ կերպ՝ 1991-1995թթ., երբ Հայաստանի անկախացման սկզբնական շրջանն էր, 1996-1998թթ., այդ ընթացքում Հայաստանը նպատակ ուներ անդամակցելու ԱՀԿ-ին և արդեն այլ երկրների հետ պայմանագրերը կնքվում էին հաշվի առնելով ԱՀԿ պահանջները, պահպանելով դրա սկզբունքներն ու կանոնները և 1999 – 2001 թթ.՝ բնութագրվում է հիմնականում ԱՀԿ-ի անդամ երկրների

[18] *Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու, 1991-1995թթ., 1996-1998թթ., 1999-2001թթ., Երևան, 2002*

հետ առևտրատնտեսական կապերի հաստատմամբ: Մյուս կողմից, առևտրատնտեսական այդ պայմանագրերը, ըստ երկրների ընդգրկման աստիճանի առավել պատկերավոր և հստակ ներկայացնելու համար, դասակարգվել են ըստ տարածաշրջանների՝ ԱՊՀ, Մերձբալթյան, եվրոպական, ասիական և ամերիկյան մայրցամաքի երկրներ: Ընդգծենք, որ դեռևս ԱՀԿ անդամ չդարձած, Հայաստանը արտասահմանյան այլ երկրների հետ առևտրատնտեսական պայմանագրերը կնքել է ԱՀԿ պահանջներին համապատասխան, առանց նկատելի թերությունների: Ուստի ներքոհիշյալ բոլոր պայմանագրերը, հատկապես 1995թ.-ից հետո, ամբողջական են, չեն պահանջում լրացումներ և չեն պարունակում բացթողումներ:

1991 - 1995 թթ. Հայաստանը բազմաբնույթ, տարբեր նպատակային երկկողմ պայմանագրեր է կնքել ԱՊՀ երկրներից՝ Բելառուսի, Ռուսաստանի Դաշնության, Ղրղզստանի, Վրաստանի, Թուրքմենստանի, Մոլդովայի, Ուկրաինայի, Տաջիկստանի, Մերձբալթյան երկրներից՝ Լատվիայի, Էստոնիայի, եվրոպական երկրներից՝ Ռումինիայի, Լեհաստանի, Հունգարիայի, Բուլղարիայի, Կիպրոսի, Հունաստանի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ավստրիայի, ասիական երկրներից՝ Հնդկաստանի, Չինաստանի, Իրանի, Կորեայի, Լիբանանի, Վիետնամի, ամերիկյան մայրցամաքից՝ ԱՄՆ-ի և Արգենտինայի հետ: Նշենք՝ դրանց հետ համաձայնագրերը բազմապրոֆիլ են, բազմաբնույթ (առևտրատնտեսական, բարձրագույն կրթության, գիտատեխնիկական, նավթային և գազային արդյունաբերության, հեղինակային իրավունքների փոխադարձաբար պաշտպանության, ստանդարտացման, չափաբանության և հավաստագրման, մշակույթի, կապի, օդային հաղորդակցության, գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի, տեղեկատվության փոխանակման, երկու կողմերի քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության, արդյունաբերական վթարների, տարերային աղետների կանխման, բարձագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման, իրավական ակտերի, դիվանագիտական, մաքսային կանոնների պահպանման, ներդրումների և այլն):

Այդ ժամանակաշրջանում, օրինակ՝ Հայաստանի կառավարությունը Ռուսաստանի հետ կնքել է մոտ 20 տարբեր համաձայնա-

գրեր, սակայն առանձին համաձայնագիր առևտրատնտեսական կապերի վերաբերյալ՝ չի նախատեսվել:

Մինչև 1995թ. վերը նշված երկրների հետ կնքած համաձայնագրերի հիմնական մասում հաշվի չեն առնվել Տարիֆների և առևտրի գլխավոր համաձայնագրի /ԳԱՏՏ-ՏԱԳՀ/ և ԱՀԿ-ի պահանջները: Այսպես, Հայաստանի անկախացումից հետո, 1991թ. առաջին անգամ առևտրատնտեսական համագործակցության սկզբունքների վերաբերյալ համաձայնագիր է կնքվել Բելառուսի Հանրապետության կառավարության հետ: Դրա նպատակն էր հավասար և փոխադարձ շահի հիման վրա զարգացնել և ընդլայնել երկու կողմերի միջև առևտրատնտեսական կապերը՝ շեշտը դնելով միջազգային իրավունքի սկզբունքների և բարեկամական հարաբերությունների վրա:

Համաձայնագիրը ընդգրկում է 12 հոդված և սկսել է գործել 1992թ. հունվարի 1-ից: Այդ հոդվածների հիմնական բովանդակությունն այն է, որ երկու հանրապետությունները, կառավարությունների մակարդակով, կարգավորելու են արտադրանքի կարևորագույն տեսակների մատակարարումները, ընդ որում՝ նախարարություններին հանձնարարելով համաձայնեցնել տվյալ արտադրանքի անվանացանկը, փոխադարձ հաշվեկշռված ծավալները: Սահմանվել է նաև արտադրանքի և ծառայությունների համար փոխադարձ հաշվարկների կարգը, որոշվել մատակարարների շահագրգռվածությունը և պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով կիրառել տնտեսական խթաններ և պատժամիջոցներ:

Նախատեսվել է երկու հանրապետությունների միջև զարգացնել տրանսպորտային կապերը, անգամ անհրաժեշտության դեպքում՝ մասնակից դարձնել հարևան այլ շահագրգիռ հանրապետություններին: Առանձին (6-րդ) հոդվածով հատուկ ուշադրություն է դարձվել համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը, հստակեցվել նոր ձեռնարկությունների շինարարության և գործողների վերակառուցման պայմանները և թողարկված արտադրանքի հետագա բաշխումը:

Կողմերը պայմանավորվել են համատեղ քննարկել համաձայնագրի իրականացման գործընթացում ծագող հիմնահարցերը և ձեռնարկել դրանց լուծման համար համապատասխան միջոցներ,

ինչպես նաև մշակել միմյանց մատակարարվող արտադրանքի և ապրանքների վերարտահանումը կանխարգելող միջոցառումներ:

Առաջին հայացքից թվում է, որ համաձայնագրում բոլոր հարցերը ընդգրկված են, չկան բացթողումներ, սակայն անտեսվել են ԱՀԿ այն գլխավոր սկզբունքները (հիշենք 2.1 բաժնում նշված չորս հիմնական կետերը), որոնք 1995թ.-ից հետո համապատասխանեցվել են՝ տարբեր երկրների հետ համաձայնագրեր կնքելիս:

Դիտարժան է քննարկել Վրաստանի և Հայաստանի կառավարությունների միջև կնքված ազատ առևտրի մասին համաձայնագիրը՝ հաշվի առնելով տարածքային մոտիկությունը, ապրանքների նկատմամբ պահանջը, առևտրատնտեսական ավանդական կապերի վերականգնումը և այլն: Այս համաձայնագիրը կնքվել է 1995թ., ուժի մեջ է մտել 1998թ. նոյեմբերի 11-ից և ներառում է 21 հոդված: Համաձայնագրի նպատակն էր ազատ ձևով զարգացնել փոխադարձ առևտրատնտեսական համագործակցությունը, խորացնել ինտեգրացիոն տնտեսական կապերը, տնտեսության փոխկապվածությունը և փոխհամալրումը՝ հիմնվելով հավասարությունը և փոխշահավետությունը պահպանելու վրա: Իսկ ամենակարևորը՝ ընդգծվում է, որ Հայաստանի և Վրաստանի միջև առևտրատնտեսական հարաբերությունները հաստատվում են ՏԱԳՀ և ԱՀԿ-ի պահանջներին համապատասխան: Բացի այդ, կողմերը չեն կիրառում արտահանման կամ ներմուծման մաքսային տուրքեր, ինչպես նաև մաքսային տուրքերին համարժեք հարկեր և գանձումներ՝ մի պայմանավորվող կողմի տարածքից ծագող և մյուս պայմանավորվող կողմի մաքսային տարածքում սպառման նախատեսված ապրանքների նկատմամբ: Դրանք Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) կառավարությունների ղեկավարների խորհրդի կողմից 1993թ. սեպտեմբերի 24-ի որոշմամբ հաստատված ապրանքների ծագման երկրի որոշման կանոններով սահմանված ապրանքներն են:

Բացի այն հոդվածներից, որոնք վերաբերում են առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ բոլոր հաշվարկների և վճարումների, նորմատիվ ակտերի, ազգային օրենսդրությունների մեջ փոփոխությունների, առևտրում կիրառվող ընդհանուր մաքսային սակագների, տարանցման ազատության սկզբունքի պահպանման, վեճերի լուծման և այլ հարցերի, անհրաժեշտ է

առանձնացնել 3-րդ հոդվածը: Դրանում ընդգծվում է, որ կողմերը փոխադարձ առևտրում պետք է խուսափեն խտրական միջոցների կիրառումից, որը ԱՀԿ-ի կարևոր պայմաններից է, նաև չկիրառեն ապրանքների արտահանման կամ ներմուծման նկատմամբ քանակական սահմանափակումներ կամ դրանց համարժեք միջոցներ: Դրանք պետք է ունենան բացառիկ բնույթ և կարող են կիրառվել միայն ԱՀԿ-ի շրջանակներում կնքված համաձայնագրերով նախատեսված դեպքերում և խիստ որոշակի ժամկետներում:

Այդ ժամանակաշրջանում կարևորվում էր նաև Իրանի Իսլամական Հանրապետության հետ բազմաբնույթ, այդ թվում՝ առևտրատնտեսական համաձայնագրերի կնքումը, սակայն անհրաժեշտ է անդրադառնալ նաև եռակողմ պայմանագրին, որը կնքվել է Հայաստանի Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության և Թուրքմենստանի կառավարությունների միջև առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ: Այն ստորագրեցին երեք պետությունների Արտաքին գործերի նախարարները 1995թ. հուլիսի 8-ին, Թեհրանում և ուժի մեջ է մտել 1997թ. հուլիսի 9-ից: Նպատակն էր ամրապնդել և զարգացնել առևտրատնտեսական կապերը, ինչպես նաև երեք երկրների միջև ընդլայնել համագործակցությունը հավասարության, անխտրականության, փոխշահավետության հիման վրա: Այստեղ նույնպես նկատվում է ԳԱՏՏ-ի պահանջներին համապատասխանությունը: Հոդվածները (թվով 14) ներառում են հետևյալ հարցերը՝ Հայաստանից Իրան ապրանքների և ծառայությունների մատակարարում իրականացնելու հնարավորությունները, Թուրքմենստանի և Հայաստանի միջև բնական գազի, էներգակիրների և Թուրքմենստանից Հայաստան այլ արտադրանքի մատակարարման համաձայնագրերով նախատեսված ապրանքների համար՝ իրանական կողմից Թուրքմենստան ապրանքների և ծառայությունների միաժամանակյա փոխհատուցման հիմունքները: Նշվում է նաև, որ կողմերից յուրաքանչյուրի՝ մյուս կողմերի արտադրանքների նկատմամբ կիրառած մաքսային տուրքերը և հարկերը չպետք է գերազանցեն մյուս երկրների՝ նման արտադրանքի նկատմամբ կիրառվող գումարը, ընդ որում՝ ապրանքների և ծառայությունների փոխադարձ մատակարարման հաշվարկը իրականացվելու է համաշխարհային գներով՝ նվազեցնելով կամ հանելով ոչ տարիֆային խոչընդոտները:

Երկրորդ ժամանակաշրջանը ընդգրկում է 1996 – 1998 թթ., ներառում է բազմաբնույթ բովանդակությանբ և հիմնականում վերը նշված երկրների միջև կնքված 100-ից ավելի համաձայնագիր: Ընդգրկվել են նաև նոր երկրների (Եգիպտոս, Իտալիա, Եվրոպական խորհուրդ և դրա անդամ պետություններ, Կանադա, Խորվաթիա, Ուրուգվայ, Իսրայել, Շվեյցարիա և այլն) հետ մի շարք համաձայնագրեր: Դրանց առանձնահատկությունը և նախորդներից տարբերությունն այն է, որ գրեթե բոլոր համաձայնագրերում հատուկ և կոնկրետ ընդգծված է ՀՀ մաքսային օրենսդրության և ԱՀԿ կանոններին համապատասխանությունը:

Ընդհանուր առմամբ, բոլոր համաձայնագրերի բովանդակությունը չի կարելի ընդունել որպես բացարձակ փաստաթուղթ տվյալ համագործակցության վերաբերյալ: Հակառակը, դրանց մանրակրկիտ ուսումնասիրությունը և խորը վերլուծությունը հնարավորություն են տալիս նաև տվյալ ժամանակահատվածում առանձնացնել Հայաստանի Հանրապետության համագործակցությունների հետաքրքրության շրջանակը, հետևել դրանց զարգացման ուղղությունների ընթացքին և ընդգրկման իրավատնտեսական ոլորտներին: Այսպես, եթե մինչև 1996թ. այլ երկրների հետ համաձայնագրերի ուղղվածությունը բացի առևտրատնտեսական կապերի հաստատումից ներառում էր նաև իրավական, մաքսային, մշակութային, գիտական, սպորտի, օդային հաղորդակցությունների մասին համագործակցությունը, ապա 1996 թվականից հետո վերոնշյալ համաձայնագրերին ավելանում են միջնակարգ կրթության, էներգետիկայի, զբոսաշրջության, միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության, արդյունաբերական սեփականության պահպանության, եկամուտների և գույքի կրկնակի հարկումը վերացնելու, շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության բնագավառում համաձայնագրերը:

Հայաստանի տնտեսական զարգացման համար կարևորվում է Եվրոպական խորհրդի, դրա անդամ պետությունների և Կանադայի հետ 1996 - 1998 թթ. Հայաստանի կնքած առևտրատնտեսական համագործակցության համաձայնագրերի վերլուծությունը: Եվրոպական խորհրդի համաձայնագրում ընդգրկված են Բելգիան, Դանիան, Գերմանիան, Ֆրանսիան, Հունաստանը, Իսպանիան, Իռլանդիան, Իտալիան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները, Ավստրիան,

Պորտուգալիան, Ֆինլանդիան, Շվեդիան, Մեծ Բրիտանիան, Աձխի և պողպատի եվրոպական համագործակցությունը և Ատոմային էներգիայի եվրոպական համագործակցությունը: Այս համաձայնագրի նպատակն է ամրապնդել և ընդլայնել Եվրոպական խորհրդի և ԽՍՀՄ-ի միջև 1989թ. դեկտեմբերի 18-ին ստորագրված «Առևտրի և կոմերցիոն ու տնտեսական համագործակցության մասին» համաձայնագրերով հաստատված բազմակողմ հարաբերությունները՝ նպաստելով կողմերի միջև առևտրային, ներդրումային և ներդաշնակ տնտեսական կապերի զարգացմանը: Համաձայնագիրը ընդգրկում է 11 բաժին, 102 բազմաբովանդակ հոդված, որոնցից դիտարկման է արժանի 3-րդ բաժինը, որն ամփոփում է ապրանքային առևտրի հետ կապված դրույթները՝ ազատականացնելով առևտուրը, համապատասխանեցնելով ԱՀԿ-ի կանոններին: Այսպես, կողմերը պարտավորվում են միմյանց տրամադրել բարենպաստ ազգի ռեժիմ՝ կապված արտահանմանն ու ներմուծմանը առնչվող մաքսատուրքերի և գանձումների, մաքսային ստուգումների, տարանցման, ապրանքային պահեստների և վերաբեռնումների, ներկրվող ապրանքների վրա ուղղակի կամ անուղղակի հարկերի, վճարման մեթոդների, ներքին շուկայում ապրանքների վաճառքի, գնման, փոխադրման, բաշխման և օգտագործման վերաբերյալ կանոնների հետ: Այս դրույթները չեն տարածվում այն արտոնությունների վրա, որոնք սահմանված են Մաքսային միություն կամ Ազատ առևտրի գոտի ստեղծելու նպատակով, կամ այդպիսի միության կամ գոտու ստեղծման հետևանքով նաև որոշակի երկրներին ԱՀԿ կանոնների և այլ միջազգային պայմանավորվածությունների համաձայն՝ ի նպաստ այդ երկրների զարգացման և հարևան երկրներին՝ սահմանամերձ առևտուրը հեշտացնելու նպատակով:

Չնայած այս համաձայնագրում նկատելի է ԱՀԿ պահանջներին համապատասխանությունը, սակայն կողմերը պարտավորվում են իրադրության փոփոխման դեպքում փոփոխել ապրանքների փոխադարձ առևտրին վերաբերող դրույթները՝ ներառյալ ԱՀԿ-ին Հայաստանի Հանրապետության անդամակցելու հետևանքով առաջացած իրադրությունը:

Հայաստանի և Կանադայի միջև առևտրի, առևտրային գործունեության մասին համաձայնագիրը առանձնացվել է՝ հաշվի առնե-

լով երկկողմ առևտրի զարգացումը և Կանադայի՝ ԱՀԿ անդամի կարգավիճակը: Համաձայնագրի նպատակը Հայաստանի և Կանադայի միջև առևտրի և առևտրային հարաբերությունների կարգավորման համար անհրաժեշտ հավասարակշռված իրավունքների ու պարտականությունների, ինչպես նաև համաձայնեցված կանոնների համակարգի ձևավորումն էր:

Այստեղ հետաքրքիր է նաև այն փաստը, որ տրվում են կիրառվող տերմինների սահմանումներ, օրինակ «տարածք» տերմինը նշանակում է, Հայաստանի դեպքում՝ այն տարածքը, որի նկատմամբ գործում է մեր հանրապետության մաքսային օրենսդրությունը, իսկ Կանադայի դեպքում՝ իրենցը՝ ներառյալ Կանադայի տարածքային ջրերին հարող ցանկացած տարածքը: Կամ, «անձ» տերմինը նշանակում է տվյալ երկրի քաղաքացի կամ մշտական բնակիչ (ռեզիդենտ), որևէ իրավաբանական մարմին, որը կազմավորվել է սահմանված կարգով՝ համաձայն գործող օրենքների: «Երրորդ երկիր» տերմինը նշանակում է ցանկացած այլ երկիր, բացի Հայաստանից և Կանադայից: «Տարանցում» տերմինը նշանակում է որևէ երկրի տարածքով բեռների փոխադրում՝ ներառելով կամ չներառելով վերաբեռնումը, պահեստավորումը, բեռնաթափումը կամ փոխադրման միջոցի փոփոխությունը:

Այս համաձայնագրում առաջին անգամ ներառվել է «առավել բարենպաստ ազգի ռեժիմ» հոդվածը, ըստ որի՝ կողմերից յուրաքանչյուրը մյուս կողմին, անկախ ապրանքը փոխադրողի ազգությունից, պետք է տրամադրի որևէ բարենպաստության ռեժիմ, արտոնություն՝ կապված ապրանքների արտահանման կամ ներմուծման համար սահմանվող մաքսատուրքերի կամ որևէ հարկատեսակի հետ: Այս համաձայնագրի՝ «առավել բարենպաստ ազգի ռեժիմի» վերաբերյալ դրույթները չեն տարածվում արդեն տրամադրված կամ հետագայում տրամադրվելիք արտոնությունների վրա՝ կապված որևէ Մաքսային միության կամ Ազատ առևտրի գոտու անդամակցելու կամ անդամ դառնալու, արտոնությունների կամ առավելությունների հետ, որոնք տրվում են մյուս երկրներին՝ ԱՀԿ համապատասխանող միջազգային այլ համաձայնագրերի կամ ԱՀԿ ընդունման պայմանավորվածությունների համաձայն (փոխադարձության կամ երրորդ երկրներին տրամադրվող արտոնությունների հիման վրա):

Առանձին հոդվածներ ներկայացնում են տարանցմանը նպաստելու, տեղեկատվության մատչելիության, ծառայությունների, բեռների փոխադրման վճարումների պայմանների, առևտրին առնչվող ֆինանսների, պայմանագրերի և առևտրային վեճերի լուծմանն առնչվող օրենսդրության, ազգային անվտանգության վերաբերյալ դրույթներ:

1999 - 2001 թթ. ժամանակաշրջանում Հայաստանը համաձայնագրեր է կնքել գրեթե նույն պետությունների հետ, որոնք արդեն ԱՀԿ անդամ են, իսկ ըստ բովանդակության՝ տարաբնույթ են, սակայն ավելի որոշակի դրույթներով (մշակույթի, կրթության, գիտության, առողջապահության, գյուղատնտեսության, մաքսային, ֆինանսական և այլն), այսինքն՝ դրանցով կարելի է որոշել Հայաստանի հետաքրքրությունների, համագործակցության ոլորտները և ուղղությունները: Մյուս կողմից, դրանցում առկա են երկարաժամկետ տնտեսական համագործակցության միջպետական ծրագրեր (օրինակ՝ Ուկրաինայի հետ՝ 2001 - 2010 թթ.), որտեղ հատուկ առանձնացված է առևտրատնտեսական կապերի հաստատումը ազատ առևտրի համաձայնագրով: Այսպես, ըստ համաձայնագրի, Հայաստանի և Ուկրաինայի միջև առևտրային համագործակցության զարգացումը և խորացումը իրականացվելու են ազատ առևտրի ռեժիմի, կարճ ժամկետներում փոխադարձ առևտրում անուղղակի հարկերի գանձման միասնական սկզբունքի անցման, առևտրատեխնիկական արգելքների և անուղղակի ոչ տարիֆային սահմանափակումների աստիճանաբար վերացման, մաքսային սակագների միօրինակեցման հիման վրա՝ ապահովելով ապրանքների տարանցման ազատ և ոչ խտրական պայմանները, բարձրացնելով մաքսային հսկողությունը, այսինքն՝ այն բոլոր պայմանները և սկզբունքները, որոնք պահանջվում են ԱՀԿ համակարգով:

Օրինակելի է նաև Հայաստանի և Սլովակիայի միջև կնքված առևտրատնտեսական համագործակցության Համաձայնագիրը, որտեղ բոլոր դրույթները (18 հոդված) լիովին համապատասխանում են ԱՀԿ սկզբունքներին և կանոններին:

Կողմերի նպատակն է զարգացնել և ամրապնդել առևտրատնտեսական կապերը, ընդլայնել առևտրային հարաբերությունները՝ իրավահավասարության և փոխշահավետության սկզբունքների հիման վրա, հաշվի առնելով երկու հանրապետությունների

քաղաքական և տնտեսական համակարգերում տեղի ունեցած արմատական փոփոխությունները, ձգտելով համաշխարհային տնտեսության մեջ երկու երկրների տնտեսությունների ինտեգրմանը, խստորեն պահպանելով ԱՀԿ-ի սկզբունքները, այսինքն՝ տրամադրելով առավել բարենպաստ ռեժիմ երկրների տարածքից ծագող ապրանքների առևտրի և առևտրատնտեսական համագործակցության այլ ձևերի նկատմամբ, չկիրառվելով խտրական միջոցներ փոխադարձ առևտրատնտեսական համագործակցության շրջանակներում և այլն:

Այսպիսով, ուսումնասիրելով և վերլուծելով Հայաստանի և արտասահմանյան երկրների միջև հաստատված առևտրատնտեսական կապերի զարգացման գործընթացը, կարելի է եզրակացնել, որ այդ պայմանագրերում հիմնականում հաշվի են առնվել ԱՀԿ պահանջները, կանոնները և սկզբունքները: Սակայն դեռևս կան մի շարք խնդիրներ հատկապես հարևան երկրների, օրինակ՝ Թուրքիայի հետ, երբ առևտրային հարաբերություններն ունեն տարերային բնույթ, անտեսված է օրենսդրական դաշտը, երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերը պետության վերահսկողությունից դուրս են, ինչի հետևանքով վնաս է հասցվում նախ Հայաստանի տնտեսությանը[19]: Այդ նպատակով, մոտ ապագայում անհրաժեշտ է երկրների կառավարությունների մակարդակով տնտեսական համագործակցության պայմանագրեր կնքել՝ թույլ չտալու համար ապրանքների անօրինական փոխադրումներ և, ամենակարևորը, չշրջանցելու առևտրատնտեսական կապերի բարելավման ԱՀԿ պահանջները:

Նույն՝ ստվերային ձևով են ընթանում առևտրատնտեսական հարաբերությունները Ադրբեջանի հետ, և մոտ ապագայում այն հավանաբար հնարավոր չէ կարգավորել քաղաքական հարաբերությունների լարվածության և Լեռնային Ղարաբաղի չլուծված հիմնախնդրի պատճառով: Ստվերային առևտրից խուսափելու համար Ադրբեջանի հետ նույնպես պետք է կնքվի երկկողմ առևտրատնտեսական համագործակցության պայմանագիր:

Հայաստանի և Իրանի միջև կնքված առևտրատնտեսական պայմանագիրը պետք է վերանայել՝ Իրանից Հայաստան ներմուծ-

---

*[19] Թ. Թորոսյան, Հայաստան - Թուրքիա. առևտրատնտեսական կապերը, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» ամսագիր, # 6-7, 2002, էջ 84-89:*

վող ապրանքների որակական հատկանիշները բարելավելու տեսանկյունից: Ավելին, Իրանից ներմուծվող ապրանքների մի մասը կարող է արտադրվել Հայաստանում, իսկ Իրան արտահանվող հումքը և ռեսուրսները անհրաժեշտ է փոխարինել պատրաստի արտադրանքով[20]:

Հարևան երկրներից առանձնակի կարևորվում է Վրաստանի հետ տնտեսական հարաբերությունների հետագա բարելավումը՝ խորացնելու համար արդեն հաստատված առևտրատնտեսական կապերը: Ընդ որում նշենք, որ Վրաստանը Հայաստանից շուտ է անդամակցել ԱՀԿ-ին: Այդ գործընթացին կնպաստեն ԱՀԿ համակարգում երկու երկրների անդամակցությունը, ԱՀԿ պահանջներին ենթարկվելը, քաղաքական նոր մթնոլորտը, բարիդրացիական հարաբերությունները՝ կարգավորելով երկկողմ ապրանքափոխադրումների գործելակերպը, առևտրային կառուցվածքում հարստացնելով ապրանքների տեսականին, կայունացնելով Հայաստանից էներգամատակարարումները, ընդլայնելով տրանսպորտային բոլոր տեսակի՝ հատկապես ծովային ուղիներից օգտվելու հնարավորությունները:

Բացի այդ, Հայաստանի՝ հարևան երկրների հետ առևտրատնտեսական կապերի հետագա բազմակողմանի զարգացումը հնարավորություն կտա ձևավորել տարածաշրջանային ինտեգրված հզոր միավորում, որով երկրներից յուրաքանչյուրը կամրացնի և կկայունացնի իր դիրքերը թե՛ ԱՀԿ համակարգում և թե՛ համաշխարհային տնտեսության մեջ:

---

[20] *Թորոսյան Թ., Հայաստան-Իրան. առևտրատնտեսական կապերը, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» ամսագիր, # 6-7, 2002, էջ 83:*

# ԲԱԺԻՆ 3

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՀԿ-ԻՆ, ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՀԱՐԵՎԱՆ ԵՎ ԱՊՀ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

Համաձայն ԱՀԿ կողմից հաստատված «Հոդված 12»-ի՝ յուրաքանչյուր պետություն, որը լիիրավ ինքնավարություն ունի կառավարելու իր առևտրային քաղաքականությունը, կարող է դառնալ ԱՀԿ անդամ, սակայն բոլոր անդամները պետք է ծանոթանան հայտատուի պայմաններին և տան իրենց համաձայնությունը: Անդամակցելու գործընթացը բարդ է և կարող է երկար տևել: Ամենակարճ անդամակցության գործընթացը տևել է 34 ամիս (Ղրղզստան), իսկ ամենաերկարը՝ 123 ամիս (Բուլղարիա): Ընդհանուր առմամբ, անդամակցության գործընթացը կարելի է բաժանել 4 հիմնական փուլի.

- կառավարությունը, դիմելով անդամակցության համար, պետք է ԱՀԿ տեղեկություններ ներկայացնի իր առևտրային և տնտեսական քաղաքականության վերաբերյալ, որը ուսումնասիրվում է տվյալ երկրի անդամակցության առնչությամբ ստեղծված Աշխատանքային խմբի կողմից,
- Աշխատանքային խմբի կողմից տվյալ երկրի առևտրային ռեժիմի ուսումնասիրությունից հետո, հավակնող և ԱՀԿ անդամ երկրների միջև սկսվում են երկկողմ բանակցություններ, որոնք վերաբերում են մաքսադրույքներին, շուկա մուտք գործելու և այլ խնդիրների,
- շուկա մուտք գործելու վերաբերյալ երկկողմ բանակցությունների ավարտից հետո Աշխատանքային խումբը ամփոփում է տվյալ երկրի անդամակցության պայմանները,
- վերջնական փաթեթը ներկայացվում է ԱՀԿ գլխավոր խորհրդին, և եթե ԱՀԿ անդամների 2/3-ը կողմ է քվեարկում, ապա տվյալ երկիրը կարող է հաստատել համաձայնագիրը և դառնալ ԱՀԿ անդամ:

Բոլոր երկրները, որոնք անդամակցել կամ անդամակցելու են ԱՀԿ-ին Ուրուգվայի ռաունդից հետո, պետք է ավելի շատ պարտա-

վորություններ ընդունեն, քան այն երկրները, որոնք անդամակցել են այդ ռաունդից առաջ: Ուրուգվայի ռաունդից հետո ԱՀԿ-ին անդամակցելու հիմնական պահանջներն են.

- տնտեսության մեջ պետության միջամտության աստիճանի, օրինակ՝ պետական ձեռնարկությունների թվաքանակի (ներառյալ պետական առևտրային ձեռնարկությունները) և գների վերահսկման վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ներկայացում,
- ԱՀԿ պահանջների ամբողջական կատարում՝ ներմուծման արտոնագրման, մաքսադրույքների, առևտրի տեխնիկական սահմանափակումների բնագավառներում,
- անդամ երկրներին «առավել բարենպաստ կարգավիճակով երկրի» (MFN-Most Favoured Nation) ռեժիմի տրամադրում,
- ԱՀԿ կողմից արգելվող բաժնեմասերի (քվոտաների) վերացում, իսկ այլ բաժնեմասերի առկայության դեպքում՝ այդ մասին տեղեկացում,
- արտահանման լրահատկացումների վերացում,
- անդամ երկրների ներդրումային դիրքի մասին տեղեկությունների տրամադրում և առևտրին վերաբերվող գիտական հեղինակային իրավունքների պայմանագրի ընդունում:

Բացի այդ, գոյություն ունեն նաև ԱՀԿ կողմից ներկայացվող ավանդական պահանջներ, օրինակ՝ ապրանքների համար կիրառվող ցածր մաքսադրույքների, ծառայությունների ոլորտում օտարերկրյա ձեռնարկությունների համար բարենպաստ պայմանների ստեղծման և գյուղատնտեսության ոլորտում պետության օժանդակության ցածր մակարդակի վերաբերյալ: Հարկ է նշել, որ այս պարտավորությունների իրական վիճակը որոշվում է բանակցությունների վերջնական արդյունքում:

### 3.1. Հայաստանի և հարևան երկրների անդամակցության գործընթացը

1995 թվականին **Հայաստանը** իր Արտաքին առևտրի հուշագիրը ներկայացրեց ԱՀԿ Քարտուղարություն, որտեղ մանրամասն շարադրված էր Հայաստանի տնտեսական վիճակը և օրենսդրա-

կան դաշտը: 2002 թ. դեկտեմբերի 10-ին ԱՀԿ գլխավոր խորհուրդը իր հերթական նստաշրջանում ընդունեց Հայաստանի անդամակցության փաթեթը, իսկ 2003թ. փետրվարի 5-ին Հայաստանը դարձավ ԱՀԿ լիիրավ անդամ՝ լինելով յոթերորդը նախկին Խորհրդային Միության երկրներից: Ներկայիս ԱՊՀ երկրներից Ղրղզստանն ԱՀԿ-ին անդամակցել է 1998թ. դեկտեմբերի 20-ին, Լատվիան՝ 1999թ. փետրվարի 10-ին, Էստոնիան՝ 1999թ. նոյեմբերի 13-ին, Վրաստանը՝ 2000թ. հունիսի 14-ին, Լիտվան՝ 2001թ. մայիսի 31-ին, Մոլդովան՝ 2001թ. հուլիսի 26-ին:

Հարկ է նշել, որ ԱՀԿ-ին անդամակցության գործընթացի վերջին փուլում Թուրքիայի պահանջով Հայաստանը ընդունեց հատուկ մի պարտավորություն, որը Հայաստանի՝ ԱՀԿ-ին անդամակցության պայմանների անբաժանելի մաս է հանդիսանում: Այդ պարտավորությունը հիմնականում պարունակում է հետևյալ 3 կետերը.

- ԱՀԿ համաձայնագրերի դրույթները կիրառվելու են միայն Հայաստանի Հանրապետության՝ Միավորված ազգերի կազմակերպության կողմից ճանաչված տարածքի նկատմամբ,
- Հայաստանը չի ձեռնարկի որևէ ուղղակի կամ անուղղակի գործողություն, որը կարող է խոչընդոտել կամ դանդաղեցնել Ադրբեջանի անդամակցության գործընթացը,
- ԱՀԿ կառույցը որևէ ուղղակի կամ անուղղակի ձևով չի օգտագործվի՝ բացասաբար ազդելու ընթացող խաղաղության բանակցությունների գործընթացի վրա:

Հայաստանի անդամակցության գործընթացը երկար տևեց, քանի որ առկա էին կառուցվածքային խնդիրներ և անցումային տնտեսությանը բնորոշ բարդություններ: Օրինակ, ԱՀԿ անդամ մի քանի երկրներ դժգոհեցին Հայաստանում իրականացվող օրենսդրական բարեփոխումների դանդաղ ընթացքից: Արդյունքում՝ Ազգային Ժողովը ընդունեց մի շարք օրենքներ, որոնք համապատասխանում էին ԱՀԿ պահանջներին, օրինակ՝ մաքսադրույքների, հարկերի, մտավոր սեփականության, արտահանման և ներմուծման, արտոնագրման բնագավառներում: Ընդունված նոր օրենքները ապահովում են այնպիսի օրենսդրական դաշտ, որը կխթանի օտարերկրյա ապրանքների և ծառայությունների մուտք գործելու

հնարավորությունը հայկական շուկա և նպաստավոր պայմաններ կստեղծի Հայաստանի արտաքին առևտրի զարգացման համար:

1991 թվականին անկախություն ձեռք բերելուց հետո Վրաստանի տնտեսական իրավիճակը բավականին բարդացավ, որը արտահայտվեց անձնական եկամուտների նվազումով, ազգային արժույթի արժեզրկումով, արդյունաբերական, գյուղատնտեսական ապրանքների արտադրության նվազումով (1992 թ. ՀՆԱ-ն կրճատվեց 44.8%-ով) և գործազրկության մակարդակի աճով: 1994 թ. Վրաստանում սկսվեց կիրառվել տնտեսության կայունացման ծրագիր, որը նախատեսում էր հարկային և բանկային համակարգի հսկողության բարելավում, առևտրի և արժույթի փոխարժեքի ազատականացում, սեփականաշնորհման քաղաքականության կիրառում և այլն: Այսպիսով, իրականացնելով տնտեսության կայունացման քաղաքականություն՝ կառավարությունը հիմք ստեղծեց երկրի տնտեսական աճի ապահովման համար:

1995 թ. սեպտեմբերին շրջանառության մեջ դրվեց ազգային արժույթը, որի արդյունքում 1996 թ. սղաճի տարեկան մակարդակը նվազեց՝ կազմելով 13.8%: Հարկ է նշել, որ սղաճի տարեկան մակարդակը 1997թ. կազմել է 7.3%, իսկ 1998 - 1999 թթ. համապատասխանաբար՝ 10.7% և 10.9%: Կենտրոնական բանկի վարած կոշտ դրամավարկային քաղաքականության արդյունքում 2001թ. սղաճի տարեկան մակարդակը կազմեց 3.4%՝ 2000թ. 4.6%-ի փոխարեն:

Ներկայումս Վրաստանը արտաքին առևտրային հարաբերություններ ունի ավելի քան 100, առևտրատնտեսական պայմանագրեր է կնքել արտասահմանյան 19 երկրների հետ, իսկ ԱՊՀ 8 երկրների հետ ունի ազատ առևտրի վերաբերյալ պայմանագիր: Վրաստանի արտաքին տնտեսական հարաբերություններում ամենամեծ ձեռքբերումներից մեկը համաշխարհային տնտեսությանը ինտեգրվելն էր, իսկ այդ գործընթացում գլխավոր դերը պատկանում էր ԱՀԿ-ին Վրաստանի անդամակցությանը: 1996թ. հունիսի 26-ին ԱՀԿ գլխավոր խորհրդում Վրաստանին շնորհվեց դիտորդի կարգավիճակ, նույն թվականի հուլիս ամսին վրացական կողմը պաշտոնապես հայտնեց ԱՀԿ-ին անդամակցության իր ցանկությունը: 1999թ. հոկտեմբերի 6-ին Ժնևում՝ ԱՀԿ հերթական նստաշրջանում, ընդունվեց Վրաստանի՝ ԱՀԿ-ին անդամակցության փա-

թեթը: Պաշտոնապես ԱՀԿ անդամ դառնալու համար Վրաստանի Ազգային Ժողովը պետք է հաստատեր անդամակցության պայմանագիրը: Ազգային Ժողովի կողմից պայմանագիրը հաստատվեց 2000թ. հունիսի 14-ին և վավերացումից 30 օր հետո՝ 2000թ. հուլիսի 14-ին, Վրաստանը դարձավ ԱՀԿ 137-րդ լիիրավ անդամը՝ միանալով Ղրղզստանին, Լատվիային և Էստոնիային, որոնք, լինելով նախկին Խորհրդային Միության երկրներ, արդեն ԱՀԿ անդամ էին:

Վրաստանի անդամակցությունը ԱՀԿ-ին թույլ է տալիս լուծել հետևյալ առաջնային խնդիրները.

- Վրաստանի ինտեգրումը առևտրի համաշխարհային համակարգին, ինչը կապահովի տնտեսական և քաղաքական կայունացում, իրավական դաշտի համապատասխանեցում միջազգային նորմերին,
- Վրաստանի ձեռնարկությունների համար շուկաներ մուտք գործելու պայմանների բարելավում, որը կմեծացնի արտահանման ծավալները և կխթանի նաև զբաղվածության ապահովմանը,
- ուղղակի ներդրումների մեծացում:

ԱՀԿ-ին Վրաստանի անդամակցությունը տեղական և օտարերկրյա ներդրողներին ապահովում է երաշխիք, որ երկրում առկա է կայուն, կանխատեսելի տնտեսական քաղաքականություն, որը համապատասխանում է միջազգային նորմերին, և որ երկրում արտադրված ապրանքները միջազգային շուկայում ընդունվում են «առավել բարենպաստ երկրի» ռեժիմով: ԱՀԿ-ին անդամակցելը շատ կարևոր նշանակություն ունեցավ նաև Վրաստանի՝ այլ երկրների հետ ունեցած արտաքին տնտեսական հարաբերությունների բարելավման համար, մասնավորապես՝ ԱՄՆ-ի և ԵՄ երկրների հետ: 2001թ. աշնանը ԵՄ-ն որոշում ընդունեց այլևս Վրաստանին չնայել որպես շուկայական տնտեսություն չունեցող երկիր, որը արդյունք է ԱՀԿ-ին անդամակցության, և որը Վրաստանի համար նշանակում է արտաքին առևտրում որոշակի սահմանափակումների վերացում: Ներկայումս Վրաստանը, լինելով ԱՀԿ լիիրավ անդամ, օգտագործում է իր առավելությունը և վարում է երկկողմ բանակցություններ՝ անդամակցության գործընթացում գտնվող երկրների հետ (Ռուսաստան, Ղազախստան և այլն):

Իրանը ցանկություն էր հայտնել անդամակցելու ԱՀԿ-ին 1996թ. սեպտեմբերին, այնուհետև 1998թ. նորից դիմեց անդամակցության համար, սակայն, այդ ժամանակից ի վեր, ԱՀԿ կողմից ոչ մի քայլ չի արվել անդամակցության բանակցությունները սկսելու համար: ԱՄՆ-ը որոշեց հետաձգել նույնիսկ դիմումի քննարկումը մինչև 2001թ. մայիսը՝ պատճառաբանելով, որ իրեն ժամանակ է անհրաժեշտ Իրանի հետ հարաբերությունների վերանայման համար: Սակայն 2002թ. փետրվարի 15-ին ԱՀԿ գլխավոր խորհրդում ԱՄՆ-ը հայտնեց, որ դեռ ուսումնասիրությունները չեն ավարտվել: Սա, ճիշտ է, կրում է քաղաքական բնույթ, բայց կարելի է խնդրին նայել նաև տնտեսական տեսանկյունից: Իրականում ԱՀԿ անդամ երկրներից ոչ մեկը՝ նույնիսկ ԱՄՆ, չեն կարող արգելք (վետո) դնել մեկ այլ երկրի անդամակցության դիմումին՝ առանց լուրջ պատճառի: Այդուամենայնիվ, ինչու է Իրանի անդամակցության դիմումը անտեսվել ԱՀԿ կողմից: Այստեղ հիմնապատճառը Իրանի վարած քաղաքականությունն է: Իրանի քաղաքական և տնտեսական առաջնորդները պետք է կարողանան լուծել մի շարք ներքին խնդրներ, որպեսզի երկիրը կարողանա անդամակցել ԱՀԿ-ին: Ներքին խոչընդոտներից մեկը մասնավոր հատվածի գործունեության մեջ պետության գերիշխող դերն է, օտարերկրյա ներդրումների նկատմամբ թշնամական վերաբերմունքը: Իրանի արդյունաբերական հատվածը չափազանց երկար ժամանակ է, ինչ գտնվում է պետության հովանավորության տակ, որը հնարավորություն չի տալիս զարգացնել մրցունակ, միջազգային ստանդարտներին համապատասխան արտադրություն:

Իրանի հիմնական առևտրային գործընկերներն են ԵՄ երկրները, Ռուսաստանը, Ճապոնիան: 2001թ. ընդհանուր ներմուծման 37.2%-ը բաժին է ընկել ԵՄ երկրներին, 5.6%-ը՝ Ռուսաստանին, 5%-ը՝ Ճապոնիային, 5.5%-ը՝ Արաբական Միացյալ Էմիրություններին, իսկ ընդհանուր արտահանման կառուցվածքում՝ 21.5%-ը բաժին է ընկել ԵՄ երկրներին, 19.5%-ը՝ Ճապոնիային, 8.6%-ը՝ Չինաստանին, 6.9%-ը՝ Հարավային Կորեային: ԵՄ-ից ներմուծվող հիմնական ապրանքներն են՝ մեքենաները և տրանսպորտային սարքավորումները՝ 59.8%, քիմիական ապրանքները՝ 14.3%, արդյունաբերկան ապրանքները՝ 13.4%: Իրանը ԵՄ երկրներ է արտահանում էներգակիր ապրանքներ՝ հիմնականում նավթ (ԵՄ արտա-

հանած ապրանքների 80%-ը), որը կազմում է ԵՄ էներգակիր ապրանքների ներմուծման 3.8%-ը: 2002թ. հունիսին Եվրոխորհուրդը սկսեց քաղաքական և առևտրային ոլորտներին առնչվող բանակցություններ վարել Իրանի հետ: Բանակցությունները է՛լ ավելի կզարգացնեն առևտուրը Իրանի և ԵՄ երկրների միջև, բացի այդ, ԵՄ-ն հայտնել է, որ տեխնիկական օգնություն է ցույց տալու Իրանին՝ ԱՀԿ-ին անդամակցելու համար:

Թուրքիան սկսել էր ազատականացնել իր արտաքին առևտուրը դեռևս 1980-ական թվականներից՝ նվազեցնելով հովանավորչական քաղաքականությունը և բացելով տնտեսությունը արտաքին ներդրումների համար: Այս գործընթացը ավելի ամրապնդվեց ԱՀԿ ստեղծմամբ (հարկ է նշել, որ Թուրքիան հանդիսանում է ԱՀԿ հիմնադիր անդամ և կազմակերպությանն անդամակցում է 1995թ. մարտի 26-ից): Բաց շուկայական տնտեսություն ստեղծելու գործընթացում մեծ դեր խաղաց նաև 1996թ. հունվարին ԵՄ հետ Մաքսային միության ստեղծումը, որի արդյունքում ոչ ԵՄ երկրների համար կիրառվող հովանավորչության դրույքը 10%-ից իջեցվեց 5%-ի: Համեմատության համար նշենք, որ 1995թ. ԵՄ երկրներից և Եվրոպական ազատ առևտրի միության (EFTA) երկրներից ներմուծվող արդյունաբերական ապրանքների համար կիրառվում էր 6% մաքսադրույք, իսկ ներկայումս այդ ապրանքները 0% մաքսադրույքով են ներմուծվում Թուրքիա: Սակայն Թուրքիան ներմուծվող գյուղատնտեսական և սննդի արտադրատեսակների համար կիրառում է բարձր մաքսադրույքներ: Այդ քաղաքականությունը պատճառաբանվում է այլ երկրների կողմից այդ ապրանքատեսակների գծով տրամադրվող արտահանման լրահատկացումներով: Բարձր մաքսադրույքներ են կիրառվում նաև ներմուծվող ոգելից խմիչքների նկատմամբ:

ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը կարող է կարևոր գործոն հանդիսանալ ներկայումս լայն քննարկման առարկա դարձած հայ-թուրքական ուղղակի տնտեսական կապերի զարգացման խնդիրների լուծման համար: Թուրքիան, ինչպես նաև արդեն Հայաստանը ԱՀԿ անդամ են, և այդ հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ երկու երկրների միջև հետագա քաղաքական և տնտեսական կապերի զարգացման համար, ինչի օրինակ կարող են լինել վերջին շրջանում հայ-թուրքական սահմանի բացման

քննարկումները: Մինչև ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը, հայ-թուրքական սահմանի բացումը շատ դժվար էր պատկերացնել, սակայն Հայաստանի անդամակցությունից հետո երկու երկրներն էլ կարծես գիտակցում են սահմանի բացումից սպասվելիք երկկողմանի տնտեսական օգուտները: Սահմանի բացումը իհարկե և՛ դրական, և՛ բացասական հետևանքներ կունենա Հայաստանի տնտեսության համար: Սակայն հաշվի առնելով ներկայիս շրջափակված վիճակը և այլընտրանքային տարբերակների բացակայությունը՝ կարել է ասել, որ սահմանի բացումը իրականում շատ ավելի դրական ազդեցություն կունենա, քան՝ բացասական[21]:

### 3.2. Հայաստանի՝ ԱՊՀ հիմնական գործընկեր երկրների անդամակցության գործընթացը

**Ռուսաստանը** ԱՀԿ-ին անդամակցելու իր ցանկությունն է հայտնել 1993թ., սակայն ակտիվ բանակցությունները և քննարկումները սկսվել են միայն մի քանի տարի անց: Ներկայումս Ռուսաստանը գտնվում է անդամակցության գործընթացի վերջնական փուլում է, այսինքն՝ պետք է կատարի մի շարք օրենսդրական բարեփոխումներ, իսկ Ռուսաստանի և այլ երկրների միջև անհամաձայնությունների առկայության պատճառով փուլը կարող է երկար տևել:

Ռուսաստանի և այլ ԱՊՀ երկրների համար ԱՀԿ-ին անդամակցության գործընթացը շատ անսովոր պայմաններով է ընթանում: Ռուսաստանի դեպքը անսովոր է, քանի որ, երբ Ռուսաստանը ցանկություն հայտնեց ԱՀԿ-ին անդամակցելու համար, նրա տնտեսությունը չուներ ավանդական ոչ պլանային տնտեսության կառուցվածք: Մի շարք հատվածներ կամ ծառայություններ գոյություն չունեին և կարևոր տնտեսական որոշ կարգավորումներ օրենսդրորեն չէին սահմանվել: Հարկ է նշել, որ նույնիսկ հիմա մի շարք ոլորտներում Ռուսաստանի օրենսդրական դաշտը ձևավորված չէ: Այս վիճակը ուղղակի ազդեցություն է ունենում անդամակցության գործընթացի վրա: Դա իր ազդեցությունն է թողնում տնտեսության

---

[21] *Տե՛ս Թորոսյան Թ. Հայաստան-Թուրքիա. առևտրատնտեսական կապեր, Երևան, 2001:*

վրա, և քանի որ գրեթե բացակայում են ընդունված միջազգային նորմերը, սկզբունքները, ապա իշխանությունը՝ տարբեր մակարդակներում, գործում է սեփական հայեցողությամբ: Արդյունքում, պաշտոնական օրենքների ընդունումից հետո էլ դրանցից շատերը չեն կիրառվում: Այդ է պատճառը, որ մի շարք անդամ երկրներ թերահավատորեն են նայում մոտ ապագայում Ռուսաստանի կողմից իր պարտականությունների կատարմանը:

Անդամակցության գործընթացի մեկ այլ խնդիր առնչվում է այն փաստի հետ, որ, ի տարբերություն շատ այլ երկրների, ԱՀԿ-ին Ռուսաստանի անդամակցությունը չի առաջնորդվում առևտրի ազատականացմամբ: Ռուսաստանն իր միջազգային առևտուրը ազատականացրեց դեռ 1990թ. կեսերին՝ ԱՄՀ կայունացման ծրագրի շրջանակներում: Գրեթե բոլոր բաժնեմասերը (քվոտա) հանվել են, իսկ մաքսային սակագների մեծ մասի մակարդակը 20%-ից ցածր է սահմանվել: Ռուսաստանում առևտրի ազատականացումը առաջնորդվեց տնտեսության անկումով և, մի շարք տնտեսագետների կարծիքով, անկման գլխավոր պատճառներից մեկը առևտրի ազատականացումն էր: Ներկայումս Ռուսաստանում նկատվում է հովանավորչական քաղաքականության ակտիվացում և ԱՀԿ-ին անդամակցության գործընթացի տվյալ փուլում մի շարք լոբբիստական խմբեր կառավարությունից պահանջում են մաքսավճարի դրույքների բարձրացում: Այսպիսով, արտաքին բանակցությունների դժվարությունները, կապված մաքսավճարի դրույքների իջեցման հետ, զուգորդվում են այդ բնագավառում ընթացող ներքին բանակցությունների դժվարությունների հետ:

Բացի մաքսավճարի դրույքաչափերից, անդամակցության բանակցություններին խոչընդոտում է նաև գնային վերահսկողությունը: ԵՄ շատ երկրներ և ԱՄՆ-ը պահանջում են գնային հավասարեցում, որը կազդի նաև ռուսական գազի ներքին և արտաքին վաճառքի վրա: Այս պահանջը Ռուսաստանում մեծ դիմադրության է հանդիպում, քանի որ ակնկալվում է, որ դրա կիրառումը մեկ անգամ ևս մեծ վնասներ կհասցնի Ռուսաստանի արդյունաբերությանը:

Գյուղատնտեսությունը հաջորդ ոլորտն է, որը դժվարացնում է Ռուսաստանի անդամակցությունը: Շատ երկրներ պահանջում են գյուղատնտեսության ոլորտում Ռուսաստանի կողմից հայցվող

աջակցության նվազեցում, սակայն դա ևս չի լուծում բոլոր խնդիրները, քանի որ Ռուսաստանի գյուղատնտեսության մեծ մասը դեռևս պետության ձեռքին է, և շատ դժվար է Ռուսաստանի գյուղատնտեսության ոլորտի աջակցությունը իրականացնել ԱՀԿ կողմից ընդունված լրահատկացումների չափով: Այսպիսով, Ռուսաստանը պետք է գյուղատնտեսության ոլորտին իր աջակցությունը համապատասխանեցնի ԱՀԿ գյուղատնտեսության համաձայնագրի (WTO Agreement on Agriculture) հետ և նախքան անդամակցությունը վերացնի գյուղատնտեսական ապրանքների արտահանմանը տրվող լրահատկացումները:

Ծառայությունների ոլորտը բանակցությունների ամենադժվար մասն է: Պլանային տնտեսության ժամանակ գոյություն չուներ ֆինանսական հատված և շատ ծառայությունների տեսակներ կամ նոր են առաջանում, կամ առաջացել են վերջերս: Դրա հիման վրա ներկայումս Ռուսաստանում լայն տարածում է գտել լոբբիստական խմբերի գործունեությունը, և որպես գաղափարախոսություն ու պաշտպանական միջոց օգտագործվում է «Նոր ստեղծվող ձեռնարկություն» հասկացությունը: Այդ պատճառով Ռուսաստանը պահանջում է մի շարք ծառայությունների գծով օտարերկրյա մրցակցության սահմանափակում՝ տեղական ոլորտների զարգացման համար: Բացի այդ, Ռուսաստանը նաև պահանջում է որոշակի ոլորտներում պետական մենատիրության առկայության հնարավորություն:

Ընդհանուր առմամբ, հիմնական արդյունքները ի հայտ կգան ԱՀԿ իրավական ակտերի ու նորմերի ընդունումից և ծառայությունների հատված մուտք գործելու հնարավորության մեծացումից հետո: Ապրանքների առևտրի ազատականացումը հավանաբար շատ ավելի թույլ արդյունք կունենա, քանի որ առևտրի հիմնական ազատականացումը Ռուսաստանում արդեն կատարվել է: Սակայն ԱՀԿ-ին անդամակցությունը ակնկալում է, որ Ռուսաստանը պետք է ընդունի նոր օրենսդրական կարգավորումներ, կամ ապրանքների և ծառայությունների միջազգային առևտրի ոլորտում առկա կարգավորումները դարձնի ավելի թափանցիկ և պարզ: Սա անշուշտ կբարելավի երկրում առկա գործարար մթնոլորտը և դրական ազդեցություն կունենա Ռուսաստանի տնտեսական աճի վրա:

Ապրանքների և ծառայությունների առևտրի ազատականացման արդյունքի վերաբերյալ տարբեր կարծիքներ կան: Ռուսաս-

տանի՝ ԱՀԿ անդամ դառնալու ցանկությունը հիմնականում ավելի քաղաքական բնույթ է կրում, քան՝ տնտեսական: Ներկայումս այս որոշումը լայնորեն քննադատվում է հովանավորչական քաղաքականության կողմնակիցների կողմից, որոնք պնդում են, որ անդամակցությունը կհանգեցնի ՀՆԱ կրճատման: Ըստ որոշ գնահատումների, Ռուսաստանի անդամակցությունը ԱՀԿ-ին պատճառ կդառնա 1%-ով ՀՆԱ կրճատման[22], բացի այդ, կան նաև այլ գնահատումներ՝ ավելի մեծ կրճատման կանխատեսումներով: Սակայն այս գնահատումները և կանխատեսումները հիմնվում են մասնակի հավասարակշռության վրա, որտեղ հաշվի չի առնվում, որ ներմուծման պահանջարկի մեծացումը կարող է փոխհատուցվել արտադրության և արտահանման առաջարկի մեծացմամբ: Այսպիսով, չնայած Ռուսաստանը հասել է ԱՀԿ-ին անդամակցելու բանակցությունների վերջնական փուլին, սակայն շատ խնդիրներ դեռ մնում են չլուծված, և այս գործընթացը կարող է շատ ավելի երկար տևել, քան հաճախ հայտարարվում կամ հրապարակվում է:

ԱՀԿ-ին անդամակցելու իր բանակցությունները **Ուկրաինան** սկսել է 1993 թվականից: Ներկայումս Ուկրաինայի առևտրային քաղաքականությունը դիտարկվում է անդամ երկրների կողմից: Ուկրաինան արդեն ավարտել է երկկողմ բանակցությունները ԱՀԿ անդամ 10 երկրների հետ և, դրան զուգահեռ, ժնևում տեղի ունեցող բանակցությունների ընթացքում ԱՀԿ անդամ երկրները և Ուկրաինան քննարկում են, թե ինչպես պետք է ԱՀԿ օրենքները և նորմերը կիրառվեն ազգային օրենսդրական դաշտում: Անդամակցության բանակցությունների գործընթացը ավարտելու համար Ուկրաինան պետք է բոլոր անդամ երկրների հետ երկկողմ բանակցությունների արդյունքում ձեռք բերի համաձայնություն: ԵՄ-ն այսօր օժանդակում է Ուկրաինային ԱՀԿ-ին անդամակցելու համար՝ տրամադրելով բավականաչափ տեխնիկական օգնություն այդ ոլորտում: Ուկրաինան իրականացնում է տնտեսական և կառուցվածքային բարեփոխումների ծրագրեր, որոնք կբարելավեն գործարարության և ներդրումային ոլորտները: ԱՀԿ-ին անդամակցությունը հնարավորություն կտա ամրապնդելու այդ բարեփոխումները և կխթանի Ուկրաինայի ինտեգրումը միջազգային տնտեսությանը: ԵՄ-ն շահադրդված է Ուկրաինայի անդամակցությամբ,

---

[22] *Russia assesses costs of joining WTO. 2002, «Financial Times», July 18, pg. 4.*

քանի որ ԵՄ սպասվող ընդարձակման արդյունքում Ուկրաինան կդառնա ԵՄ անմիջական հարևան և, ինչու չէ, անդամակցությունը նաև համապատասխան հիմք կհանդիսանա հետագայում ԵՄ անդամ դառնալու համար:

Ի տարբերություն Ռուսաստանի, որի պարագայում, ինչպես տեսանք, անդամակցության ժամանակահատվածի հարցը դեռ անորոշ է, Ուկրաինան, ԱՀԿ մասնագետների կարծիքով, կարող է ԱՀԿ անդամ դառնալ 2004թ. վերջերին կամ 2005թ. սկզբին:

Անկախություն ձեռք բերելուց հետո **Բելառուսի** կառավարությունը ընտրեց այնպիսի սոցիալական կողմնորոշում ունեցող տնտեսական զարգացման ռազմավարություն, որը էականորեն տարբերվում էր այլ անցումային տնտեսություն ունեցող երկրներից: Բելառուսի արտաքին առևտրի մեծ մասը բաժին է ընկնում Ռուսաստանին և ԱՊՀ այլ երկրներին: 2000թ. արտահանումը ԱՊՀ երկրներ կազմել է 4.45 մլրդ ԱՄՆ դոլար [23], մինչդեռ ոչ ԱՊՀ երկրներ արտահանումը կազմել է 2.9 մլրդ դոլար[24], միաժամանակ ԱՊՀ երկրներից ներմուծումը կազմել է 6.0 մլրդ դոլար, իսկ ոչ ԱՊՀ երկրներից՝ 2.5 մլրդ դոլար: Այս տվյալները վկայում են, որ Բելառուսը դեռ սերտորեն կապված է նախկին Խորհրդային Միության երկրների, հատկապես Ռուսաստանի հետ: Բելառուսը ձգտում է զարգացնել իր անդամակցության բանակցությունները Ռուսաստանի անդամակցությունից հետո, քանի որ, ինչպես նշվեց, Բելառուսի և Ռուսաստանի միջև գոյություն ունեն սերտ առևտրային կապեր:

1992թ. դեկտեմբերին ՏԱԳՀ-ի գլխավոր խորհրդի կողմից Բելառուսին շնորհվեց դիտորդի կարգավիճակ, 1993թ. սեպտեմբերի 23-ին Բելառուսը ցանկություն հայտնեց անդամակցելու ԱՀԿ-ին, իսկ նույն թվականի հոկտեմբերի 27-ին ստեղծվեց Բելառուսի անդամակցության աշխատանքային խումբը: Ներկայումս Բելառուսն ավարտել է անդամակցության գործընթացի առաջին երկու փուլերը, իսկ Աշխատանքային խումբը ունեցել է մի շարք հանդիպումներ, որոնց ժամանակ քննարկվել են հարցեր՝ կապված գյուղատնտեսության, բարտերային առևտրի, Ռուսաստանի հետ տնտեսական միության ստեղծման, ԱՊՀ այլ երկրների հետ

---

*[23] Աշխատանքում բոլոր տվյալները արտահայտված են ԱՄՆ դոլարով:*
*[24] Աղբյուրը՝ TACIS, Belarus Economic Trends.*

ունեցած համաձայնագրերի, արդյունաբերական լրահատկացումների և այլ ոլորտների հետ: Բելառուսի համար ԱՀԿ-ին անդամակցությունը կարևոր է մի քանի պատճառներով.

- անդամակցությունը կխթանի իրավական դաշտի և շուկայական ինստիտուտների առաջացումը, որոնք կօժանդակեն երկրի միջազգային առևտրի զարգացմանը,
- անդամակցությունը կերաշխավորի շուկաներ մուտք գործելու շատ ավելի լավ պայմաններ,
- և վերջապես՝ անդամակցությունը կօգնի արդյունավետ լուծել առևտրում առաջացող խնդիրները:

### 3.3. Հայաստանի արտաքին առևտուրը հարևան երկրների հետ՝ ԱՀԿ-ին անդամակցությունից առաջ և հետո[25]

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը, լինելով շրջափակման մեջ, շատ սակավ բնական ռեսուրսներով երկիր, հենց սկզբից կարիք ուներ առևտրային գործընկերների: Այդ պատճառով Հայաստանի արտաքին առևտրի հիմնական ուղղությունները եղել են համաշխարհային տնտեսությանը ինտեգրվելը և առևտրի ազատականացումը: Հայաստանը առևտրային հարաբերություններ է հաստատել ավելի քան 100 երկրների հետ և երկկողմ առևտրային պայմանագրեր ունի ոչ միայն ԱՊՀ, այլ նաև մի շարք այլ զարգացած երկրների հետ: Համաշխարհային շուկային ինտեգրվելու գործընթացում մեծ դեր կարող է ունենալ ԱՀԿ-ին անդամակցությունը:

Դիտարկենք, թե ինչպիսին է եղել Հայաստանի արտաքին առևտուրը հարևան երկրների, մասնավորապես՝ Թուրքիայի, Իրանի և Վրաստանի հետ մինչև անդամակցությունը և փորձենք պարզել, թե անդամակցությունից հետո առևտուրը որևէ փոփոխություն կրե՞լ է, թե՝ ոչ (տե՛ս աղյուսակ 3.1): Ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալներով 2003թ.[26] առաջին տեղում է Իրանը՝ 80.4 մլն ԱՄՆ

---

*[25] Ադրբեջանի հետ Հայաստանի արտաքին առևտուրը չի դիտարկվել՝ պաշտոնական տվյալների բացակայության պատճառով:*

*[26] Այստեղ և հետագայում՝ 2003թ. վերաբերող բոլոր տվյալների և հաշվարկների համար հիմք են ընդունվել հունվար-նոյեմբեր ամիսների ցուցանիշները:*

դոլար, երկրորդը Վրաստանը՝ 49.5 մլն ԱՄՆ դոլար և երրորդը Թուրքիան՝ 35.1 մլն ԱՄՆ դոլար:

*Աղյուսակ 3.1*

**ՀՀ արտաքին առևտրատնտեսական հարաբերությունները Իրանի, Վրաստանի և Թուրքիայի հետ 1995-2003 թթ.** *(մլն ԱՄՆ դոլար)*

| Ցուցանիշ | 1995 | 1996 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***Իրան*** | | | | | | | | | |
| Ընդհանուր ապրանքաշրջանառ. | 124.8 | 193.7 | 131.3 | 95.5 | 112.7 | 110.6 | 110.6 | 93.7 | 89.0 |
| Արտահանում | 35 | 43.9 | 42.6 | 31.7 | 34.2 | 27.7 | 32.5 | 31.1 | 22.2 |
| Ներմուծում | 89.8 | 149.8 | 88.7 | 63.8 | 78.5 | 82.9 | 78.1 | 62.4 | 66.8 |
| Տես. կշիռը (%) | 13.3 | 16.8 | 11.6 | 8.5 | 10.9 | 9.3 | 9.1 | 6.2 | 4.6 |
| ***Վրաստան*** | | | | | | | | | |
| Ընդհանուր ապրանքաշրջանառ. | 64.5 | 54 | 49.1 | 37 | 38.1 | 34.9 | 30.8 | 48.7 | 54.1 |
| Արտահանում | 2.7 | 2.8 | 10.7 | 10.2 | 11.2 | 15.4 | 12.4 | 16.9 | 15.9 |
| Ներմուծում | 61.8 | 51.2 | 38.4 | 26.8 | 26.9 | 19.5 | 18.4 | 31.8 | 38.2 |
| Տես. կշիռը (%) | 6.9 | 4.7 | 4.4 | 3.3 | 3.7 | 2.9 | 2.5 | 3.2 | 2.8 |
| ***Թուրքիա*** | | | | | | | | | |
| Ընդհանուր ապրանքաշրջանառ. | 5.2 | 12.2 | 45.5 | 31.5 | 41.2 | 41 | 34.8 | 38.8 | 39.1 |
| Արտահանում | 2.6 | 6.0 | 7.1 | 2.9 | 1.1 | 1.5 | 1.1 | 1.4 | 1.0 |
| Ներմուծում | 2.6 | 6.2 | 38.4 | 28.6 | 40.1 | 39.5 | 33.7 | 37.9 | 38.1 |
| Տես. կշիռը (%) | 0.5 | 1.0 | 4.0 | 2.8 | 3.9 | 3.4 | 2.8 | 2.5 | 2.0 |

Հայաստանի արտաքին առևտուրը **Իրանի** հետ վերջին տարիներին ունեցել է նվազման միտում: 1995 - 2002 թթ. ընկած ժամանակաշրջանում ամենամեծ ցուցանիշը գրանցվել է 1996թ.՝ 193.7 մլն ԱՄՆ դոլար, երբ արտահանումը կազմել է 43.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 149.9 մլն ԱՄՆ դոլար: 1997 թվականից նկատված նվազումն ունի մի առանձնահատկություն՝ արտահանման միջին արժեքը կազմել է 37.1 մլն ԱՄՆ դոլար[27], իսկ նվազման հիմանական պատճառը ներմուծվող ապրաքների ծավալների կրճատումն է: 1998 - 2002 թթ. Իրանի հետ ընդհանուր ապրանքաշրջանառությունը, միջին հաշվով, կազմել է 104.6 մլն ԱՄՆ դոլար: ԱՀԿ անդամակցությունից հետո՝ 2003թ., Հայաստանի ընդհանուր

[27] *Արտահանման միջին արժեքը հաշվարկված է 1997-2002թթ. համար:*

ապրանքաշրջանառությունը Իրանի հետ կազմել է 89 մլն ԱՄՆ դոլար, որից՝ արտահանումը կազմել է 22.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 66.8 մլն ԱՄՆ դոլար: 2002թ. հետ համեմատած՝ արտահանումը նվազել է մոտ 28.6%-ով, իսկ ներմուծումը աճել է 7%-ով: Ինչպես տեսնում ենք, ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունից հետո, ընդհանուր առմամբ, կրճատվել է ընդհանուր ապրանքաշրջանառությունը Իրանի հետ՝ հիմնականում պայմանավորված արտահանման կրճատմամբ, իսկ արտահանման նման կրճատումը կարելի է բացատրել նրանով, որ ԱՀԿ-ին անդամակցությունը Հայաստանին ապահովում է արտահանման նոր շուկաներ՝ ավելի լավ պայմաններով:

1995 - 2002 թթ. ընկած ժամանակաշրջանում և ԱՀԿ-ին անդամակցությունից հետո՝ 2003թ., Հայաստանի արտաքին առևտուրը **Վրաստանի** հետ կրել է կառուցվածքային փոփոխություններ: Նշված ժամանակաշրջանը պայմանականորեն բաժանելով հատվածների՝ դիտարկենք երկու երկրների առևտրատնտեսական փոխհարաբերությունները մինչև ԱՀԿ-ին անդամակցության և անդամակցությունից հետո ընկած ժամանակահատվածներում: Մինչև ԱՀԿ-ին Վրաստանի անդամակցելը, Հայաստանի արտաքին առևտուրը Վրաստանի հետ ունեցել է նվազման միտում, ընդ որում՝ նվազման դինամիկան եղել է այնպիսին, որ աճել են արտահանման և նվազել՝ ներմուծման ծավալները: 2000 թ. ընդհանուր ապրանքաշրջանառությունը Վրաստանի հետ կազմել է 34.9 մլն ԱՄՆ դոլար: 1995 թ. համեմատությամբ, 2000 թ. մոտ 4.5 անգամ աճել է Վրաստան արտահանվող ապրանքների ծավալը՝ կազմելով 15.4 մլն ԱՄՆ դոլար և, հակառակ դրան, մոտ 68%-ով նվազել են ներմուծման ծավալները՝ կազմելով 19.5 մլն ԱՄՆ դոլար: ԱՀԿ-ին Վրաստանի անդամակցությունից հետո, արդեն 2002թ., զգալի աճել է Հայաստանի ապրանքաշրջանառությունը Վրաստանի հետ՝ կազմելով 48.7 մլն ԱՄՆ դոլար, ինչը, սակայն, հիմնականում պայմանավորվել է Վրաստանից ներմուծվող ապրանքների ծավալների մեծացմամբ (2000թ. համեմատ՝ մոտ 72.8%-ով) 2000 – 2002 թթ. Վրաստան արտահանվող ապրանքների միջին արժեքը կազմել է 14.9 մլն ԱՄՆ դոլար: Այսպիսով, կարելի է ասել, որ ԱՀԿ-ին Վրաստանի անդամակցությունից հետո Հայաստանի ընդհանուր առևտրաշրջանառությունը Վրաստանի հետ մեծացել է: Սակայն

այն չի ազդել Վրաստան արտահանվող ապրանքների ծավալների վրա, քանի որ, ինչպես նշվեց, 2000թ. Վրաստան արտահանվող ապրանքների միջին արժեքը կազմել է 15.4 մլն ԱՄՆ դոլար, իսկ անդամակցությունից հետո՝ 2000 - 2002 թթ.՝ 14.9 մլն ԱՄՆ դոլար:

ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունից հետո՝ 2003թ., Հայաստանի արտաքին առևտուրը Վրաստանի հետ կազմել է 54.1 մլն ԱՄՆ դոլար, որից՝ արտահանումը կազմել է 15.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 38.2 մլն ԱՄՆ դոլար: 2002թ. համեմատ, 2003թ. արտահանումը նվազել է 5.9%-ով, իսկ ներմուծումը աճել է 20.1%-ով: Այսպիսով, ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը, կարելի է ասել, ազդեցություն չի թողել Վրաստանի հետ արտաքին առևտրի վրա: Ներմուծման աճը կարելի է բացատրել 2001թ. սկսված՝ Վրաստանից ներմուծվող ապրանքների աճի միտումով, իսկ արտահանումը, 2000-2002թթ. արտահանման միջին արժեքի համեմատ, էական փոփոխության չի ենթարկվել:

Չնայած Հայաստանի և **Թուրքիայի** միջև առկա քաղաքական ոչ կայուն վիճակին՝ Հայաստանն այսօր բավականաչափ առևտրատնտեսական կապեր ունի Թուրքիայի հետ, որը կարող է է՛լ ավելի զարգանալ, եթե երկու երկրների միջև լուծվեն քաղաքական անհամաձայնությունները: Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության շարժը Թուրքիայի հետ ունեցել է տատանողական բնույթ: Սկզբնական շրջանում՝ 1995-1997թթ., այն զգալի տեմպերով աճել է՝ 1997թ. կազմելով 45.5 մլն ԱՄՆ դոլար, որից՝ արտահանումը կազմել է 7.1 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 38.4 մլն ԱՄՆ դոլար: Վերջինս 1995 - 2002 թթ. ընկած ժամանակահատվածում գրանցված ամենամեծ ցուցանիշն է: Այստեղ հարկ է նշել, որ 1995-1997 թթ. Թուրքիայի հետ ընդհանուր ապրանքաշրջանառությունը ուղեկցվել է միաժամանակ և՛ արտահանման, և՛ ներմուծման աճով: Սկսած 1998թ.՝ Թուրքիայի հետ Հայաստանի արտաքին առևտուրը հիմնականում աչքի է ընկել ներմուծվող ապրանքների անհամեմատ մեծ տեսակարար կշռով: ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունից հետո՝ 2003 թվականին, ընդհանուր ապրանքաշրջանառությունը Թուրքիայի հետ կազմել է 39.1 մլն ԱՄՆ դոլար, որից՝ արտահանումը կազմել է 1 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 38.1 մլն ԱՄՆ դոլար: 2002 թ. համեմատ, 2003 թ. արտահանումը նվազել է 28.6%-ով, իսկ ներմուծումը գրեթե մնացել է անփոփոխ՝ աճելով

0.5%-ով: Այսպիսով, ինչպես և Վրաստանի դեպքում, կարող ենք ասել, որ ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը ոչ մի էական ազդեցություն չի ունեցել Թուրքիայի հետ արտաքին առևտրում, քանի որ ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ արտահանման նվազումը սկսվել էր դեռ 1998թ., իսկ 1998-2002թթ. ընկած ժամանակահատվածում ներմուծման միջին արժեքը եղել է 35.9 մլն ԱՄՆ դոլար: Թուրքիա արտահանվող ապրանքների նման ցածր մակարդակը թերևս կարելի է բացատրել այն հանգամանքով, որ ներկայումս Հայաստանում զարգանում է թեթև արդյունաբերությունը, իսկ Թուրքիան կիրառում է բարձր հովանավորչական քաղաքականություն ներմուծվող սննդամթերքի, գյուղատնտեսական արտադրանքի և ոգելից խմիչքների նկատմամբ:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունն իր ազդեցությունն է թողել Իրանի հետ Հայաստանի արտաքին առևտրի վրա, որը արդյունք է Հայաստանի համար առավել բարենպաստ պայմաններով շուկաների ձեռքբերման: Հակառակ դրան, Վրաստանի և Թուրքիայի հետ արտաքին առևտուրը գրեթե մնացել է անփոփոխ: ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը և նրա արտաքին առևտրի այդպիսի համեմատաբար կայուն վիճակը հարևան՝ արդեն ԱՀԿ անդամ Վրաստանի և Թուրքիայի հետ կարելի է բացատրել մի շարք գործոններով: Սակայն այստեղ էականը ժամանակի գործոնն է, քանի որ դիտարկեցինք ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունից մեկ տարի հետո ընկած ժամանակաշրջանը և այդպիսի կարճ ժամանակշրջանի ցուցանիշներով դժվար է որոշակի եզրակացություններ կատարել:

### 3.4. Հայաստանի արտաքին առևտուրը ԱՊՀ հիմնական գործընկեր երկրների հետ՝ ԱՀԿ-ին անդամակցությունից առաջ և հետո

Անկախացումից հետո Հայաստանը ԱՊՀ երկրներից սերտ տնտեսական և քաղաքական հարաբերություններ է պահպանել **Ռուսաստանի** հետ: Դիտարկենք Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունները Ռուսաստանի հետ և պարզենք, թե ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը ազդեցություն ունեցե՞լ է Ռուսաստանի հետ արտաքին առևտրի վրա:

1995 - 2002 թթ. Հայաստանի արտաքին առևտրի շարժը Ռուսաստանի հետ պարզելու համար պայմանականորեն նշված ժամանակաշրջանը բաժանենք հետևյալ երեք հատվածների՝ 1995-1997թթ., երբ, ընդհանուր առմամբ, արտաքին առևտուրը ունեցել է աճի միտում (1997թ., 1995թ. համեմատ աճել է 16.1%-ով՝ կազմելով 257.7 մլն ԱՄՆ դոլար), 1998-2000թթ., երբ Ռուսաստանի հետ արտաքին առևտուրը ունեցել է նվազման միտում (2000թ., 1997թ. համեմատ նվազել է 31.4%-ով) և 2001-2002թթ., երբ Ռուսաստանի հետ արտաքին առևտրում կրկին նկատվում է զգալի աշխուժացում (2002թ., 2000թ. համեմատ, աճել է 47.9%-ով):

*Աղյուսակ 3.2*

**ՀՀ արտաքին առևտրատնտեսական հարաբերությունները Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի հետ 1995-2003թթ.** *(մլն ԱՄՆ դոլար)*

| Ցուցանիշ | 1995 | 1996 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ռուսաստան** | | | | | | | | | |
| Ընդհանուր ապրանքաշրջանառ. | 222 | 221.5 | 257.7 | 222.5 | 172 | 176.6 | 230.8 | 261.2 | 302.2 |
| Արտահանում | 86.9 | 96.1 | 63.0 | 39.9 | 33.8 | 44.5 | 60.5 | 64.8 | 94.5 |
| Ներմուծում | 135.1 | 125.4 | 196.7 | 182.6 | 138.2 | 132.1 | 170.3 | 196.4 | 207.7 |
| Տես. կշիռը (%) | 23.8 | 19.2 | 22.8 | 19.8 | 16.6 | 14.9 | 18.9 | 17.4 | 15.6 |
| **Ուկրաինա** | | | | | | | | | |
| Ընդհանուր ապրանքաշրջանառ. | 9.9 | 16.7 | 15.0 | 12.8 | 10.0 | 15.6 | 33.0 | 54.0 | 51.3 |
| Արտահանում | 4.5 | 4.8 | 3.5 | 3.9 | 2.1 | 3.3 | 10.9 | 8.1 | 7.3 |
| Ներմուծում | 5.4 | 11.9 | 11.5 | 8.9 | 7.9 | 12.3 | 22.1 | 45.9 | 44.0 |
| Տես. կշիռը (%) | 1.1 | 1.4 | 1.3 | 1.1 | 0.9 | 1.3 | 2.7 | 3.6 | 2.6 |
| **Բելառուս** | | | | | | | | | |
| Ընդհանուր ապրանքաշրջանառ. | 2.7 | 3.4 | 4.4 | 2.5 | 1.7 | 1.5 | 2.3 | 3.5 | 7.1 |
| Արտահանում | 0.8 | 1.2 | 1.1 | 0.8 | 1.1 | 0.9 | 1.2 | 1.5 | 2.0 |
| Ներմուծում | 1.9 | 2.2 | 3.3 | 1.7 | 0.6 | 0.6 | 1.1 | 2.0 | 5.1 |
| Տես. կշիռը (%) | 0.2 | 0.3 | 0.4 | 0.2 | 0.1 | 0.1 | 0.2 | 0.2 | 0.4 |

Առաջին ժամանակահատվածում արտաքին առևտրի աճին հիմնականում բնորոշ է եղել ներմուծման ծավալների ավելացումը և արտահանման կրճատումը: Երկրորդ ժամանակահատվածում նվազումը հետևանք է արտահանման շարունակական կրճատման և, դրա հետ մեկտեղ, նաև ներմուծման ծավալների նվազման: Եվ, վերջապես, երրորդ ժամանակահատվածի ընթացքում աճը պայմանավորվել է արտահանման և ներմուծման ծավալների զգալի ավելացմամբ: ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունից հետո, Հայաստանի արտաքին առևտուրը Ռուսաստանի հետ ունեցել է հետևյալ տեսքը. 2003թ.՝ 302.3 մլն ԱՄՆ դոլար, որից՝ արտահանումը կազմել է 94.5 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 207.7 մլն ԱՄՆ դոլար: Նշենք, որ նախորդ տարվա համեմատ, 2003թ. արտահանումը աճել է 45.8%-ով, իսկ ներմուծումը՝ 5.7%-ով: Այստեղ ուշագրավ է արտահանման նման աճը, քանի որ Ռուսաստանը ԱՀԿ անդամ երկիր չէ, որպեսզի այն բացատրվի Հայաստանի համար ավելի լավ պայմաններով նոր շուկայի ձեռք բերմամբ և, բացի այդ, արդեն դիտարկել ենք այն փաստը, որ Ռուսաստանը ընդունել էր և շարունակում է վարել ազատական արտաքին առևտրի քաղաքականություն:

**Ուկրաինայի** հետ Հայաստանի արտաքին առևտուրը ունեցել է տատանողական բնույթ: 1995 - 2002 թթ. ժամանակաշրջանը կրկին պայմանականորեն կարելի է բաժանել երեք ժամանակահատվածների: 1995 - 1996 թվականներին արտաքին առևտուրը Ուկրաինայի հետ աճել է՝ 1996 թ. կազմելով 16.7 մլն ԱՄՆ դոլար, որից արտահանումը՝ 4.8 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 11.9 մլն ԱՄՆ դոլար: 1997-1999թթ. ընթացքում նկատվել է արտաքին առևտրի նվազման միտում (1999 թ.՝ 10 մլն ԱՄՆ դոլար): 2000 - 2002 թթ. (ինչպես և Ռուսաստանի դեպքում) Հայաստանի արտաքին առևտուրը Ուկրաինայի հետ աճել է զգալի տեմպերով՝ 2002թ. կազմելով 54 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ արտահանումը կազմել է 8.1 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 45.9 մլն ԱՄՆ դոլար: Ի տարբերություն Ռուսաստանի, առաջին ժամանակահատվածում ավելացել են և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալները, սակայն աճը հիմնականում պայմանավորված է եղել ներմուծման ծավալների մեծացմամբ: Երկրորդ ժամանակահատվածում Ուկրաինայի հետ արտաքին առևտրի նվազումը, Ռուսաստանի նման, հետևանք է

եղել և՛ արտահանման, և՛ ներմուծման կրճատման: Եվ, վերջապես, երրորդ ժամանակահատվածում աճը պայմանավորված է եղել հիմնականում ներմուծման ծավալների մեծացմամբ: Թեև 2001 թ. ավելացել են նաև արտահանման ծավալները (10.9 մլն ԱՄՆ դոլար), բայց 2002 թ. այն նորից նվազել է (8.1 մլն ԱՄՆ դոլար): 2003 թ. ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունից հետո, արտաքին առևտուրը Ուկրաինայի հետ կազմել է 51.3 մլն ԱՄՆ դոլար, ընդ որում՝ արտահանումը կազմել է 7.3 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 44 մլն ԱՄՆ դոլար (2002թ. համեմատ արտահանումը նվազել է 9.8-ով, իսկ ներմուծումը՝ 4.1%-ով): Փաստորեն անդամակցությունից հետո Ուկրաինայի հետ արտաքին առևտուրը կրճատվել է: Դա կարելի է բացատրել մեր երկրի արտաքին առևտրի ուղղվածության փոփոխությամբ, քանի որ Հայաստանը շատ ավելի հակված է առևտուր կատարել ԱՀԿ անդամ երկրների հետ՝ առևտրի ավելի բարենպաստ պայմաններից ելնելով:

**Բելառուսի** հետ Հայաստանի արտաքին առևտրի ծավալները, ի տարբերություն Ռուսաստանի և Ուկրաինայի, արժեքային առումով, շատ ավելի պակաս են: 1995 - 1997 թվականներին երկու երկրների միջև առևտրաշրջանառությունը ունեցել է աճի միտում (տե՛ս աղյուսակ 3.2): 1997թ. այն կազմել է 4.4 մլն ԱՄՆ դոլար, որը դիտարկվող ժամանակաշրջանում գրանցված ամենամեծ ցուցանիշն է, ընդ որում՝ արտահանումը կազմել է 1.1 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 3.3 մլն ԱՄՆ դոլար: Այնուհետև, 1998 թ. սկսած, մինչև 2000 թ. արձանագրվել է նվազում (2000 թ., 1997 թ. համեմատ՝ 65.9%-ով): 2001 թվականից Բելառուսի հետ ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ նորից նկատվել է աճի միտում՝ 2002 թ., 2000 թ. համեմատ, ծավալներն ավելացել են մոտ 1.3 անգամ՝ կազմելով 3.5 մլն ԱՄՆ դոլար: Չնայած, վերը դիտարկված երկրների համեմատությամբ, Հայաստանի արտաքին առևտրաշրջանառությունը Բելառուսի հետ բավականին փոքր է, սակայն վերջին երեք տարիներին, ինչպես Ռուսաստանի և Վրաստանի պարագայում, աճ է գրացվել: 2003 թ. ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունից հետո, Բելառուսի հետ արտաքին առևտուրը ունեցել է հետևյալ տեսքը՝ արտահանված ապրանքների ծավալը կազմել է 2 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 5.1 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ արտահանումը աճել է 33.3%-ով, իսկ ներմուծումը՝ մոտ

1.5 անգամ): Այսպիսով, ԱՀԿ-ին անդամակցությունից հետո, Հայաստանի արտաքին առևտրաշրջանառությունը Բելառուսի հետ մեծացել է՝ սակայն հիմնականում պայմանավորված ներմուծման ավելացմամբ: Արտահանման և ներմուծման միաժամանակ մեծացումը, ինչպես և Ռուսաստանի դեպքում, չի կարող պայմանավորվել ԱՀԿ անդամակցությամբ, քանի որ Բելառուսը ԱՀԿ անդամ չէ և, տվյալ դեպքում էլ, այս երևույթը կարելի է բացատրել Հայաստանի արտաքին առևտրի ուղղվածության փոփոխությամբ: Այսինքն, սկզբնական շրջանում՝ 1995 - 1996 թթ. ժամանակահատվածում, Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունները բավականին սերտ էին ԱՊՀ երկրների հետ, սակայն հետագայում Հայաստանի արտաքին տնտեսական քաղաքականությունը ձեռք բերեց նոր ուղղություն՝ դեպի ԵՄ երկրներ և Հեռավոր Արևելքի երկրներ: Վերջին մի քանի տարիների ընթացքում զգալիորեն զարգացան Ռուսաստանի հետ տնտեսական հարաբերությունները:

Այսպիսով, ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը էական ազդեցություն չի ունեցել դիտարկված երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի վրա, բայց չպետք է մոռանալ, որ անդամակցությունից անցել է ընդամենը մեկ տարի: Ինչևէ, կարելի է ենթադրել, որ ԱՀԿ-ին անդամակցությունը սկզբնական շրջանում (կարճաժամկետ հատվածում) էականորեն ազդեցություն չի ունեցել Հայաստանի արտաքին առևտրի վրա, քանի որ մինչ այդ էլ Հայաստանը որդեգրել էր ազատական առևտրային քաղաքականություն: Սակայն այստեղ կա մի շատ կարևոր հանգամանք. քանի որ ներկայումս Հայաստանում սկսել է զարգանալ ծառայությունների ոլորտը, ինչը անմիջականորեն առնչվում է ԱՀԿ հետաքրքրության շրջանակներին, ապա դրական արդյունք կարող է երևան գալ ծառայությունների առևտրում (սակայն երկարաժամկետ հատվածում): Երկարաժամկետ հատվածում, ապրանքների առևտրում դրական ադյունք ունենալու համար անհրաժեշտ է, որ Հայաստանում զարգանա տեղական արտադրությունը, որպեսզի տեղական արտադրանքը կարողանա դուրս գալ միջազգային շուկա:

Նախկին Խորհրդային Միության երկրները, որոնք արդեն անդամակցել են ԱՀԿ-ին, ներառյալ Հայաստանը, ընդունել են ազատական առևտրային քաղաքականության ռեժիմ և իրականացրել են մի շարք շուկայական բարեփոխումների ծրագրեր:

Սակայն Ռուսաստանը, Ուկրաինան և Բելառուսը ընդունել են այլ ռազմավարություն, քանի որ այդ երկրների կառավարությունների կարծիքով, անցումային շրջանում անհրաժեշտ է կիրառել հովանավորչական քաղաքականություն՝ տնտեսությունը վերականգնելու համար:

ԱՀԿ-ին անդամակցությունը առևտրի զարգացման համար լայն հնարավորություններ է ընձեռում, սակայն դա չի նշանակում, որ անդամակցությունից բոլոր օգուտները ինքնաբերաբար և միանգամից պետք է ստացվեն՝ հատկապես Հայաստանի նման փոքր երկրի համար: ԱՀԿ-ին անդամակցությունը կարող է օգնել, բայց այն չի երաշխավորում:

Ինչևէ, ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը շատ կարևոր քայլ կարող է հանդիսանալ այլ երկրի հետ տնտեսական հարաբերությունների զարգացման համար, վստահություն ներշնչել երկարաժամկետ ծրագրեր իրականացնելու, օտարերկրյա ներդրումների ներգրավումը խթանելու համար, իսկ կարճաժամկետ հատվածում կարող է առևտրաշրջանառության որոշակի ցուցանիշների նվազում արձանագրվել:

# ԲԱԺԻՆ 4

# ԱՀԿ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՎՐԱ

## 4.1. ՀՀ առևտրային հաշվեկշռի ընդհանուր բնութագիրը

ԱՀԿ-ն միակ միջազգային կառույցն է, որի նպատակը առևտրի ազատ և սահուն ընթացքի ապահովման, «թափանցիկ» և կանխատեսելի կանոնների սահմանման միջոցով ապրանքներ և ծառայություններ արտադրողների, արտահանողների և ներմուծողների գործունեության աջակցությունը և կարգավորումն է: ԱՀԿ-ին անդամակցությունը նպաստում է երկրի ազատ առևտրական և տնտեսական քաղաքականության ձևավորմանն ու ամրապնդմանը, ինչն էլ իր հերթին էական ազդեցություն է ունենում երկրի արտահանման ծավալների աճի, ուստի նաև՝ առևտրային հաշվեկշռի բարելավման վրա:

Յուրաքանչյուր երկրի արտաքին տնտեսական կապերի զարգացման հիմնական նպատակը արտահանման ծավալների աճի կայուն և բարձր տեմպերի ապահովումն է: Փոքր շուկա ունեցող երկրների համար, ինչպիսին նաև Հայաստանն է, արտահանման ծավալների էական ընդլայնումը է՛լ ավելի կարևոր է: Արտահանման ծավալների խթանման տեսանկյունից ԱՀԿ-ին անդամակցությունը կարևորվում է նրանով, որ անդամ 147 երկրների հետ առևտրում սահմանվում են «թափանցիկ» և կանխատեսելի կանոններ, ամրագրված մաքսեր, ազգի առավել բարենպաստության ռեժիմ (ԱԱԲ) և ազգային մոտեցումների կիրառման սկզբունքները:

Հայաստանում առկա են ոլորտներ, արտադրություններ և արտադրատեսակներ, որոնք ունեն համեմատական առավելություններ: Այդ ուղղություններով մասնագիտացումը հանրապետության համար կստեղծի արտաքին առևտրի կառուցվածքի բարելավման իրական հնարավորություններ: Դրան մեծապես կնպաստի նաև ԱՀԿ-ին անդամակցությունը:

Արդյունաբերական արտադրանքի արտահանման ընդլայնման առումով, Հայաստանի մրցակցային թերությունները բավականին

ակնհայտ են: Դրանց պատճառը անմիջական ծով դուրս գալու անհնարինությունն ու քաղաքական պատճառներով առաջացած տրանսպորտային սահմանափակումներն են: Այս սահմանափակումների ազդեցությունը, ըստ որոշ գնահատումների,[28] կազմում է ՀՆԱ 1 - 1,5%-ը: Ներքին շուկայի փոքր տարողությունը հնարավորություն չի տալիս ապահովել արդյունավետ զանգվածային արտադրություն: Այս հանգամանքը ուղղակիորեն թելադրում է կանխատեսվող ապագայում բաց տնտեսական ու ֆինանսական քաղաքականության պահպանման անհրաժեշտությունը, նույնիսկ կարելի է ասել՝ հարկադրվածությունը: Մրցակցային մյուս ակնհայտ թերությունը երկրի տնտեսության, մասնավորապես արդյունաբերության կառուցվածքի անհամապատասխանությունն է առկա աշխարհաքաղաքական պայմաններին: Գոյություն ունեցող տրանսպորտային և էներգետիկ սահմանափակումները թույլ չեն տալիս արդյունավետ օգտագործել մի ամբողջ շարք խոշոր ձեռնարկություններ այն նպատակներին համապատասխան, որոնց համար դրանք կառուցվել կամ կիրառվել են անցյալում:

Չկարգավորված տարածքային հակամարտությունների առկայությունը Հարավկովկասյան տարածաշրջանում, մասնավորապես՝ Ղարաբաղյան հիմնախնդիրը, էականորեն մեծացնում է շրջանում և, մասնավորապես՝ Հայաստանում, ներդրումներ կատարելու քաղաքական ռիսկը:

Մրցակցային այս թերությունների կողքին Հայաստանը ունի նաև մի շարք առավելություններ.

- բավականին մեծածավալ սփյուռքի առկայությունը, որոնց մեծ մասը ապրում են Ռուսաստանում և ԱՄՆ-ում,
- մի շարք մասնագիտությունների գծով բարձրորակ մասնագետների առկայությունը՝ չնայած արտագաղթի պատճառով նրանց թվաքանակը նվազում է,
- բարձրագույն կրթությամբ բնակչության մեծ տեսակարար կշիռը,
- աշխատուժի ցածր արժեքը:

---

[28] *«Հայաստանի կայուն տնտեսական զարգացման քաղաքականություն». ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, UNDP, Երևան, 2003:*

Վերջին առավելությունը կրում է ժամանակավոր բնույթ, և ինչպես մյուս երկրներում, դրա նշանակությունը աստիճանաբար զգալիորեն կնվազի:

Հայաստանի Հանրապետությունն ընթանում է արտաքին աշխարհի հետ սերտ համագործակցության և համաշխարհային տնտեսությանը սերտաճման ուղիով, որով պայմանավորված՝ կարևորվում է ՀՀ արտաքին առևտրի արդի իրավիճակի և դրա տարբեր հայեցակետերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, ինչն էլ հնարավորություն կտա ՀՀ արտաքին տնտեսական կապերի և տնտեսական իրավիճակի վերաբերյալ ավելի ամբողջական պատկերացում կազմել:

ՀՀ արտաքին առևտրի վերլուծությունը պայմանականորեն բաժանենք երկու մասի՝ մինչ ԱՀԿ-ին անդամակցության գործընթացը և անդամակցությունից հետո: Նշենք նաև, որ վերլուծության համար հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության՝ ՀՀ առևտրային հաշվեկշռի վերաբերյալ պաշտոնական տվյալները:

ՀՀ առևտրային հաշվեկշռի ընդհանուր վերլուծությունը ցույց է տալիս, որ արտահանման ծավալների էական աճ է դիտվել վերջին երկու տարիների ընթացքում՝ 2002թ. կազմելով 507.2 մլն ԱՄՆ դոլար՝ 2001թ. 342.8 մլն դոլարի փոխարեն՝ դրանով իսկ ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ ապահովելով արտահանման ծավալների աճ և ներմուծման ծավալների նվազեցում (համապատասխանաբար՝ 33.9%-ով և 66.1%-ով): Արտաքին ապրանքաշրջանառությունը 2003 թ. կազմել է 1947.5 մլն դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 455.3 մլն դոլարով, այդ թվում՝ արտահանումը կազմել է 678.1 մլն դոլար (աճը՝ 173 մլն դոլար), իսկ ներմուծումը՝ 1269.4 մլն դոլար (աճը՝ 282.3 մլն դոլար): Այսինքն՝ 2003 թ. բնորոշվել էր ապրանքների և ծառայությունների ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ծավալների էական աճի տեմպերով:

1996 թ. համեմատությամբ, 1997 - 1999 թթ. արտահանման ծավալների կրճատումը հիմնականում պայմանավորված էր արդյունաբերության մեջ արտահանման կողմնորոշում ունեցող ներդրումների աննշան քանակով, որը թույլ չէր տալիս արտահանման կառուցվածքում ապահովել որակական տեղաշարժեր: Արտահան-

ման ծավալների կրճատման հետևանք էր արտաքին առևտրային հաշվեկշռի պակասուրդի շարունակվող աճը:

Չնայած այն հանգամանքին, որ առևտրային հաշվեկշռի մնացորդը շարունակում է մնալ բացասական, սակայն արդեն 2001 և 2002 թթ. դիտվել է նվազման միտում՝ 2002 թ. կազմելով -483.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա -531.5 մլն դոլարի փոխարեն:

Նախորդ տարիների համեմատ 2002 թ. տնտեսությունում արձանագրված աննախադեպ բարձր տնտեսական աճի պայմաններում զգալիորեն լավացել են արտաքին հատվածի հիմնական ցուցանիշները: Ներքին սպառման աճի տեմպերը չեն գերազանցել ՀՆԱ իրական աճի տեմպերը, արդյունքում՝ տնտեսությունում ստեղծված լրացուցիչ առաջարկը նպաստել է ապրանքների և ծառայությունների զուտ արտահանման աճին: Տարին բնորոշվել է արտահանման և ներմուծման աճի բարձր տեմպերով և կապիտալի զգալի ներհոսքով: 2002 թ. զգալիորեն կրճատվել է վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը (36.7 մլն դոլարով): Կրճատման պատճառը առևտրային հաշվեկշռի լավացումն էր՝ պայմանավորված ներմուծման նկատմամբ արտահանման աննախադեպ բարձր աճով:

2003 թ. արտաքին հատվածի հիմնական առանձնահատկությունը ընթացիկ հաշվի պակասուրդի խորացումն էր (54.8 մլն ԱՄՆ դոլարով), որը մեծապես պայմանավորված էր առևտրային հաշվեկշռի վատացմամբ (բացասական մնացորդը կազմել էր 591.4 մլն ԱՄՆ դոլար): Առևտրային հաշվեկշռի վատացումը նախորդ տարիների համեմատ ապրանքների ներմուծման ծավալների բարձր աճի հետևանք էր: Նշված աճը ներքին տնտեսությունում եկամուտների բարձր աճով պայմանավորված համախառն պահանջարկի զգալի ավելացման, ինչպես նաև մեծածավալ շինարարական աշխատանքների իրականացման և վերամշակող արդյունաբերության արտադրության համար անհրաժեշտ հումքի ներմուծման արդյունք էր: 2003 թ. արտաքին հատվածի հիմնական զարգացումները բնութագրող ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 7.2%՝ նախորդ տարվա 6.9%-ի փոխարեն:

## 4.2. ՀՀ առևտրային հաշվեկշռի ապրանքային կառուցվածքը

Ապրանքների արտահանումը 2002 թվականին կազմել է 507.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 164.4, իսկ 1993 թվականի համեմատ՝ 351 մլն ԱՄՆ դոլարով: Ընդ որում, աճ դրսևորել են արտահանման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ կազմող գրեթե բոլոր ապրանքախմբերը (տե՛ս աղյուսակ 4.1): Հատկապես մեծ է եղել «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ ու դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբում ընդգրկված ապրանքների արտահանման ծավալների աճը՝ 136 մլն ԱՄՆ դոլարով (տոկոսային արտահայտությամբ՝ 15.2%-ով), իսկ 1993թ. համեմատ՝ 218.2 մլն ԱՄՆ դոլարով (24.85%-ով): Զգալի ավելացել է ինչպես ադամանդի, այնպես էլ ոսկերչական իրերի արտահանումը: Անսպասելի բարձր են եղել «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «Սարքեր և ապարատներ» ապրանքախմբերի ցուցանիշները: Նշված ապրանքախմբերի արտահանման ծավալները համապատասխանաբար ավելացել են 13.5 մլն ԱՄՆ դոլարով և 10.5 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 1993 թ. համեմատ՝ 11 մլն ԱՄՆ դոլարով և 16.7մլն ԱՄՆ դոլարով: Արդյունքում՝ այդ ապրանքախմբերի տեսակարար կշիռը ընդհանուր արտահանման կառուցվածքում համապատասխանաբար կազմել է՝ 3.0% և 3.8%: Ըստ գնահատումների՝ նման աճը պայմանավորված էր այս ճյուղերում մի շարք ձեռնարկությունների վերագործարկմամբ, նաև նոր շուկաների ու առևտրային պայմանագրերի ձեռքբերմամբ: Արտահանման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող (10.8 %) «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի ցուցանիշն աճել է 7 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 1993թ. համեմատ՝ 44.5 մլն ԱՄՆ դոլարով: Այս ապրանքախմբի արտահանման աճի տեմպը վերջին տարիներին բավական բարձր է եղել՝ ճյուղի ձեռնարկություններում իրականացված խոշոր ներդրումներով պայմանավորված արտադրության ծավալների աճի ու մրցունակ ապրանքների թողարկման հաշվին: Նշված աճն ապահովվել է ապրանքախմբում մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքների՝ կոնյակի, գինու, ծխախոտի, տոմատի մածուկի արտահանման ծավալների աճի արդյունքում: Բացի նշված ապրանքախմբերից, աճի միտում են դրսևորել նաև «Հանքահումքային

արտադրանք» ու «Մանածագործական իրեր» ապրանքախմբերը, որոնց արտահանման ծավալները համապատասխանաբար ավելացել են 4 մլն ԱՄՆ դոլարով և 4.4 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 1993 թ. համեմատ՝ 40.1 մլն ԱՄՆ դոլարով և 13.9 մլն ԱՄՆ դոլարով: Արտահանման կառուցվածքում այդ ապրանքախմբերի տեսակարար կշիռը 2002 թ. համապատասխանաբար կազմել է 8.3% և 5.7%: «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի աճի ցուցանիշը հիմնականում ապահովվել է պղնձի ու մոլիբդենի հանքաքարի, էլեկտրաէներգիայի արտահանման ծավալների ավելացման շնորհիվ:

Վերջին տարիներին, նշված ապրանքախմբերի ցուցանիշներն ունեցել են կայուն բարձր աճի տեմպ՝ պայմանավորված այդ ճյուղերում իրականացված արդյունավետ ներդրումներով (այդ թվում՝ ուղղակի) և չգործարկված արտադրական կարողությունների վերագործարկմամբ: Բացի այդ, արտահանման ուղղվածություն ունեցող մի շարք ձեռնարկություններ ընդլայնել են իրենց արտադրանքի իրացման շուկաները ու ձեռք են բերել նոր շուկաներ՝ շնորհիվ արտադրանքի բարձր որակի ու արտադրողականության աճի: Նշված միտումները, փաստորեն, պահպանվել են նաև 2003 թվականին: Արտահանման աճին նպաստել է նաև իրական փոխարժեքի վերջին տարիների բարձր տեմպերով արժեզրկումը:

*Աղյուսակ 4.1*

**ՀՀ արտահանման կառուցվածքը 1993 - 2003 թթ.՝ ըստ ապրանքախմբերի**
*(տոկոսներով)*

| Ապրանքային խմբերի անվանումը | Արտահանում | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1993 | 1994 | 1995 | 1996 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
| Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք | 0 | 0 | 0.1 | 0.05 | 0.13 | 0.05 | 0.3 | 0.2 | 0.35 | 0.5 | 0.8 |
| Բուսական ծագման արտադրանք | 0.2 | 0.32 | 0.34 | 0.32 | 1.2 | 0.6 | 0.6 | 0.6 | 0.4 | 0.3 | 0.5 |
| Կենդանական և բուսակ. ծագման յուղ. և ճարպեր | 0 | 0 | 0 | 0.04 | 0.2 | 0.04 | 0 | 0 | 0 | 0 | 0.02 |
| Պատրաստի սննդի արտադրանք | 6.7 | 6.0 | 4.7 | 4.05 | 10.6 | 7.7 | 6.9 | 9.1 | 14.0 | 10.8 | 10.6 |
| Հանքահումքային արտադրանք | 1.5 | 8.3 | 10.6 | 6.6 | 7.7 | 10.06 | 16.8 | 11.5 | 11.1 | 8.3 | 7.03 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք | 3.4 | 1.8 | 5.6 | 1.9 | 1.9 | 1.0 | 0.8 | 1.1 | 0.8 | 0.4 | 0.4 |
| Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր | 2.8 | 3.7 | 3.9 | 2.8 | 3.9 | 3.7 | 3.9 | 3.1 | 3.8 | 1.3 | 0.7 |
| Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր | 0.4 | 0.4 | 0.5 | 0.5 | 1 | 0.5 | 0.4 | 0.5 | 0.6 | 0.1 | 0.1 |
| Փայտ և փայտյա իրեր | 0 | 0 | 0.07 | 0.07 | 0.08 | 0.12 | 0.1 | 0.3 | 0.3 | 0.3 | 0.2 |
| Թուղթ և թղթից իրեր | 0.07 | 0.18 | 0.32 | 0.18 | 0.5 | 0.02 | 0.5 | 0.2 | 0.4 | 0.1 | 0.1 |
| Մանածագործական իրեր | 9.5 | 7.3 | 5.6 | 3.35 | 4.5 | 6.2 | 5.9 | 4.4 | 7.1 | 5.7 | 4.5 |
| Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ | 12.01 | 7.4 | 1.9 | 0.8 | 0.3 | 0.5 | 0.4 | 0.3 | 0.1 | 0.1 | 0.01 |
| Իրեր քարից, գիպսից, ցեմենտից | 7.1 | 5.9 | 0.8 | 0.6 | 0.5 | 0.4 | 0.3 | 0.7 | 0.5 | 0.6 | 0.2 |
| Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր | 26.25 | 34.9 | 33.06 | 48.3 | 23.75 | 28.8 | 42.8 | 40.8 | 35.9 | 51.1 | 51.5 |
| Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր | 3.4 | 4.4 | 11.3 | 16.3 | 24.8 | 18.2 | 10.7 | 14.9 | 8.3 | 8.9 | 13.3 |
| Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ | 16.2 | 14.35 | 14.4 | 11.8 | 13.8 | 18.5 | 7.6 | 10.4 | 12.7 | 4.2 | 3.0 |
| Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ | 3.02 | 0.8 | 4.2 | 0.92 | 0.9 | 1.98 | 1.2 | 0.6 | 0.7 | 3.0 | 2.1 |
| Սարքեր եւ ապարատներ | 1.6 | 1.84 | 1.44 | 0.9 | 2.1 | 1.7 | 0.7 | 0.8 | 2.6 | 3.8 | 4.2 |
| Տարբեր արդյունաբերական ապրանքներ | 5.9 | 2.54 | 1.24 | 0.53 | 2.12 | 1.1 | 0.1 | 0.4 | 0.2 | 0.3 | 0.3 |
| Արվեստի ստեղծագործություններ | 0.1 | 0 | 0.1 | 0.04 | 0 | 0.07 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |

Միջազգային շուկայում բարձր պահանջարկ ունեցող և համապատասխան արտահանման բարձր ծավալներ ապահովող ապրանքատեսակներն են՝ թանկարժեք քարերը, պահածոյացված մրգերը և բանջարեղենը, ոգելից և ոչ ոգելից խմիչքը, մեքենաներն ու սարքավորումները և այլն:

Քաղաքականության և իրավական հարցերով հայ-եվրոպական խորհրդատվական կենտրոնի կողմից կատարված՝ «Համաշխարհային շուկայում հայկական թարմ և պահածոյացված մրգերի ու բանջարեղենի ոլորտի մրցունակության գնահատում» հետազոտության շնորհիվ,[29] որը, կարծում ենք, բավականին արժեքավոր է տվյալ ոլորտի մրցունակության հետագա բարձրացման, արտահանման ընդլայնման և միջազգային շուկայում նորանոր դիրքեր գրավելու տեսանկյունից, ոլորտը համարվել է մեծ ներուժ ունեցողներից մեկը: Այդ ապրանքատեսակները միջազգային շուկայում կդառնան է՛լ ավելի մրցունակ, ինչպես նաև կբավարարեն ԱՀԿ-ի կողմից սահմանված պահանջները, եթե տվյալ ոլորտում իրականացվի միջազգայնորեն ընդունված որակավորման ստանդարտներին համապատասխան որակի բարելավում, արտահանման համար համապատասխան շուկայավարություն, ինչպես նաև բարելավվի ծախսերի վերահսկման համակարգը:

Համաձայն Քաղաքականության և իրավական հարցերով հայ-եվրոպական խորհրդատվական կենտրոնի գնահատումների՝ տոմատի մածուկի արտադրության հզորությունը 38 անգամ, իսկ մրգային խտանյութերի և խնձորի հյութի արտադրության հզորությունը, համապատասխանաբար՝ 26 և 15 անգամ ավելի էր, քան 2001 թ. դրանց տեղական սպառումը: Մրգերից և բանջարեղենից ստացվող վերջնական արտադրանքը հիմնականում արտահանվում է Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի շուկաներ:

Ոլորտի մրցունակության բարձրացման, ԱՀԿ-ի պահանջների բավարարման նպատակով առաջարկվող միջոցառումներից են՝ ոլորտի տեխնիկական և տնտեսական կառավարման բարելավումը, արտահանումը խթանող տեխնիկական օժանդակության ծրագրերի իրականացումը, ոլորտի սպասարկման զարգացումը (հումքային մատակարարում, վարկավորում և այլն):

Ինչ վերաբերում է հայկական գարեջրին, ապա տարեցտարի այն նվաճում է նորանոր շուկաներ՝ ներքին շուկայում գրեթե ամբողջությամբ փոխարինելով ներմուծվող գարեջուրը: Ըստ Մրցակցության պետական հանձնաժողովի տվյալների՝ «Կիլիկիա» և «Կոտայք» գարեջրերի արտադրությունները ապահովում են ներքին

[29] *"Armenia's export growth in 2000-2002: origin and outlook", Kristina Tereshchatova, 2002*

շուկայի սպառման մոտ 99.53 տոկոսը: Աբովյանի գարեջրի գործարանն իր գործունեությունը սկսել է 1974 թ., սակայն ձեռք բերված հաջողությունը մեծապես պայմանավորված է եղել 1997թ. տվյալ գործարանի և ֆրանսիական «Կաստել» ընկերության հիմնած համատեղ ձեռնարկության գործունեությամբ, որի բաժնետոմսերի 71%-ը պատկանում է ֆրանսիական, իսկ 29%-ը՝ հայկական կողմին: Ընկերության արտադրանքը հիմնականում արտահանվում է ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա և Գերմանիա:

Արտահանման ծավալների մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում հայկական կոնյակը, որը բավականին մեծ պահանջարկ է վայելում ոչ միայն ԱՊՀ երկրներում, այլև հեռավոր արտերկրում: Նոր սեփականատիրոջ («Պեռնո Ռիկար» ընկերության) կողմից ներկայացվող որակավորման պահանջները և հայկական կոնյակի արտադրության ավանդական եղանակները այն դարձրին մրցունակ Ռուսաստանում, Բելառուսում և մի շարք այլ երկրներում: Այսօր, 1999 թվականի համեմատությամբ, կոնյակի արտահանման ծավալները եռապատկվել են (երկու միլիոնից հասնելով 6 միլիոն շիշ տարեկան), իսկ արտահանումը իրականացվում է 21 երկրներ՝ ներառելով ԱՄՆ-ը, Կանադան, Գերմանիան, Ճապոնիան և այլն:

Արտահանման վրա հիմնված տնտեսական աճի առումով՝ ապրանքային արտահանման ձևավորված կառուցվածքը ռացիոնալ չէ մի շարք պատճառներով: Առաջին հերթին ապրանքային արտահանման անվանացանկը շատ սահմանափակ է: Արտահանման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող հինգ ապրանքային խմբերը (թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, պատրաստի արտադրանք, ոչ թանկարժեք մետաղներ, հանքահումքային արտադրանք և մեքենաներ ու սարքավորումներ), միջին հաշվով, ապահովում են ամբողջ ապրանքային արտահանման 83.3%-ը, որից միայն թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտահանումը՝ ամբողջ արտահանման ավելի քան 50%-ը: Երկրորդ, մի ամբողջ շարք ապրանքների արտահանումը, որոնք ներկայումս ունեն զգալի տեսակարար կշիռ ապրանքային արտահանման կառուցվածքում, չեն հիմնվում երկրի՝ մրցունակության համեմատական առավելությունների վրա կամ կապված չեն արտադրական գործունեության արդյունքների հետ: Հետևաբար դրանք չեն կարող ընդլայնվել կամ արտահանումը չի կարող շարունակվել ապագա-

յում: Օրինակ, մետաղների արտահանման ծավալի 30 - 40%-ը կազմում է սև և գունավոր մետաղների ջարդոնի արտահանումը: Երրորդ, արտադրական հզորությունների մի մեծ մասը շատ չնչին կամ ընդհանրապես չի մասնակցում արտադրանքի արտահանմանը, առևտրային հաշվեկշռի բարելավմանը, ինչպես նաև չի մասնակցում տնտեսական աճի ապահովմանը: Մասնավորապես նման արտադրական հզորություններից են ԽՍՀՄ-ից ժառանգություն մնացած խոշոր և միջին ձեռնարկությունները: Չորրորդ, արտահանման նոր շուկաների ձևավորման և ընդլայնման միտումների բացակայությունը՝ բացառությամբ ալմաստի վերամշակման և ոսկերչական արդյունաբերության: Այդ են վկայում նաև ցայտուն աճի միտումների բացակայությունը և, ըստ առանձին ապրանքային խմբերի, արտահանման տարեկան ծավալների զգալի տատանումները: ԱՀԿ-ին անդամակցությունը երկարաժամկետ ժամանակահատվածում նորանոր շուկաներ նվաճելու, առևտրային հարաբերություններ հաստատելու, ինչպես նաև արտահանման ձևավորված կառուցվածքը բարելավելու լայն հնարավորություններ է ընձեռում:

Ապրանքների ներմուծումը 2002 թ. կազմել է 991.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով շուրջ 116.8, իսկ 1993թ. համեմատ՝ 736.9 մլն դոլարով: Ներմուծման զգալի՝ 107 մլն ԱՄՆ դոլարով (9.4%-ով) աճի հիմնական պատճառը «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ ու դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալների աճն էր՝ պայմանավորված չմշակված ադամանդի ու ոսկու ներմուծման ծավալների ավելացմամբ (տե՛ս աղյուսակ 4.2): Բացի այդ, զգալի մեծացել են «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալները, համապատասխանաբար՝ 20 մլն ԱՄՆ դոլարով, 15 մլն ԱՄՆ դոլարով,14 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 1993թ. համեմատ՝ 44.6, 99.5 և 38.3 մլն դոլարով: Այդ ապրանքախմբերի տեսակարար կշիռները ներմուծման կառուցվածքում համապատասխանաբար կազմել են՝ 5.6%, 10.5%, 4.0%: Նշված ապրանքախմբերի ցուցանիշի աճը պայմանավորված էր երկրի տնտեսական բարձր ակտիվությամբ ու կապիտալ շինա-

ռարության բավական խոշոր ծավալներով: Այդ պայմաններում էապես մեծացել է արդյունաբերության ու կապիտալ շինարարության ճյուղերի համար անհրաժեշտ հումքի ու նյութերի ներմուծման անհրաժեշտությունը: Որոշ ապրանքախմբերի ներմուծման ծավալները (հիմնականում՝ սպառողական) շարունակում են կրճատվել՝ կապված ներքին շուկայում ներմուծման փոխարինիչների արտադրության շարունակական ավելացմամբ: Այսպիսով, բնակչության պահանջները աստիճանաբար բավարարվում են տեղական կաթնամթերքի, մսամթերքի, ձվի, ծխախոտի, հրուշակեղենի, գարեջրի, հյութերի և այլնի արտադրության շնորհիվ: Սակայն որոշ սննդամթերքների արտադրությունը երկրում, տնտեսական և այլ հանգամանքներից ելնելով, անհնար է, օրինակ՝ սուրճ, բրինձ, ձավարեղեն, ուստի դրանց ներմուծումը անհնարին է փոխարինել:[30]

Իսկ «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի ներմուծման ծավալների շուրջ 10.6 մլն ԱՄՆ դոլարով (4%-ով) նվազումը բացատրվում է այլընտրանքային վառելիքի օգտագործման հնարավորությունների աճով: Մասնավորապես, տրանսպորտային միջոցների հիմնական մասը ներկայումս բենզինի փոխարեն որպես վառելիք օգտագործում է գազ, որի արժեքն ավելի ցածր է:

*Աղյուսակ 4.2*

**ՀՀ ներմուծման կառուցվածքը 1993 - 2003 թթ.՝ ըստ ապրանքախմբերի**
*(տոկոսներով)*

| Ապրանքային խմբերի անվանումը | Ներմուծում | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1993 | 1994 | 1995 | 1996 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
| Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք | 9.04 | 11.7 | 9.4 | 7.9 | 6.56 | 5.2 | 5.1 | 3.8 | 3.5 | 2.8 | 2.5 |
| Բուսական ծագման արտադրանք | 17.91 | 16.3 | 12.7 | 13.2 | 11.8 | 13.1 | 9.0 | 11.2 | 9.7 | 7.5 | 5.9 |
| Կենդանական և բուսակ. ծագման յուղեր և ճարպեր | 0.97 | 3.04 | 3.72 | 3.08 | 2.75 | 2.1 | 2.1 | 1.9 | 2.2 | 1.9 | 1.8 |
| Պատրաստի սննդի արտադրանք | 6.6 | 8.24 | 7.64 | 9.95 | 9.64 | 12.2 | 9.1 | 7.9 | 8.8 | 8.0 | 7.3 |

[30] *Թորոսյան Թ. ՀՀ արտաքին առևտրական համակարգի վերափոխումները, "Էկոնոմիա" ամսագիր, 2000թ., # 5, էջ 54:*

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հանքահումքային արտադրանք | 1.48 | 8.26 | 10.62 | 21.7 | 23.5 | 22.8 | 20.9 | 20.3 | 21.4 | 17.4 | 13.9 |
| Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբե-ության ճյուղերի արտադրանք | 1.67 | 2.32 | 8.22 | 6.56 | 9.55 | 8.2 | 8.8 | 9.3 | 7.4 | 6.4 | 6.5 |
| Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր | 0.25 | 0.25 | 0.6 | 1.58 | 2.63 | 3.0 | 2.8 | 2.6 | 2.6 | 2.2 | 2.2 |
| Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր | 0.77 | 0.05 | 0.05 | 0.15 | 0.19 | 0.1 | 0.2 | 0.2 | 0.7 | 0.2 | 0.1 |
| Փայտ և փայտյա իրեր | 0.04 | 0.1 | 0.14 | 0.16 | 0.31 | 0.4 | 0.5 | 0.6 | 0.6 | 0.7 | 0.7 |
| Թուղթ և թղթից իրեր | 0.06 | 0.69 | 1.2 | 1.48 | 1.8 | 3.0 | 2.2 | 2.6 | 2.8 | 1.9 | 1.7 |
| Մանածագործական իրեր | 1.75 | 2.2 | 1.16 | 2.45 | 3.76 | 3.5 | 3.6 | 3.6 | 4.1 | 3.7 | 3.1 |
| Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ | 0.11 | 0.08 | 0.13 | 0.58 | 1.12 | 0.6 | 0.7 | 0.6 | 0.7 | 0.4 | 0.3 |
| Իրեր քարից, գիպսից, ցեմենտից | 0.09 | 0.2 | 0.38 | 1.02 | 1.76 | 1.7 | 1.5 | 1.3 | 1.8 | 1.9 | 1.7 |
| Թանկարժեք և կիսա-թանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր | 10.55 | 8.06 | 9.27 | 15.17 | 5.32 | 5.0 | 10.3 | 12.8 | 12.2 | 21.6 | 25.9 |
| Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր | 4.36 | 0.92 | 2.37 | 1.2 | 2.76 | 2.2 | 2.8 | 2.8 | 10.1 | 5.6 | 6.0 |
| Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ | 1.58 | 2.03 | 7.36 | 9.4 | 11.44 | 7.2 | 9.7 | 13.3 | 4.1 | 10.5 | 10.4 |
| Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ | 0.76 | 0.5 | 0.94 | 1.4 | 1.76 | 5.2 | 3.9 | 2.6 | 3.0 | 4.0 | 5.8 |
| Սարքեր եւ ապարատներ | 0.31 | 0.74 | 0.85 | 1.28 | 1.57 | 1.4 | 1.5 | 1.4 | 3.1 | 2.1 | 2.6 |
| Տարբեր արդյունաբե-րական ապրանքներ | 1.83 | 1.7 | 0.47 | 1.59 | 1.75 | 2.9 | 1.5 | 1.3 | 1.3 | 1.1 | 1.2 |
| Արվեստի ստեղծագործություններ | 0 | 0 | 0.01 | 0.12 | 0.01 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.02 |

## 4.3. ՀՀ առևտրային հաշվեկշռի աշխարհագրական կառուցվածքը

Արտահանման աշխարհագրական կառուցվածքում ևս դրական տեղաշարժերը զգալի են: Մինչև 2000թ. արտաքին ապրանքաշրջանառությունը ԱՊՀ երկրների հետ նվազման միտում ուներ՝ պայմանավորված այդ երկրների մեծ մասում տնտեսական բարեփոխումների իրականացմամբ և տնտեսության զարգացման դժվարություններով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին երկու տարիներին ավելացել են արտահանման ծավալները ԱՊՀ անդամ երկրներ՝ Ռուսաստան և Վրաստան, սակայն Ուկրաինա արտահանվող ապրանքների ծավալները կրճատվել են: Արտահանումը Ռուսաստան էականորեն աճել է 2001թ.՝ կապված երկրի տնտեսական աճի, իրական եկամուտների մակարդակի ավելացման, ինչպես նաև հայկական ապրանքատեսակների նկատմամբ պահանջարկի մեծացման հետ: Եթե 1993թ. արտահանումը Ռուսաստանի Դաշնություն կազմում էր 58.5 մլն ԱՄՆ դոլար, ապա 2002թ՝ 64.6 մլն ԱՄՆ դոլար: Արդյունքում՝ ԱՊՀ երկրների տեսակարար կշիռն արտահանման ընդհանուր կառուցվածքում կազմել է 19.3%, ընդ որում՝ Ռուսաստանի տեսակարար կշիռը՝ 12.7%, իսկ Վրաստանինը՝ 3.3%:

Զգալիորեն ավելացել է ապրանքների արտահանումը եվրոպական երկրներ. 2002 թ. կազմել է 197.6 մլն ԱՄՆ դոլար՝ 2001 թ. համեմատ ավելանալով 109 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 1993 թ. համեմատ՝ 181 մլն ԱՄՆ դոլարով: Հատկապես ավելացել է արտահանումը Բելգիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Նիդեռլանդներ: Նշված երկրներ արտահանման աճը հիմնականում ապահովվել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ ու դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբում ընդգրկված ապրանքների արտահանման հաշվին: Այս ոլորտը համարվում է բավականին հեռանկարային: Արդյունքում՝ եվրոպական երկրների տեսակարար կշիռն արտահանման կառուցվածքում կազմել է 39%՝ 2001 թ. 26%-ի փոխարեն: Բացի այդ, նկատելի աճել է արտահանումը Իսրայել՝ ավելի քան 55 մլն դոլարով և կազմել 88 մլն ԱՄՆ դոլար (տեսակարար կշիռը՝ 17%): Արտահանման աճը Իսրայել պարզաբանման լրացուցիչ կարիք ունի, քանի որ 2000թ. այն զրո-

յական մակարդակի վրա էր: Արտահանման նման աճն ապահովվեց «Շողակն» ձեռնարկության վերակազմավորման շնորհիվ, որի սեփականատերը 2000 թ. դարձավ Իսրայելի «ԼԼԴ Դայմոնդ» ընկերությունը:

1993 - 2002թթ. ներմուծման աշխարհագրական կառուցվածքն ընդհանուր առմամբ համահունչ էր արտահանման կառուցվածքին: Ներմուծման ծավալների աճ միաժամանակ գրանցվել է ԱՊՀ երկրներից, եվրոպական երկրներից, Իսրայելից (տե՛ս աղյուսակ 4.3): Ավելացել են ներմուծման ծավալները Ռուսաստանից, Թուրքմենստանից, Ուկրաինայից ու Վրաստանից, որի արդյունքում ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը ընդհանուր ներմուծման կառուցվածքում 2002թ. կազմել է 31%՝ նախորդ տարվա 25%-ի, իսկ 1993թ.՝ 66.2%-ի փոխարեն: Բելգիայից ներմուծվող ապրանքների ծավալներն աճել են 49 մլն ԱՄՆ դոլարով, իսկ Իսրայելից՝ 55 մլն ԱՄՆ դոլարով: Մեծ Բրիտանիայից, որտեղից հիմնականում ներմուծվում է նավթ ու նավթամթերք, ներմուծումը կրճատվել է 63 մլն ԱՄՆ դոլարով: Արդյունքում՝ ԵՏՄ երկրների տեսակարար կշիռը ներմուծման կառուցվածքում կազմել է 25%՝ 2001թ. 28%-ի փոխարեն: Իսկ ԱՄՆ-ից ներմուծումը նվազել է 31 մլն ԱՄՆ դոլարով՝ պայմանավորված մարդասիրական օգնության ծավալների կրճատմամբ: 2002թ. ԱՄՆ-ի տեսակարար կշիռը ներմուծման կառուցվածքում կազմել է 5%՝ 2001թ. 9%-ի փոխարեն: Նշենք նաև, որ 2001թ. «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ ու դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ապրանքների ներմուծման ցածր տոկոսային աճը (1.2%) պայմանավորված էր այն հանգամանքով, որ լրացել էր չմշակված ադամանդների մատակարարման պայմանագրի ժամկետը Ռուսաստանի Դաշնության և Բելգիայի միջև, ինչն էլ իր հերթին վերամշակող ձեռնարկությունների արտադրության գործընթացի ընդհատման պատճառ դարձավ: 2002թ. ապրիլի 5-ին ստորագրվեց «Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն 2002 - 2006 թթ. մատակարարվող բնական ալմաստների մասին» համաձայնագիրը և սահմանվեցին 2002 թ. Հայաստանի Հանրապետություն ներկրվող բնական ալմաստների ծավալները (400 հազար կարատ՝ ոսկերչական նշանակության և 400 հազար կարատ՝ տեխնիկական նշանակության բնական ալմաստ): Վերոհիշյալ համաձայնագրի շրջա-

նակներում 2002 թ. ՀՀ-ում համապատասխան գործունեություն ծավալող ընկերությունների կողմից ներկրվել է 365.0 հազար կարատ ոսկերչական նշանակության բնական ալմաստ:

*Աղյուսակ 4.3*

**ՀՀ ներմուծման կառուցվածքը 1993-2003թթ.՝ ըստ երկրների**

*(տոկոսներով)*

| Երկիր | Ներմուծումը | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1993 | 1994 | 1995 | 1996 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
| ԱՊՀ երկրներ | 66.2 | 52.2 | 49.6 | 34.7 | 33.5 | 25.5 | 21.9 | 19.0 | 25.0 | 31 | 24.4 |
| Ռուսաստան | 30.6 | 28.5 | 20.0 | 14.6 | 24.0 | 21.0 | 17.0 | 14.0 | 19.0 | 15.8 | 16.4 |
| Թուրքմենստան | 25.2 | 17.7 | 18.5 | 10.7 | 5.4 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 2.5 | 0.6 |
| Վրաստան | 7.7 | 4.5 | 9.2 | 5.0 | 4.0 | 2.0 | 3.0 | 2.0 | 2.0 | 3.0 | 3.0 |
| Ուկրաինա | 1.6 | 1.3 | 0.8 | 1.4 | 0 | 1.0 | 1.0 | 1.4 | 2.5 | 4.6 | 3.5 |
| ԱՊՀ այլ երկրներ | 1.0 | 0.1 | 1.2 | 1.1 | 0.7 | 0.8 | 0.2 | 0.4 | 0.4 | 0.7 | 1.0 |
| ԵՏՄ երկրներ | 14.0 | 9.4 | 13.2 | 15.5 | 19.8 | 28.7 | 31.2 | 34.2 | 28.0 | 25.0 | 29.3 |
| Բելգիա | 1.1 | 0.3 | 2.3 | 0.0 | 5.0 | 6.0 | 10.0 | 9.0 | 4.0 | 9.0 | 10.2 |
| Ֆրանսիա | 0.4 | 2.7 | 2.4 | 1.4 | 2.2 | 3.1 | 1.5 | 2.0 | 1.4 | 1.4 | 1.4 |
| Գերմանիա | 0.1 | 1.8 | 1.6 | 2.0 | 2.0 | 3.0 | 4.0 | 4.0 | 3.0 | 4.0 | 3.4 |
| Իռլանդիա | 0 | 0 | 0.3 | 0.3 | 0.1 | 0.9 | 0.2 | 0.1 | - | - | - |
| Իտալիա | 12.2 | 2.3 | 3.3 | 3.0 | 4.0 | 3.0 | 2.0 | 2.0 | 3.0 | 3.0 | 3.1 |
| Նիդեռլանդներ | 0.1 | 2.1 | 0.9 | 0.7 | 1.7 | 1.1 | 0.6 | 1.4 | 0.8 | 1.0 | 0.9 |
| Մեծ Բրիտանիա | 0 | 0.12 | 0.32 | 0.8 | 1.0 | 7.0 | 8.0 | 6.0 | 10.0 | 2.0 | 4.5 |
| Հունաստան | 0. | 0 | 0.8 | 0.6 | 1.1 | 1.0 | 1.6 | 6.1 | 1.5 | 1.2 | 2.4 |
| ԵՏՄ այլ երկրներ | 0.1 | 0.2 | 0.5 | 0.4 | 0.4 | 0.8 | 0.4 | 1.3 | 3.1 | 2.6 | 1.3 |
| Շվեյցարիա | 0.1 | 0.6 | 0.9 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 3.0 | 3.0 | 1.0 | 3.3 |
| Իրան | 6.2 | 10.8 | 13.4 | 17.0 | 8.0 | 6.0 | 9.0 | 9.0 | 9.0 | 6.0 | 5.3 |
| Թուրքիա | 0. | 0.1 | 0.4 | 0.7 | 4.3 | 6.3 | 5.0 | 4.5 | 3.8 | 3.8 | 3.0 |
| Իսրայել | | | | - | | - | | | | 8.0 | 9.7 |
| ՄԱԷ | 1.1 | 0.3 | 2.1 | 3.0 | 6.0 | 5.0 | 4.0 | 4.0 | 5.0 | 4.0 | 4.5 |
| ԱՄՆ | 10.6 | 24.4 | 16.9 | 11.0 | 11.0 | 9.0 | 10.0 | 11.0 | 9.0 | 5.0 | 8.0 |
| Այլ երկրներ | 1.8 | 2.2 | 3.6 | 15.9 | 9.1 | 13.0 | 15.0 | 15.4 | 15.7 | 14.1 | 12.6 |

ԱՀԿ-ին անդամակցությամբ երաշխավորվում է, որ տվյալ երկրում առկա են գործարարության կարգավորման միջազգային չափանիշներին համապատասխանող տնտեսական օրենսդրության և գործարարությունը խթանող ազատական տնտեսության հիմքերը, ինչպես նաև դրանք խորացնելու և զարգացնելու պարտավորություններ և ռազմավարություն, ինչն էլ իր հերթին նպաստում է ընկերությունների արտադրանքի արտահանման ծավալների ընդլայնմանը, ուրեմն և՝ առևտրային հաշվեկշռի բարելավմանը:

Արտահանման ընդլայնման հնարավորությունների առումով՝ հանրապետության արդյունաբերությունը ներկայումս ունի մոտավորապես հետևյալ ներուժը:

2002 թ. ակնագործության և ոսկերչության ոլորտի ընկերությունների արտադրանքի թողարկման ծավալը կազմել է 97.25 մլրդ դրամ (աճը նախորդ տարվա համեմատությամբ՝ 206.3%), իրացումը՝ 103.93 մլրդ դրամ (աճը՝ 240.9%), իսկ արտահանումը՝ 102.12 մլրդ դրամ (աճը՝ 248.9%):

Թեթև արդյունաբերության ոլորտում 2002 թ. ընդարձակվել են արտասահմանյան տարբեր ֆիրմաների պատվերներով արտադրական հզորությունների օգտագործման ծավալները, ստեղծվել են նոր աշխատատեղեր, ավելացել են արտադրանքի թողարկման և արտահանման ծավալները: 2002 թ. համակարգում գործել են 25 ձեռնարկություններ՝ թողարկելով 7156 մլն դրամի արտադրանք, կամ աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 101.4%: Իրացման ծավալը, գործող գներով, կազմել է 6157 մլն դրամ՝ 2001թ. 5208 մլն դրամի փախարեն՝ ապահովելով 118.2 % աճ, այդ թվում՝ արտահանումը կազմել է 4556 մլն դրամ՝ նախորդ տարվա 4100 մլն դրամի փոխարեն (աճը՝ 111.1%): 2002թ. ընթացքում ոլորտի ընկերություններում կատարվել են 2 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ:

2002 թվականին հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունները թողարկել են 65.13 մլրդ դրամի ապրանքային արտադրանք՝ նախորդ տարվա 53.6 մլրդ դրամի փոխարեն՝ ապահովելով 121.5%-ի աճ (11.5 մլրդ դրամ): Իրացվել է 66.1 մլրդ դրամի արտադրանք (նախորդ տարվա

համեմատ աճը կազմել է 156.4%), իսկ արտադրանքի արտահանման ծավալի աճը կազմել է 161.0%: Ոլորտում 2002թ. ընթացքում իրականացվել է «ԱՈԱՋ» ՍՊԸ-ում «Ոսկի» ՓԲԸ-ին պատկանող 50% բաժնեմասի վաճառքը «ՖԴՄԱ» ընկերությանը, «Ռուսալ» ընկերությանը՝ «Արմենալ» ՓԲԸ-ում պետական 26% բաժնեմասի վաճառքը, «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի փոխանցումը շվեյցարական «Դենո» ընկերությանը, ինչպես նաև «Արարատցեմենտ» ԲԲԸ-ի վաճառքը բելգիական «Ռոբերտո» ընկերությանը, ինչի շնորհիվ կտրուկ ավելացել են ներդրումների, արտադրանքի թողարկման և արտահանման ծավալները:

Քիմիական արդյունաբերության ոլորտում արտահանման ընդլայնման հնարավորությունների առումով կարևոր է 3 խոշոր՝ «Նաիրիտ-1» ՓԲ, Վանաձորի «Պրոմեթեյ-Քիմպրոմ» ՓԲ և «Դողագործ-1» ԲԲ ընկերությունների գործունեությունը: 14.06.2002թ. պայմանագիր է կնքվել «Նաիրիտ-1» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը սեփականության իրավունքով «Ռանսատ ՊԼՍ» ընկերությանը փոխանցելու մասին: «Նաիրիտ-1» փակ բաժնետիրական ընկերությունը 2002 թվականի հունիսից վերսկսել է ացետիլենային եղանակով քլորոպրենային կաուչուկների արտադրությունը՝ տարեկան մոտ 10 հազ. տոննա հզորությամբ: 2003 թվականի հունվարի 1-ի դրությամբ արտադրվել է 3035 տոննա կաուչուկ, ապրանքային արտադրանքի ծավալը կազմել է 3823.4 մլրդ դրամ, իրացումը՝ 3420.3 մլրդ դրամ, արտահանումը՝ 3 մլրդ դրամի արտադրանք: Հայկական կաուչուկն ուներ իր սպառման ավանդական շուկաները, որոնց վերականգնումը տեղի է ունենում քիմիական արդյունաբերության վերականգնմանը զուգընթաց. այժմ արտադրանքը հիմնականում արտահանվում է ԱՊՀ երկրներ, մասնավորապես՝ Ռուսաստան: Տարվում են նախապատրաստական աշխատանքներ՝ մոտ ապագայում սպառման շուկայի ընդլայնման դեպքում օգտագործելու նաև հիմնական նախագծային հումքային բազան՝ ներմուծվող բուտադիենից քլորոպրենային կաուչուկների արտադրություն կազմակերպելու համար:

«Դողագործ-1» բաց բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի 75%-ի սեփականատեր է դարձել ամերիկյան «Թ.Ս Ինվեստմենթ» ընկերությունը՝ ընկերության կանոնադրական կապիտալում ներդնելով 1.286 մլն դոլար: 2003 թվականի հունվարի

15-ից առաջին փուլով վերսկսվեց դողերի օդախցիկների արտադրությունը, անհրաժեշտ սարքավորումներ ներկրելուց հետո, երկրորդ փուլով, առկա տեխնոլոգիայով սկսեց գործել մեծ պահանջարկ ունեցող անկյունագծային ավտոդողերի արտադրությունը:

«Պրոմեթեյ-քիմպրոմ» ՓԲԸ-ի հետագա տեխնոլոգիական զարգացումն ապահովելու, լրացուցիչ արտադրանքի՝ պարարտանյութերի /կարբամիդ, սելիտրա/ արտադրությունը կազմակերպելու, լրացուցիչ ներդրումային ծրագիր իրականացնելու նպատակով «Ռանսատ ՊԼՍ» բաց բաժնետիրական ընկերությանն է փոխանցվել «Պրոմեթեյ-քիմպրոմ» փակ բաժնետիրական ընկերության 50%-ը և գործադիր մարմնի լիազորությունները, որոնք իրականացվում են «Ռանսաթ-Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության միջոցով:

2002 թվականի արդյունքներով՝ մեքենաշինական ոլորտի ընկերությունների կողմից թողարկվել է 6120 մլն դրամի ապրանքային արտադրանք (և ծառայություններ)՝ նախորդ տարվա 7470 մլն դրամի փոխարեն (81.9%): Արտադրանքի իրացումը կազմել է 7566 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ (7175 մլն դրամ) ավելացել է՝ կազմելով 105.4 %: Իրացված արտադրանքից արտահանվել է 3667 մլն դրամի ապրանքային արտադրանք, որը նախորդ տարվա համեմատ (4898 մլն դրամ) նվազել է՝ կազմելով 79.4%: Արտահանվող արտադրանքի ավելի քան 85%-ը իրացվել է ԱՊՀ երկրներում: Համակարգի առանձին տնտեսական ցուցանիշների անկումը հիմնականում պայմանավորված է 2002 թվականի ընթացքում պատվերների բացակայության պատճառով «Ավիահամալիր» ԲԲԸ-ի չգործելու հետ, որը 2001 թվականին արտադրել էր 1.8 մլրդ դրամի, իրացրել՝ 1.2 մլրդ դրամի ապրանքային արտադրանք:

Ռազմաարդյունաբերական համալիրի ոլորտի ընկերություններում քաղաքացիական նշանակության արտադրատեսակների թողարկման աշխատանքներ են տարվել, ինչը ընկերություններին հնարավորություն կտա գործել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում: Ոլորտի հետագա զարգացման առումով կարևորվում են 2002 թվականի հուլիսի 17-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և ՌԴ կառավարության միջև ստորա-

գրված Համաձայնագիրը՝ Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական վարկերի գծով պարտքի մարման համար ՀՀ պետական սեփականություն հանդիսացող գույքը Ռուսաստանի Դաշնությանը փոխանցելու վերաբերյալ, իսկ 2002 թվականի նոյեմբերի 5-ին՝ Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող «Մարս» ՓԲԸ, «Երևանի մաթեմատիկական մեքենաների ՀԻ» ՓԲԸ, «Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի ՀԻ» ՓԲԸ, «Նյութաբանություն գիտաարտադրական ձեռնարկություն» ՓԲԸ բաժնետոմսերը Ռուսաստանի Դաշնությանը որպես սեփականություն փոխանցելու վերաբերյալ միջկառավարական արձանագրությունները: Ակնկալվում է վերոնշյալ ընկերությունների ծանրաբեռնվածության ու արտադրության ծավալների զգալի աճ, քանի որ այդ բոլոր ընկերությունները լուրջ հետաքրքրություն են ներկայացնում Ռուսաստանի Դաշնության համապատասխան ոլորտների համար:

Ըստ էության, արտահանման ընդլայնման խնդիրը հանգում է հիմնականում տնտեսության մեջ մասնավոր ներդրումների լայնամասշտաբ ներգրավմանը: ԱՀԿ-ին անդամակցությունը կարևոր դեր է խաղում մասնավոր ներդրումների ներգրավման ծավալների էական աճի ապահովման առումով: Առանց արտահանման կողմնորոշում ունեցող մասնավոր ներդրումների էական ծավալների՝ անհնար կլինի ապահովել արտահանման աճի կայուն և բարձր տեմպեր: Հայրենական արտադրողների ջանքերով արտահանման ընդլայնումը պահանջում է երկար ժամանակ և մեծ ծախսեր: Զգալի ծախսեր են անհրաժեշտ ոչ միայն արտադրությունը տեխնիկապես զինելու, այլև արտաքին շուկաների ուսումնասիրություն կատարելու և դրանցում տեղ գրավելու համար:

### 4.4. ՀՀ առևտրային հաշվեկշռի բարելավման ակնկալիքը ԱՀԿ-ին անդամակցությունից

ԱՀԿ-ին անդամակցությունը Հայաստանի համար ԱՀԿ-ի բազմակողմ առևտրային համակարգի առավելություններն օգտագործելու իրական հնարավորություններ է ստեղծում: Այն առևտուրը դարձնում է դյուրին ու տնտեսապես ավելի արդյունավետ և, այդ-

պիսով, օգտակար է և՛ արտադրողների, և՛ առևտրականների համար: Միաժամանակ, ԱՀԿ-ն նպատակ ունի նվազեցնելու միջազգային առևտրի խոչընդոտները՝ դրանով իսկ իջեցնելով ապրանքների գները, ինչն էլ իր հերթին կխթանի արտահանման ծավալները, ինչպես նաև կբարելավի երկրի առևտրային հաշվեկշիռը:

ԱՀԿ կանոնների կատարումը խիստ կարևոր է առևտրի բազմակողմ համակարգի պահպանման և ամրապնդման համար: ԱՀԿ անդամ լինելու հանգամանքը խթանում է բարեփոխումների գործընթացն անցումային տնտեսությամբ երկրներում: Բազմակողմ պարտավորությունները էական նշանակություն ունեն առևտրի ազատականացումը պահպանելու, առևտրի և վճարումների գործելակարգերի թափանցիկությունն ու կանխատեսելիությունը երաշխավորելու, ինչպես նաև շուկայական տնտեսությանն ու մասնավոր հատվածին օժանդակող հաստատությունները զարգացնելու համար:

Արտահանման ընդլայնման, առևտրային հաշվեկշռի բարելավման առումով կարևորվում է ապրանքների առևտրին վերաբերող մաքսային պարտավորությունների և արտոնության վերլուծությունը[31]: Ապրանքների մասով շուկայի մատչելիությանը վերաբերող Հայաստանի մոտեցումը բավականին ազատական է՝ մաքսային դրույքաչափի վերին ամրագրված սահմանով (15%): Ինչպես արդյունաբերական, այնպես էլ գյուղատնտեսական ապրանքների համար ներմուծման բաժնեչափեր չկան: Արդյունաբերական ապրանքներին վերաբերող ամրագրումը կատարվել է ըստ առանձին ապրանքների, մինչդեռ գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ գործում է միասնական մոտեցում՝ գյուղատնտեսական բոլոր ապրանքների համար, բացառությամբ մի քանի անուն ապրանքի, մաքսային դրույքաչափի վերին սահման է ամրագրված 15%-ը: Հայաստանը պարտավորվել է զրոյական դրույքաչափ ամրագրել հետևյալ ապրանքային խմբերի համար. գյուղատնտեսական սարքավորումներ, շինարարական սարքավորումներ, բժշկական սարքավորումներ, դեղագործական արտադրանք, թուղթ և թղթից արտադրանք, սև մետաղ և դրանից արտադրանք, գունավոր մետաղներ, գիտական սարքավորումներ և համապատասխանաբար 0, 5.5

[31] *Accession of RA to WTO, AEPLAC working paper No 15, May 2003.*

և 6.5% դրույքաչափերի վրա ամրագրել քիմիական որոշ արտադրատեսակների մաքսերը: Հայաստանը զրոյական դրույքաչափ է ամրագրել նաև քաղաքացիական օդագնացության մեջ օգտագործվող և տեղեկատվական տեխնոլոգիաներին առնչվող մի շարք արտադրանքների մաքսերը՝ համապատասխանաբար միանալով Քաղաքացիական օդագնացության մասին և Տեղեկատվական տեխնոլոգիաների մասին համաձայնագրերին:

Արդյունաբերական, ինչպես նաև գյուղատնտեսական ապրանքների համար ամրագրված մաքսերը բավական ազատական են, ուստի արդյունաբերական ապրանքատեսակներին վերաբերող նկատառումները կիրառելի են նաև գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ: Հայաստանը նաև չի կարող գյուղատնտեսական ապրանքների ներմուծման ծավալների աճի դեպքում բաժնեչափեր սահմանել կամ պաշտպանական հատուկ միջոցներ կիրառել, իսկ արտահանման համար իրավունք չի ունենա գյուղատնտեսական մթերք արտադրողներին արտահանման լրավճարներ տրամադրել: Հայաստանը պարտավորվել է նաև 2009 թ. հունվարի 1-ից ներքին աջակցության մակարդակը 10%-ից նվազեցնել 5%, իսկ գյուղատնտեսական արտադրանքների նկատմամբ կիրառել ավելացված արժեքի հարկը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը ԱՀԿ լիիրավ անդամ դարձավ 2003թ. փետրվարի 5-ին, փորձենք գնահատել առևտրային հաշվեկշռի ապրանքային և աշխարհագրական կառուցվածքի վրա անդամակցության գործընթացի ազդեցությունը՝ համեմատելով 2003 թ. դեկտեմբերի դրությամբ և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի արտաքին առևտրաշրջանառությունը :

2003 թ. ապրանքների արտահանումը կազմել է 678.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելանալով 173 մլն ԱՄՆ դոլարով (տե՛ս աղյուսակ 4.4): Նման աճը պայմանավորված էր արտահանման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող խոշոր ապրանքախմբերի արտահանման ծավալների աճով: Արտահանման մոտ 91.1 մլն ԱՄՆ դոլարի աճը ապահովվել էր «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ ու դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբում ներառված ապրանքների արտահանման հաշ-

վին, ինչպես նաև հիմնականում նոր ձեռնարկությունների բացման, քարերի մշակման որակի էական բարձրացման և Ռուսաստանից ներմուծված չմշակված ադամանդի վերամշակման և արտահանման (մոտ 400 հազար կարատ) արդյունքում: «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալներն ավելացել են շուրջ 45.6 մլն ԱՄՆ դոլարով՝ ալյումինե փայլաթիթեղի, երկաթամիահալվածքի արտահանման ծավալների էական աճի հաշվին: «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման աճը կազմել էր 17.5 մլն ԱՄՆ դոլար: Այս ապրանքախմբի արտահանման աճի տեմպը վերջին տարիներին բավական բարձր է և կայուն, ինչը պայմանավորված է նշված ճյուղի ձեռնարկություններում իրականացված խոշոր ներդրումների արդյունքում բարձրորակ ապրանքներ առաջարկելու հնարավորություններով և սպառման նոր շուկաների նվաճմամբ: Համեմատաբար փոքր ծավալներով արտահանման աճի դինամիկա դրսևորեցին նաև «Հանքահումքային արտադրանք» և «Մանածագործական իրեր» ապրանքախմբերը:

Սակայն պետք է նշել, որ արտահանման ծավալների նման աճը չենք կարող վերագրել սոսկ ԱՀԿ-ին անդամակցությանը, քանզի կարճաժամկետ հեռանկարում այդ գործընթացի ուղղակի ազդեցության գնահատումը երկրի արտահանման, ուստի նաև առևտրային հաշվեկշիռ մնացորդի կրճատման առումով անիրական է: Հեռանկարում, հաշվի առնելով արտահանման ծավալների աճի առկա միտումները և ԱՀԿ-ին անդամակցության ընձեռած հնարավորությունները, ինչպես նաև, հիմք ընդունելով ԿԲ կողմից կատարված կանխատեսումները, կարող ենք եզրակացնել, որ այդ միտումները կպահպանվեն նաև մոտակա տասը տարիների ընթացքում: 2004 - 2015 թթ. ապրանքների և ծառայությունների արտահանումը (դոլարային արտահայտությամբ) ավելի արագ է աճելու, քան ներմուծումը (միջին հաշվով, համապատասխանաբար՝ տարեկան 9.2 և 7.4%): Դա հանդիսանալու է ընթացիկ հաշվի բարելավման հիմնական գործոններից մեկը, ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը 2010 թ. կայունանալու է ՀՆԱ 4.5%-ի շրջակայքում՝ 2003թ. համար ծրագրված 6.5%-ի փոխարեն[32]:

---

[32] *Կանխատեսումները իրականացվել են ՀՀ ԿԲ կողմից՝ 2003թ. առաջին եռամսյակի փաստացի ցուցանիշների հիման վրա:*

*Աղյուսակ 4.4*

## 2002 և 2003թթ. հունվար-դեկտեմբեր ամիսների դրությամբ արտահանման և ներմուծման ծավալների համեմատական աղյուսակ՝ ըստ ապրանքախմբերի

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | Արտահանում | | | Ներմուծում | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2002թ. հունվար-դեկտեմբեր | 2003թ. հունվար-դեկտեմբեր | աճի տեմպը, % | 2002թ. հունվար-դեկտեմբեր | 2003թ. հունվար-դեկտեմբեր | աճի տեմպը, % |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 505159.7 | 678079.8 | 134.2 | 987155.5 | 1269445.2 | 128.6 |
| այդ թվում՝ | | | | | | |
| Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք | 2678.4 | 5698.9 | 212.8 | 27677.9 | 32329.5 | 116.8 |
| Բուսական ծագման արտադրանք | 1753.9 | 3116.0 | 177.7 | 74393.5 | 74569.9 | 100.2 |
| Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր | 0.7 | 176.6 | 26968.8 | 18395.5 | 22648.1 | 123.1 |
| Պատրաստի սննդի արտադրանք | 54779.2 | 72227.3 | 131.9 | 79328.4 | 92936.4 | 117.2 |
| Հանքահումքային արտադրանք | 42124.0 | 47679.6 | 113.2 | 171413.0 | 176690.2 | 103.1 |
| Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք | 1950.7 | 2985.8 | 153.1 | 62808.3 | 83068.8 | 132.3 |
| Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր | 6320.4 | 4807.0 | 76.1 | 22145.3 | 28480.9 | 128.6 |
| Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր | 645.9 | 780.6 | 120.9 | 1787.6 | 1805.0 | 101.0 |
| Փայտ և փայտյա իրեր | 1283.9 | 1526.4 | 118.9 | 7187.9 | 8622.5 | 120.0 |
| Թուղթ և թղթից իրեր | 722.5 | 1022.9 | 141.6 | 18509.6 | 22145.9 | 119.6 |
| Մանածագործական իրեր | 28626.6 | 30866.5 | 107.8 | 36084.7 | 39610.8 | 109.8 |
| Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ | 359.4 | 188.9 | 52.5 | 4255.8 | 4324.6 | 101.6 |
| Իրեր քարից, գիպսից, ցեմենտից | 2958.3 | 1619.8 | 54.8 | 19214.5 | 21811.1 | 113.5 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր | 258327.7 | 349440.7 | 135.3 | 213471.1 | 329567.8 | 154.4 |
| Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր | 44777.8 | 90379.9 | 201.8 | 55691.9 | 76366.9 | 137.1 |
| Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ | 21434.4 | 20543.5 | 95.8 | 103374.5 | 132428.0 | 128.1 |
| Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ | 15033.0 | 14070.4 | 93.6 | 39867.1 | 73147.5 | 183.5 |
| Սարքեր և ապարատներ | 19225.8 | 28483.9 | 148.2 | 20487.1 | 33531.9 | 163.7 |
| Տարբեր արդյունաբերական ապրանքներ | 1406.9 | 1827.0 | 129.9 | 11035.3 | 15112.8 | 136.9 |
| Արվեստի ստեղծագործություններ | 750.1 | 638.3 | 85.1 | 26.3 | 246.6 | 936.8 |

Ներմուծումը 2003 թ. կազմել է 1269.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 282.3 մլն ԱՄՆ դոլարով (տե՛ս աղյուսակ 4.4): Ներմուծման աճը պայմանավորված էր «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ ու դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալների 116.1 մլն ԱՄՆ դոլար աճով՝ կապված նոր արտադրական կարողությունների գործարկման և ներմուծվող անմշակ քարերի միջին չափի ավելացման հետ: «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի ներմուծման ծավալները ավելացել են 5.3 մլն ԱՄՆ դոլարով: Չնայած 2002թ. նշված ապրանքախմբի ներմուծման ծավալները կրճատվել էին, սակայն դա ժամանակավոր բնույթ ուներ: «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի ներմուծումը ավելացել էր 29 մլն ԱՄՆ դոլարով: Այդ ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճը երկրի բարձր տնտեսական ակտիվությամբ ու կապիտալ ներդրումների մեծ ծավալներով պայմանավորված՝ ներդրումային ապրանքների, բենզինի ու նավթամթերքների նկատմամբ պահանջարկի մեծացման արդյունք էր: Մյուս կողմից, ներդրումային ապրանքների ներմուծման ակնկալվող աճը բացատրվում էր մի քանի

խոշոր ձեռնարկությունների սեփականաշնորհմամբ և Ռուսաստանի Դաշնության հետ կնքված՝ «գույք՝ պարտքի դիմաց» գործարքի արդյունքում ներդրողների կողմից ներդրումներ իրականացնելու պատրաստակամությամբ: «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի ներմուծումը ավելացել է 13.6 մլն ԱՄՆ դոլարով: Սպառողական ապրանքների ներմուծման ծավալների վրա էական ազդեցություն է ունեցել համախառն պահանջարկի աճը, ինչպես նաև բանկերի կողմից տրամադրվող սպառողական վարկերի աճի միտումը, որը դրսևորվել է 2003 թ. սկսած, և իր արտահայտությունն է գտել սպառողական ապրանքների ներմուծման ծավալների ավելացման մեջ:

2003 թվականին համախառն պահանջարկի զգալի աճը հանգեցրել է ներմուծվող գրեթե բոլոր ապրանքախմբերի ծավալների աճի: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ Հայաստանում ներմուծման փոխարինիչների արտադրության գործընթացը զգալիորեն դանդաղել է:

2003 թ. զգալի դրական տեղաշարժեր են դիտվել նաև երկրի առևտրային հաշվեկշռի աշխարհագրական կառուցվածքում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտաքին ապրանքաշրջանառությունը ԱՊՀ երկրների հետ ավելացել է 38.3 մլն ԱՄՆ դոլարով, իսկ հեռավոր արտասահմանյան երկրների հետ՝ 416.9 մլն ԱՄՆ դոլարով, ընդ որում՝ արտահանումը, համապատասխանաբար՝ 30.4 և 142.5 մլն ԱՄՆ դոլարով, իսկ ներմուծումը՝ 7.9 և 274.4 մլն ԱՄՆ դոլարով (տե՛ս գծապատկեր 4.1): Առևտրային հաշվեկշռի աշխարհագրական կառուցվածքում զգալիորեն ավելացել է արտահանումը Եվրոպական Միության երկրներ՝ կազմելով 258.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 60.9 մլն ԱՄՆ դոլարով: ԵՄ երկրների բաժինը ներմուծման ընդհանուր ծավալում կազմել էր 372.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 116.7 մլն դոլարով:

Կարճաժամկետ հեռանկարում ԱՀԿ-ին անդամակցությունը անմիջապես չի հանգեցնի էական տեղաշարժերի Հայաստանի արտաքին առևտրային հոսքերում, մասնավորապես՝ արտահանման ծավալներում և կառուցվածքում: Ներքին շուկայում չի ուժեղանա նաև օտարերկրյա մրցակցությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում արտաքին առևտրի ռեժիմն արդեն բավականաչափ ազատական է:

*Գծապատկեր 4.1*

**Արտահանման և ներմուծման ծավալներն ըստ ԱՊՀ և ոչ ԱՊՀ երկրների, 2002 և 2003թթ. հունվար-դեկտեմբեր ամիսների դրությամբ**







Սակայն երկարաժամկետ հեռանկարում Հայաստանի գործարարներն ու արտահանողները կշահեն ԱՀԿ կանոններով երաշխավորվող կանխատեսելիությունից ու հստակությունից, այն է՝ ամրագրված մաքսեր, ԱԱԲ և ազգային մոտեցման սկզբունքների կիրառում բոլոր անդամների կողմից:

Հայաստանը կարող է լուրջ դժվարություններ ունենալ՝ կապված գյուղատնտեսական ոլորտում հարկային արտոնությունների,

մասնավորապես՝ ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) մասով արտոնությունների կիրառման գործելակարգի փոփոխության հետ: Այդ պարտավորության կատարումը կապված է մի շարք դժվարությունների հետ և տնտեսական ու սոցիալական բացասական հետևանքներ կունենա: Գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ ԱԱՀ կիրառումը կխոչընդոտի արտահանման ծավալների մեծացումը և առևտրային հաշվեկշռի մնացորդի կրճատումը: Իրավիճակը կարող է վատթարանալ այն պատճառով, որ, ըստ ԱԱՀ-ի մասին փոփոխված օրենքի, գյուղատնտեսական մթերք արտադրողների կողմից գյուղատնտեսական արտադրանքի, ինչպես նաև անասնաբուժական միջոցների իրացումը 2009 թ. հունվարի 1-ից ենթակա կլինեն ԱԱՀ-ով հարկման, այն դեպքում, երբ բույսերի պաշտպանության քիմիական միջոցների, պարարտանյութերի և սերմերի իրացումը ազատված կլինեն ԱԱՀ-ից: Այդ դեպքում գյուղատնտեսական մթերք արտադրողները, չկարողանալով բույսերի պաշտպանության միջոցների կամ պարարտանյութերի մատակարարներին վճարված ԱԱՀ գումարները հաշվանցել, կենթարկվեն կրկնակի հարկման, հարկադրված կբարձրացնեն գյուղատնտեսական արտադրանքների գները, ինչն էլ իր հերթին կհանգեցնի գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների կրճատման:

Ավելին, լրավճարման 5% նվազագույնի սահմանափակում ունենալով, կառավարությունը չի կարողանա գյուղատնտեսական մթերք արտադրողների վրա հարկային բեռի ծանրացումը փոխհատուցել՝ նրանց ուղղակի լրավճարներ տրամադրելու միջոցով:

Կարճաժամկետ հեռանկարում ծառայությունների ոլորտում ՀՀ ստանձնած պարտավորությունները ԱՀԿ շրջանակներում նշանակալի բարերար ազդեցություններ չեն ունենա, քանզի առևտրի գործող ռեժիմը արդեն բավականաչափ ազատական է, բացառությամբ մի քանի ճյուղերի (մասնավորապես՝ հեռահաղորդակցություն և ֆինանսական ծառայություններ):

Երկարաժամկետ հեռանկարում ՀՀ ծառայությունների ոլորտի մասնակիցները ԱՀԿ անդամ երկրներ ծառայություններ արտահանելիս կարող են շահել՝ օգտվելով ԱԱԲ գործելակարգից: Հնարավոր է նաև, որ առանձին ճյուղերում օտարերկրյա մրցակցությունը մեծանա՝ այդ ճյուղերի զարգացման և ազատականացման հետ

մեկտեղ, օրինակ՝ հեռահաղորդակցության ծառայությունների ճյուղը: Այդ ճյուղում առկա մենաշնորհը վերացնելու դեպքում (նույնիսկ եթե դա կատարվի մինչև 2013 թ. դեկտեմբերի 31-ը, այսինքն՝ մինչև մենաշնորհի ժամկետը լրանալը) Հայաստանը պետք է ազատականացնի այդ ճյուղը ամբողջությամբ: Դա կարող է հանգեցնել, մասնավորապես՝ բջջային հեռախոսային ծառայությունների շուկայում, ընդհանուր մրցակցության և, ամենայն հավանականությամբ, օտարերկրյա մրցակցության աճի:

Երկարաժամկետ հեռանկարում ֆինանսական ծառայությունների ոլորտում (մասնավորապես՝ բանկային և ապահովագրական ծառայությունների ճյուղերում) օտարերկրյա մրցակցությունը կարող է մեծանալ՝ տարածաշրջանում կայունության հաստատման և Հայաստանում բանկային ծառայությունների ճյուղի և ֆինանսական այլ շուկաների զարգացման հետ մեկտեղ: Նման հեռանկարը ավելի իրատեսական կարող է լինել, եթե Հայաստանը կարողանա ֆինանսական զարգացած ենթակառուցվածքների շնորհիվ տարածաշրջանում առաջատար դիրք գրավել:

# ԲԱԺԻՆ 5

# ԱՀԿ-ԻՆ ՀՀ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ[33]

## 5.1. ՀՀ արտահանումը կարգավորող օրենսդրական դաշտը

Հայաստանի Հանրապետությունը 1991 թվականին անկախություն հռչակելուց հետո ձեռք բերեց ինքնուրույն, լիիրավ արտաքին տնտեսական սուբյեկտի կարգավիճակ, իսկ միջազգային տնտեսական հարաբերությունները դարձան հանրապետության զարգացման կարևորագույն գործոններից մեկը: Նման պայմաններում ՀՀ-ն բախվեց լուրջ դժվարությունների, քանի որ մինչ այդ լինելով ԽՍՀՄ կազմում, նրա տնտեսությունը օրգանապես շաղկապված էր ողջ երկրին և, ըստ էության, կախվածության մեջ էր մյուս միութենական հանրապետություններից ու տարածաշրջաններից: Հանրապետությունը պետք է լուծեր բավական բարդ խնդիր՝ մուտք գործել իր համար նոր տնտեսական կառույց ու արտահանել արտադրանքը միջազգային շուկա: Այս խնդիրների հաջող լուծումը, բնականաբար, զգալիորեն կախված էր Առևտրի համաշխարհային կազմակերպությունից (ԱՀԿ), որի հիմնական առաքելությունը համաշխարհային առևտրի կարգավորումն է:

ՀՀ արտաքին տնտեսական կապերի և արտահանման ակտիվացումը սկզբնավորվեց ընդհանուր բնույթի տնտեսական օրենքների և օրենսդրական ակտերի ընդունմամբ, որոնք ներառում էին նաև ձեռնարկությունների և կազմակերպությունների արտաքին տնտեսական գործունեության կարգավորման հիմնահարցերը: Ընդունվեցին որոշումներ, որոնք նպատակաուղղված էին տնտեսավարող սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության զարգացմանը և արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտների ձևավորմանը:

---

[33] *Տվյալ բաժնի շարադրանքի հիմքում տ.գ.դ., պրոֆ. Թ. Թորոսյանի գիտական հայացքներն են:*

Այդ տեսանկյունից նախ անհրաժեշտ է առանձնացնել «Սեփականության մասին» ՀՀ օրենքի տեղն ու դերը, որը ՀՀ-ում սահմանեց համատեղ ձեռնարկությունների, արտասահմանյան երկրների և միջազգային կազմակերպությունների սեփականության իրավական կարգավիճակը: Օտարերկրյա սուբյեկտներին թույլատրվեց ձեռք բերել գույքի, արդյունաբերական և այլ բնույթի ձեռնարկությունների, շենքերի ու շինությունների սեփականության տիրապետման իրավունք:

«Ձեռնարկությունների և ձեռնարկչատիրական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանվեց, որ օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք և կազմակերպությունները ՀՀ-ում ունեն ձեռնարկությունների հիմնադրման և սեփականության իրավունքով տնօրինման իրավունք: Նույն օրենքով սահմանվեց ձեռնարկությունների շուրջ երկու տասնյակ իրավակազմակերպչական ձև: Համաձայն վերոհիշյալ օրենքի՝ օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք կարող են, ինչպես ՀՀ քաղաքացիները, հանդես գալ իբրև ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող լիիրավ սուբյեկտներ:

Օտարերկրյա ֆիրմաների հետ ՀՀ ձեռնարկությունների և կազմակերպությունների համագործակցության բնագավառում լայն հնարավորություններ ընձեռեց 1992թ. հունվարի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում արտաքին տնտեսական գործունեության մասին» նախագահի հրամանագիրը, որով վերացվեց արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների գրանցման կարգը և թույլատրվեց բոլոր տնտեսավարող սուբյեկտներին ազատորեն զբաղվել արտաքին տնտեսական գործունեությամբ: Սկսվեց արտաքին տնտեսական գործունեության ազատականացման գործընթացը: 1992թ. հունվարի 4-ի՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում արտարժութային գործառնությունների կարգավորման մասին» նախագահի հրամանագրով հանրապետության ձեռնարկություններին և կազմակերպություններին թույլատրվեց իրականացնել միջնորդական արտարժութային գործառնություններ: «Շահութահարկի մասին» օրենքով օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ գործող ձեռնարկություններին տրվեցին շահութահարկի մուծման արտոնություններ, եթե տվյալ

ձեռնարկության կանոնադրական ֆոնդում արտասահմանյան կապիտալը կազմում է ոչ պակաս, քան 500 մլն դրամ:

ՀՀ կառավարության 1995 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 124՝ «Հայաստանի Հանրապետությունում ապրանքների արտահանման ու ներմուծման ոչ տարիֆային կարգավորման կարգի մասին» որոշմամբ վերջնականապես ամրագրվեց արտաքին առևտրի ազատականացման գործընթացը: Վերոհիշյալ որոշմամբ հաստատվեց այն ապրանքների անվանացանկը, որոնց նկատմամբ սահմանվում են արտահանման նվազագույն հսկիչ գներ: Այդ գները սահմանվում են՝ հաշվի առնելով միջազգային շուկայում առկա գների փաստացի մակարդակը և նպատակ ունեն կանխելու ՀՀ պետական բյուջե եկամուտների չստացումը՝ տվյալ ապրանքների՝ միջազգային գներից ցածր գներով արտահանման դեպքում: Եթե սկզբնական շրջանում ապրանքների ցանկում ներառված էին այնպիսի ապրանքներ, ինչպիսիք են կոնյակը, կաբելային արտադրանքը, կաուչուկը, մետաղները և այլն, ապա ներկայումս այդ անվանացանկը խիստ սահմանափակված է:

2001 թ. հունվարի 1-ից գործում է «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրքը», որի շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է միասնական մաքսային քաղաքականություն: Վերջինիս նպատակն է ապահովել հանրապետության մաքսային տարածքում մաքսային հսկողությունը և արտաքին ապրանքաշրջանառությունը, պահպանել ներքին շուկան, խրախուսել արտահանումը և կարգավորել ներմուծումը:

Մաքսային գործը կազմակերպում և իրականացնում են պետական հատուկ մաքսային մարմինները: Պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության մաքսատներն ունեն տարբեր բեռնվածություն թե՛ արտաքին առևտրի ծավալներով, թե՛ իրականացվող գործարքների քանակով:

Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող բոլոր ապրանքները մաքսային ձևակերպման և հսկողության են ենթարկվում: Հայաստանի Հանրապետությունում սահմանվել է 15 մաքսային ռեժիմ:

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով նախատեսվում են նաև գործունեության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ մաքսային պահեստի, անմաքս ապրանքների խանութի

հիմնումը, մաքսային պահեստում ապրանքների պահպանությունը, մաքսային միջնորդական գործունեությունը և այլն:

Մաքսային օրենսգրքում կարևոր տեղ է զբաղեցնում մաքսատուրքերին վերաբերող մասը: Այստեղ տրված են Հայաստանի Հանրապետության մաքսատուրքերի դրույքաչափերը: Հայաստանի Հանրապետությունում գործում են հիմնականում 0% և 10% դրույքաչափերը՝ ապրանքների ներմուծման և արտահանման համար:

1993 թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունեց «Ներմուծվող և արտահանվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) լիցենզավորման և քվոտավորման կարգի մասին» թիվ 520 որոշումը, որը ՀՀ-ում արտոնագրման համակարգի ստեղծման առաջին փորձն էր:

Ըստ 1995թ. ՀՀ կառավարության հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից արտահանվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) լիցենզավորման կարգի մասին» թիվ 17 որոշման, արտոնագրման կարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսավարող բոլոր սուբյեկտների վրա՝ անկախ սեփականության ձևից և պետական գրանցման վայրից:

Արտոնագրերը տրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված՝ լիցենզավորման ենթակա ապրանքների ցանկին համապատասխան: Դրանք տրվում են տնտեսավարող սուբյեկտներին և ենթակա չեն այլ անձանց փոխանցման:

Լիցենզավորվում են Եվրոմիության երկրներ արտահանվող տեքստիլը և տեքստիլ արտադրանքը, Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիները և բույսերը, ինչպես նաև՝ դեղամիջոցները և դրանց արտադրության համար հումքը, գունավոր մետաղները, ներառյալ երկրորդականը, դրանց համաձուլվածքները, փոշիները, օքսիդները, կիսաֆաբրիկատները, գլանվածքը, գունավոր մետաղների ջարդոնը և թափոնները, գունավոր և սև մետաղներից արտադրանքը, սև մետաղի ջարդոնը և թափոնը:

Հայաստանի հարկային համակարգը ամբողջովին վերափոխվել է 1992 թվականից: Այժմ գործում է երկու տիպի անուղղակի

հարկ՝ ավելացված արժեքի (VAT) և ակցիզային հարկը, որոնք գանձվում են ներմուծված և տեղական արտադրանքից:

Ակցիզային հարկը սահմանվում է համաձայն Հայաստանի Հանրապետության «Ակցիզային հարկի մասին» օրենքի: Այն սահմանված է ապրանքների ներմուծման կամ տեղական արտադրանքի արտահանման համար:

Հայաստանի Հանրապետության ակցիզային հարկը վճարվում է աղյուսակ 5.1-ում ներկայացված դրույքաչափերով:

*Աղյուսակ 5.1*

**Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ակցիզային հարկը**

| Ապրանքի ծածկագիրը | Ապրանքախմբի անվանումը | Հարկման բազայի միավորը | Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ) |
|---|---|---|---|
| 2203 | Գարեջուր | 1 լ | 70 |
| 2204<br><br>220410 | Խաղողի և այլ գինիներ, գինեմյուղ, այդ թվում՝<br>Փրփրուն գինիներ, շամպայն | 1 լ | 100<br><br>180<br>300 |
| 2205 | Վերմուտ և խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական և համային էքստրակտներ | 1 լ | 500 |
| 2206 | Խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու /տանձի սիդր/, մեղրաըմպելիք) | 1 լ | 180 |
| 2207 | Էթիլային սպիրտ | 1 լ (100 % սպիրտի վերահաշվարկով) | 600 |
| 2208<br><br>220820<br><br>220860<br>220870 | Սպիրտային խմիչքներ՝<br>այդ թվում՝<br>Խաղողի գինու կամ գինեմյուղի թորումից ստացվող սպիրտային թուրմեր (կոնյակ, արմանյակ և այլն)<br>Օղի, լիկյորներ և մրգաղիներ | 1 լ | 1,500<br><br>1,200<br>300 |

| | | | |
|---|---|---|---|
| 2403 | Ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ | 1 կգ | 1,500 |
| 2709 | Հում նավթ և նավթամթերք | 1 տ | 27,000 |
| 2710 00 690 | Դիզելային վառելիք | 1 տ | 11,500 |
| 2711 (բացառության բ 2711 11 և 2711 21) | Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ (բացառությամբ բնական գազի) | 1 տ | 1,000 |

## 5.2. ԱՀԿ դերը արտահանման համակարգի կարգավորման գործում

Արտահանման հարցերը սկզբնական շրջանում կարգավորվում էին Տարիֆների և առևտրի գլխավոր համաձայնագրով (GATT - ՏԱԳՀ), որը ստեղծվել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Դրա ստեղծման նպատակն էր՝ աջակցել միջազգային առևտրին և նրա ազատականացմանը, ինչպես նաև կարգավորել զբաղվածության, ներդրումների և ծառայությունների կանոնները: 1946 թ. ՏԱԳՀ 23 հիմնադիրների միջև սկսվեցին տարիֆների վերաբերյալ բանակցություններ և արդյունքում նախատեսվեցին տարիֆային (սակագնային) զեղչեր: Տարիֆային զեղչերը և կանոնները միասին, որն անվանվեց Տարիֆների և առևտրի գլխավոր համաձայնագիր, ուժի մեջ մտավ 1948թ.: Չնայած ՏԱԳՀ-ն պետք է ունենար ժամանակավոր բնույթ, սակայն գործեց մինչ վերափոխումը Առևտրի համաշխարհային կազմակերպության (WTO-ԱՀԿ):

Միջազգային առևտրի ազատականացումը կատարվեց ՏԱԳՀ հովանավորությամբ՝ առևտրային բանակցությունների կամ առևտրային «ռաունդների» միջոցով:

Ամենավերջինը և խոշորագույնը Ուրուգվայի ռաունդն էր, որտեղ քննարկվել են մի շարք հարցեր: Կարևոր դեր են խաղացել նաև Քենեդիի և Տոկիոյի ռաունդները:

ՏԱԳՀ գործունեության երեք հիմնական սկզբունքներն էին.

- հրաժարվել խտրականությունից,
- վերացնել ոչ տարիֆային սահմանափակումները,
- առևտրային վեճերի լուծման համար երկրների միջև անցկացնել խորհրդակցություններ:

ՏԱԳՀ ժառանգորդը և Ուրուգվայի ռաունդի մարմնավորողը դարձավ ԱՀԿ-ը, որ հիմնադրվեց 1995թ.: ԱՀԿ-ի հիմնական գործառույթներն են.

- իրագործել առևտրատնտեսական պայմանագրեր,
- գործել որպես բազմակողմանի առևտրային բանակցությունների ֆորում,
- վերանայել ազգային առևտրային քաղաքականությունները,
- լուծել առևտրային վեճերը,
- համագործակցել միջազգային այլ կազմակերպությունների հետ:

ԱՀԿ-ն ընդգրկում է ավելի մեծ թվով պետություններ, քան ՏԱԳՀ-ն: Բացի այդ, ԱՀԿ հիմնական սկզբունքներն են.

- առանց խտրականության առևտուր,
- կանխատեսվող և ընդլայնվող մուտք շուկաներ,
- արդար մրցակցության խթանում,
- զարգացման և տնտեսական բարեփոխումների խրախուսում:

ԱՀԿ հիմնական տարբերությունները ՏԱԳՀ-ից հետևյալն են: ՏԱԳՀ-ն բազմակողմանի համաձայնագրերի մի ամբողջություն էր, առանց ինստիտուցիոնալ կառուցվածքի և միայն ուներ օժանդակող քարտուղարություն, իսկ ԱՀԿ-ին բնորոշ է մշտական գործող կառույցը և քարտուղարությունը: ՏԱԳՀ երկրների պարտավորությունները կրում էին պայմանական բնույթ, իսկ ԱՀԿ-ինը՝ մշտական: ՏԱԳՀ համաձայնագրերը վերաբերում էին միայն ապրանքների առևտրին, իսկ ԱՀԿ-ն ընդգրկում է նաև ծառայությունների առևտրի ոլորտը և մտավոր սեփականության ու գյուղատնտեսության զարգացման հարցերը: ՏԱԳՀ-ն լինելով բազմակողմանի համաձայնագրերի ամբողջություն, այնուամենայնիվ ուներ մի քանի համաձայնագրեր, որոնց միանալը կամավորական սկզբունքով էր: Իսկ ԱՀԿ բոլոր համաձայնագրերն ունեն բազմակողմանի բնույթ: ԱՀԿ երկրների միջև ծագող տնտեսական վեճերի լուծման համակարգը շատ ավելի արագ և արդյունավետ է գործում, իսկ ընդունվող որոշումները ապահովագրված են հնարավոր կասեցումներից: Բացի այդ, ԱՀԿ-ն ընդգրկում է մոտ 20 համաձայնագիր, որոնք

ներառում են ապրանքների և ծառայությունների առևտուրը, ինչպես նաև առևտրին առնչվող հարակից ոլորտները կարգավորող դրույթներ: Բնականաբար, այս կառույցի կազմի մեջ Հայաստանի ընդգրկումը հնարավորություններ է ստեղծում արտաքին առևտրի և արտահանման համակարգի կարգավորման համար:

## 5.3. ԱՀԿ անդամակցությունից Հայաստանի արտաքին տնտեսական կապերի և արտահանման ակնկալիքները

Դեռևս 1992 թ. Հայաստանը հայտ էր ներկայացրել Տարիֆների և առևտրի գլխավոր համաձայնագրին (GATT- ՏԱԳՀ)՝ դիմորդի կարգավիճակ ստանալու համար: 1993թ. հարցի քննարկման նպատակով ստեղծվեց աշխատանքային խումբ: 1995թ. ՏԱԳՀ-ն վերափոխվեց Առևտրի համաշխարհային կազմակերպության (WTO - ԱՀԿ), և Հայաստանի Հանրապետությունը փաստորեն դիմեց ԱՀԿ-ին անդամակցելու համար:

Սակայն ԱՀԿ անդամակցության գործընթացին խոչընդոտում էին մի շարք հանգամանքներ: Դրանցից կարևորագույններն էին՝ ներքին արտադրության չափազանց դանդաղ աճը և առևտրային հաշվեկշռի պակասուրդի մեծացումը: Հայաստանի Հանրապետությունը համաշխարհային հանրության կողմից դասվում է անցման շրջանի տնտեսությունների շարքը՝ չհամարվելով հետամնաց երկիր և այդ պատճառով չի օգտվում ԱՀԿ շրջանակներում նման երկրների համար նախատեսված արտոնություններից: Մյուս կողմից, հանրապետության համար դժվար է ապահովել սեփական արտադրանքի մրցունակությունը միջազգային շուկայում:

1996 - 1998 թթ. ընթացքում Ժնևում տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետության աշխատանքային խմբերի մի շարք հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են ԱՀԿ քարտուղարությանը ներկայացված փաստաթղթերը:

Հայաստանի Հանրապետությունը մասնակցել է նաև ԱՀԿ քարտուղարության կողմից կազմակերպված երկկողմ բանակցություններին ԱՀԿ անդամ պետությունների հետ, որոնց ընթացքում քննարկվել են արտաքին առևտրին, այդ թվում՝ և արտահանման հետ առնչվող բազմաբնույթ հարցեր:

1996 թվականին ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցության գործընթացի շրջանակներում տեղի ունեցան երկկողմ բանակցություններ Հայաստանի Հանրապետության և ԱՄՆ պաշտոնական պատվիրակությունների միջև: Այլ հարցերի հետ մեկտեղ, քննարկվեց նաև ապրանքների առևտրում մաքսային սակագնի սահմանների հարցը: Ապրանքների առևտրում ամերիկյան կողմը առաջարկեց ամրագրել Հայաստանի Հանրապետությունում գործող մաքսատուրքի դրույքաչափի վերին սահմանը 15% մակարդակով և միանալ ԱՀԿ շրջանակներում գործող մի շարք երկրների, որոնք համաձայնության են եկել որոշակի ապրանքախմբերի համար ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը սահմանել 0%: Մի շարք ապրանքների համար առաջարկվեցին առավելագույն դրույքաչափեր՝ 5,5% (անօրգանական քիմիայի արտադրանք, օրգանական քիմիայի միացություններ) և 6,5% (պարարտանյութ, եթերային յուղեր և էսենցիա, լուսանկարչական ապրանքներ, կինոապրանքներ, պլաստմասսա և այլն):

Հետագայում Հայաստանը զգալիորեն կարգավորեց արտաքին տնտեսական գործունեության մեթոդները՝ ելնելով ԱՀԿ անդամ դառնալու նպատակից: Հայաստանի Հանրապետության անդամակցումը ԱՀԿ-ին պահանջեց իրականացնել որոշակի փոփոխություններ՝ մասնավորապես հարկային և մաքսային համակարգերում:

ԱՀԿ-ին ՀՀ անդամակցությունը կարող է նպաստել արտասահմանյան ներդրումների ներհոսքին, որոնք այդքան անհրաժեշտ են հանրապետության տնտեսությունը զարգացնելու և արտահանումը խրախուսելու համար: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ԱՀԿ անդամ լինելը նշանակում է, որ երկիրն ունի միջազգային պահանջներին համապատասխանող օրենսդրական դաշտ:

Հանրապետությունը կարող է ավելացնել իր արտահանման ծավալները, քանի որ առևտրում հաստատվում է առավելապես բարենպաստ ռեժիմ և նույնիսկ, եթե արտահանվող ապրանքների գները լինեն ավելի ցածր, քան միջազգային շուկայում (համեմատաբար էժան աշխատուժ ունենալու հետևանքով), ապա չի կիրառվի որևէ սահմանափակում:

Հայաստանը կկարողանա ԱՀԿ շրջանակներում բարձրացնել հանրապետության շահերից բխող հարցեր, որոնք վերաբերում են

առևտրային համակարգին, հատկապես երկկողմ համագործակցության դեպքում:

ՀՀ-ն կարող է հայտնվել բավականին բարենպաստ վիճակում, քանի որ ունի ամենաազատականացված առևտրային ռեժիմներից մեկը. դրա ապացույցն այն է, որ ԱՀԿ անդամ երկրները հիմնականում կիրառում են 15% ներմուծման մաքսատուրք: Այս պայմաններում կարող են բարձրացվել նպատակային հարցեր, այսինքն՝ այլ պետությունները ազատականացված առևտրային քաղաքականություն իրականացնեն Հայաստանի նման փոքր երկրների նկատմամբ:

ԱՀԿ համաձայնագրերը պաշտպանում են ներքին արտադրողների շահերը, իսկ հանրապետության համար այս գործոնի դերը և նշանակությունը, արտահանման ծավալները մեծացնելով և տնտեսության կայուն զարգացումը ապահովելու պայմաններում, աստիճանաբար մեծանալու է:

Դառնալով ԱՀԿ անդամ, ՀՀ ապահովում է համապատասխան իրավական դաշտ և կարող է պաշտպանել սեփական արտադրողների շահերը: Ընդ որում, ներմուծման ծավալների անկանխատեսելի աճի կամ արտահանման ծավալների կրճատման և ներմուծման ավելացման դեպքերում ԱՀԿ անդամ երկիրը կարող է կիրառել առևտրային պաշտպանական միջոցներ: Նման միջոցառումներ կարող են կիրառվել նաև, եթե որոշակի ապրանքների ներմուծման ծավալների աճը վտանգում է երկրի տվյալ ոլորտի ներքին արտադրողների շահերը:

ԱՀԿ համաձայնագրերը հնարավորություն են ընձեռում անդամ-երկրներում կիրառելու ոչ տարիֆային սահմանափակումներ, կանխարգելելու համար անորակ, առողջությանը և շրջակա միջավայրին վնաս և վտանգ ներկայացնող ապրանքների մուտքը Հայաստանի ներքին շուկա:

ԱՀԿ համակարգը զարգացած և խոշոր պետություններին արգելում է տնտեսապես ճնշել փոքր, թույլ և զարգացող երկրներին:

ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը մեծ նշանակություն ունի նաև Եվրոպական միության հետ առևտրատնտեսական հարաբերությունները զարգացնելու առումով: Այսինքն, ԱՀԿ-ին անդամակցությունը կարելի է համարել հանրապետության առաջին լուրջ քայլը Եվրոպական միության անդամակցությանը նախապատ-

րաստվելու համար: Իսկ դա Հայաստանի համար կարևոր խնդիր է, քանի որ արդեն ընդգրկված է Եվրոխորհրդի կազմի մեջ, այսինքն՝ ճանաչված է որպես եվրոպական երկիր:

ԱՀԿ-ին անդամակցությունը չի խոչընդոտում Հայաստանին ընդգրկվելու այլ տնտեսական դաշինքների և միությունների մեջ: Հակառակը, ԱՀԿ պահանջներին համապատասխան օրենսդրական վերափոխումները կհեշտացնեն տարբեր տնտեսական միավորումներում ընդգրկվելը և կապահովեն համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի լիարժեք ինտեգրումը:

Ամփոփելով նշվածը, կարելի է արձանագրել այն հիմնական առավելությունները, որ տալիս է ԱՀԿ-ին անդամակցությունը:

- Ձգալիորեն կբարձրանա Հայաստանի Հանրապետության հեղինակությունը միջազգային շուկայում՝ որպես հուսալի գործընկեր, իսկ դա, իր հերթին, կնպաստի արտասահմանյան կապիտալի ներհոսքին:
- Հայաստանի Հանրապետությունը կկարողանա արտահանել իր ապրանքները բարենպաստ պայմաններով՝ ԱՀԿ անդամ պետություններ:
- Հնարավորություն կստեղծվի բարձրացնելու հանրապետության ապրանքների մրցունակությունը միջազգային շուկայում:
- ՀՀ-ն կարող է առաջադրել իր շահերը շոշափող առևտրային հարցեր և դրանք քննարկել ԱՀԿ անդամ ցանկացած երկրի հետ:
- Ներքին շուկան երաշխավորված ձևով կպաշտպանվի ԱՀԿ նախատեսված տնտեսական պայմաններով ու լծակներով:
- Օրենսդրական դաշտը կհամապատասխանեցվի միջազգային պահանջներին:
- Կնպաստի օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման ծավալների աճին:
- Երկրների միջև առաջացած տնտեսական վեճերը կկարգավորվեն ԱՀԿ լծակներով:
- ԱՀԿ համաձայնագրերը մեծ դաշտ են ապահովում տեղական արտադրողների շահերը պաշտպանելու և նրանց արտադրանքի մրցունակությունը ներքին և արտաքին շուկաներում բարձրացնելու ուղղությամբ:

- Թույլ կտա իրականացնել տարածաշրջանային իրական տնտեսական ինտեգրման քաղաքականություն:
- Կարևոր է Եվրոպական Միության հետ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման առումով, կարող են առաջանալ Եվրոպական Միության հետ ազատ առևտրի գոտու ստեղծման նախադրյալներ, իսկ հետագայում կարող են հիմք հանդիսանալ ԵՄ-ին լիարժեք անդամակցության նախապատրաստման համար:
- Հայաստանը կստանա արտահանման հնարավորություններ միջազգային շուկայում և դրանով իսկ կկարողանա կարգավորել իր մակրոցուցանիշները:

Միաժամանակ ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը կարող է սկզբնական շրջանում որոշ դժվարությունների և բացասական հետևանքների պատճառ դառնալ: Այսպես. հանրապետության ազգային տնտեսությունը խիստ կախվածության մեջ կհայտնվի արտաքին շուկայից, մեծ ծախսեր կպահանջվեն միջազգային շուկայում մրցակցությանը դիմակայելու համար, ներմուծման ավելացման հաշվին կարող է վատթարանալ վճարային հաշվեկշիռը, սկզբնական շրջանում ներքին արտադրողները կարող են ֆինանսական զգալի կորուստներ ունենալ և այլն:

## 5.4. Հայաստանի արտահանման դինամիկան և կառուցվածքը ԱՀԿ անդամակցությունից առաջ և հետո

Ինչպես փաստում են աղյուսակ 5.2-ի տվյալները, 1993 - 2003 թվականների ընթացքում ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը ավելացել է գրեթե 5 անգամ, այդ թվում՝ ներմուծումը՝ 5, իսկ արտահանումը՝ ավելի քան 4 անգամ[1]: Եթե 1993 թ. ամբողջ ապրանքաշրջանառության մեջ արտահանումը կազմում էր 38, իսկ ներմուծումը 62%, ապա 1998 թ. բևեռացումը հասավ գագաթնակետին, համապատասխանաբար՝ 20 և 80%: Դրանից հետո նկատվում է արտահանման մասի փոքր-ինչ ավելացում և, համապատասխանաբար, ներմուծման կրճատում: 2003 թ. տվյալներով ար-

[1] *Այստեղ և հետագայում բոլոր տվյալները և հաշվարկները հիմնված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նյութերի վրա:*

տահանումը կազմում էր 35, իսկ ներմուծումը՝ 65%: Սակայն բոլոր դեպքերում, նկատվում է ՀՀ առևտրային հաշվեկշռի պակասուրդի աճ՝ բացասական սալդոն 1993 – 2003 թթ. ավելացել է 6 անգամ՝ կազմելով 591.3 մլն ԱՄՆ դոլար:

*Աղյուսակ 5.2*

**ՀՀ արտաքին առևտուրը** *(մլն ԱՄՆ դոլար)*

| Տարի | Արտաքին առևտրաշրջանառության ծավալը | Արտահանման ծավալը | Ներմուծման ծավալը | Տեսակարար կշիռը %-ով | | Առևտրային հաշվեկշիռը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | արտահանում | ներմուծում | |
| 1993 | 410.4 | 156.2 | 254.2 | 38.1 | 61.9 | -98 |
| 1994 | 609.3 | 215.5 | 393.8 | 35.4 | 64.6 | -178.3 |
| 1995 | 931.9 | 263.4 | 668.5 | 28.3 | 71.7 | -405.1 |
| 1996 | 1151.8 | 290.3 | 861.5 | 25.2 | 74.8 | -571.2 |
| 1997 | 1126.0 | 232.5 | 893.4 | 20.7 | 79.3 | -650.8 |
| 1998 | 1119.1 | 223.4 | 895.7 | 20.0 | 80.0 | -672.3 |
| 1999 | 1035.2 | 233.5 | 801.7 | 22.6 | 77.4 | -568.2 |
| 2000 | 1182.6 | 297.5 | 885.1 | 25.2 | 74.8 | -587.6 |
| 2001 | 1217.1 | 342.8 | 874.3 | 28.2 | 71.8 | -531.5 |
| 2002 | 1498.3 | 507.2 | 991.1 | 33.9 | 66.1 | -483.9 |
| 2003 | 1947.5 | 678.1 | 1269.4 | 35.0 | 65.0 | -591.3 |

Ընդ որում, Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցությունից հետո Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրային համակարգում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ: Այսպես, 2003 թվականին, 2002թ. համեմատությամբ, արտաքին ապրանքաշրջանառության ծավալներն ավելացել են 30%-ով և կազմել ամենամեծ ցուցանիշը անցած 10 տարվա ընթացքում: Ամբողջ ապրանքաշրջանառության մեջ ավելացել են նաև արտահանման ծավալները (2003 թվականին, 2002թ. համեմատությամբ, ավելացել է 34%-ով):

Տեղաշարժեր են արձանագրվել նաև արտահանման և ներմուծման աշխարհագրական և ապրանքային կառուցվածքներում:

ՀՀ ընդհանուր արտաքին ապրանքաշրջանառության մեջ աստիճանաբար ավելանում է հեռավոր արտասահմանյան երկրների բաժինը (տե՛ս աղյուսակ 5.3): 1993 - 2003 թթ. ապրանքաշրջանառությունը այդ երկրների հետ ավելացել է 13 անգամ, այն դեպքում, երբ ԱՊՀ երկրներինը՝ 48%-ով: Նույն ժամանակաընթացքում հեռավոր արտասահմանից ներմուծման ծավալները ավելացել են մոտ 11 անգամ, իսկ ԱՊՀ երկրներինը՝ 1.8 անգամ: Հանրապետությունից արտահանման ծավալում ԱՊՀ երկրների բաժինը 2003թ. կազմել է 126.7 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ հասել է 1993թ. մակարդակին, իսկ այլ երկրներինը ավելացել է 18 անգամ: Հեռավոր արտասահմանյան երկրների հետ առևտրում առևտրային հաշվեկշռի պակասուրդը կազմել է 408.4 մլն դոլար (ՀՀ ընդհանուր առևտրային հաշվեկշռի պակասուրդի 70%-ը):

Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցությունից հետո ՀՀ արտահանումը նույնպես ենթարկվել է փոփոխության՝ ըստ երկրների խմբի: Այսպես, 2003թ., 2002թ. համեմատությամբ, ՀՀ-ից ԱՊՀ երկրներ արտահանվող ապրանքների ու ծառայությունների ծավալն ավելացել է 29%-ով, իսկ հեռավոր արտասահմանյան երկրներ՝ 34%-ով:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի արտահանման աշխարհագրական կառուցվածքում ավելանում է հեռավոր արտասահմանյան երկրների բաժինը. 2003թ. կազմել է 81.3%, իսկ ԱՊՀ երկրներինը՝ 18.7%: Դա, բոլոր դեպքերում, հարկ է դիտարկել որպես դրական երևույթ, քանզի նշանակում է, որ Հայաստանը աստիճանաբար միջազգային շուկայում տեղ է գրավում: Մյուս կողմից, ԱՊՀ երկրների հետ ապրանքաշրջանառության կրճատումը խիստ բացասական է, քանի որ այդ երկրների հետ եղած ավանդական կապերը կարող են հնարավորություն ընձեռել ավելացնելու արտահանումը, ինչը կարող է նպաստել կրճատելու առևտրային հաշվեկշռի պակասուրդը:

Պետք է նշել, որ ԱՊՀ երկրներից Հայաստանի հիմնական առևտրային գործընկերը Ռուսաստանն է, չնայած դրա բաժինը հանրապետության արտահանման մեջ աստիճանաբար նվազում է (տե՛ս աղյուսակ 5.4): Եթե 1993թ. Ռուսաստանին բաժին էր ընկնում Հայաստանի արտահանման ծավալների 37.5%-ը, ապա 2002թ.՝ 12.8%-ը: 2003թ. տասնմեկ ամիսների ընթացքում այդ ցուցանիշը մի փոքր ավելացել է և կազմել 13.9%:

*Աղյուսակ 5.3*

## ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը ըստ երկրների խմբի

*(մլն ԱՄՆ դոլար)*

| Տարի / Ցուցանիշ | 1993 | 1994 | 1995 | 1996 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ապրանքաշրջանառության ծավալը | 410.4 | 609.3 | 931.9 | 1151.8 | 1126.0 | 1119.1 | 1035.2 | 1182.6 | 1182.6 | 1217,1 | 1498,3 | 1947.5 |
| այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| ԱՊՀ երկրներ | 294.8 | 363.5 | 488.0 | 472.0 | 394.9 | 302.5 | 233.4 | 241.1 | 241.1 | 304,2 | 404,0 | 436.5 |
| Հեռավոր արտասահմանի երկրներ | 115.6 | 245.8 | 443.9 | 679.8 | 731.1 | 816.6 | 801.8 | 941.5 | 941.5 | 912,9 | 1094,3 | 1511.1 |
| Արտահանման ծավալը | 156.2 | 215.5 | 263.4 | 290.3 | 232.6 | 223.4 | 233.5 | 297.5 | 297.5 | 342,8 | 507,2 | 678.1 |
| այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| ԱՊՀ երկրներ | 126.6 | 157.9 | 159.4 | 133.7 | 94.8 | 81.1 | 57.8 | 72.8 | 72.8 | 89,1 | 98,2 | 126.7 |
| Հեռավոր արտասահմանի երկրներ | 29.6 | 57.6 | 104.0 | 156.6 | 137.8 | 142.3 | 175.7 | 224.7 | 224.7 | 253,7 | 409,0 | 551.3 |
| Ներմուծման ծավալը | 254.2 | 393.8 | 668.5 | 861.5 | 893.4 | 895.7 | 801.7 | 885.1 | 885.1 | 874,3 | 991,1 | 1269.4 |
| այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| ԱՊՀ երկրներ | 168.2 | 205.6 | 328.6 | 338.3 | 300.1 | 221.4 | 175.6 | 168.3 | 168.3 | 215,1 | 305,7 | 309.7 |
| Հեռավոր արտասահմանի երկրներ | 86.0 | 188.2 | 339.9 | 523.2 | 593.3 | 674.3 | 626.1 | 716.8 | 716.8 | 659,2 | 685,4 | 959.7 |
| Առևտրային հաշվեկշռի մնացորդը | -98.0 | -78.3 | -405.1 | -571.2 | -660.8 | -672.3 | -568.2 | -587.6 | -587.6 | -531,5 | -483,9 | -591.3 |
| այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| ԱՊՀ երկրների հետ | -41.6 | -47.7 | -169.2 | -204.6 | -205.3 | -140.3 | -117.8 | -95.5 | -95.5 | -126,0 | -207,5 | -183.0 |
| Հեռավոր արտասահմանի հետ | -56.4 | -130.6 | -235.9 | -366.6 | -455.5 | -532.0 | -450.4 | -492.1 | -492.1 | -405,5 | -276,4 | -408.4 |

ԱՊՀ երկրներից երկրորդ կարևոր գործընկերը եղել է Թուրքմենստանը: 1993թ. Թուրքմենստանից զգալի քանակով սկսվեց ներմուծվել գազ, որը օգտագործվում էր հիմնականում էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով: Սակայն հայկական ատոմակայանի վերաբացումից (1996թ.) հետո, ինչպես նաև Ռուսաստանից գազի ներմուծման ծավալների ավելացման արդյունքում զգալի կրճատվեց Թուրքմենստանից գազի ներմուծումը: Նկատվում է նաև Հայաստանից Թուրքմենստան արտահանման ծավալների, հետևաբար՝ բաժնի նվազում:

ՀՀ կարևոր առևտրային գործընկերներից է նաև Վրաստանը: Սակայն Հայաստանից Վրաստան արտահանումը նույնպես նվազում է: Նախկին միութենական այլ հանրապետություններից որպես ՀՀ առևտրային գործընկեր կարելի է նշել Բելառուսը, Ուկրաինան և Ղազախստանը:

Հեռավոր արտասահմանի երկրներից՝ Հայաստանից արտահանման մեջ, առաջին տեղում Բելգիան է: Հայաստանից հեռավոր արտասահմանի երկրներ արտահանման ծավալում որոշակի տեղ են զբաղեցնում նաև Մեծ Բրիտանիան, ԱՄՆ, Իրանը:

Վերջին տարիներին նկատվում է ներմուծումը տեղական արտադրանքով փոխարինելու միտում: Այսպես, ՀՀ բնակչության պահանջները աստիճանաբար ապահովվում են տեղական կաթնամթերքի թողարկման հաշվին, կրճատվում է ձվի և մեղրի ներմուծումը, բնակչության սպառման կառուցվածքում ավելանում է տեղական մսամթերքների, ծխախոտի, գարեջրի, օղու, գինու, կոնյակի, շամպայնի, հանքային ջրերի, հյութերի, մրգի և բանջարեղենի, հրուշակեղենի և կոնֆետեղենի դերն ու նշանակությունը: Այս նույն արտադրատեսակների գծով կարելի է ապահովել նաև ՀՀ արտահանման ծավալների մեծացում: Մյուս կողմից, որոշ սննդամթերքների արտադրությունը հանրապետությունում կամ հնարավոր չէ, կամ տնտեսապես նպատակահարմար չէ, օրինակ՝ բրինձը, ծավարեղենը, սուրճը, կակաոն, ալյուրը, շաքարավազը, ձկան պահածոն և այլն: Բնականաբար, դրանց ներմուծումը չի կարող նվազել:

Ինչպես վկայում է կատարված վերլուծությունը, Հայաստանից ապրանքների ներմուծումը 2 - 3 անգամ գերազանցում է արտահանումը, առևտրային հաշվեկշռի բացասական սալդոն մնում է զգալի, արտահանումը ունի հիմնականում հումքային բնույթ, արտաքին ապրանքաշրջանառության մեջ նվազում է ԱՊՀ երկրների բաժինը, արտաքին առևտուրը խիստ սահմանափակ աշխարհագրություն ունի, ներմուծվում են ապրանքատեսակներ, որոնք կարելի է

տեղում արտադրել: ՀՀ համար կարևոր խնդիր է մնում արտահանման և ներմուծման հարաբերակցության կարգավորումը՝ խթանելով արտահանումը և կրճատելով ներմուծումը: Դրան կարող է նպաստել ներմուծումը փոխարինող արտադրությունների զարգացումը, արտասահմանյան ներդրումների (հատկապես մասնավոր) ներգրավումը, արտահանման ու ներմուծման ապրանքային և աշխարհագրական կառուցվածքների ընդլայնումը:

*Աղյուսակ 5.4*

**ՀՀ արտահանման բաժինը արտաքին ապրանքաշրջանառության մեջ՝ ըստ երկրների** *(տոկոսներով)*

| ԵՐԿԻՐ | 1993 | 1994 | 1995 | 1996 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ռուսաստան | 37.5 | 38.9 | 33.0 | 33.1 | 27.1 | 17.9 | 14.5 | 14.9 | 17.6 | 12.8 | 13.9 |
| Թուրքմենստան | 36.5 | 30.5 | 23.7 | 6.0 | 5.9 | 10.2 | 2.6 | 1.9 | 0.2 | 0.6 | 0.5 |
| Վրաստան | 2.0 | 1.3 | 1.0 | 0 | 4.6 | 4.6 | 4.8 | 5.2 | 3.6 | 3.3 | 2.3 |
| Բելառուս | 1.2 | 0.3 | 0.3 | 0.4 | 0 | 0.4 | 0.5 | 0.3 | 0.3 | 0.3 | 0.3 |
| Ուկրաինա | 2.6 | 1.7 | 1.7 | 1.7 | 0 | 1.8 | 0.9 | 1.1 | 3.2 | 1.6 | 1.1 |
| Ղազախստան | 0.9 | 0.4 | 0.6 | 0.4 | 0 | 0.2 | 0.2 | 0.4 | 0.3 | 0.2 | 0.2 |
| Ավստրիա | 0 | 0 | 0 | 0 | 0.3 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Բելգիա | 9.5 | 12.0 | 11.7 | 15.4 | 20.2 | 22.3 | 36.1 | 25.2 | 13.6 | 18.2 | 18.3 |
| Ֆրանսիա | 0.8 | 0.2 | 0.1 | 0.1 | 0 | 0 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.2 | 0.3 |
| Գերմանիա | 0.2 | 3.0 | 3.8 | 1.3 | 4.0 | 4.2 | 4.4 | 4.3 | 3.2 | 5.5 | 6.5 |
| Իտալիա | 0 | 0 | 0 | 0 | 0.2 | 0.2 | 0.6 | 0.9 | 1.8 | 2.3 | 2.8 |
| Նիդեռլանդներ | 0.1 | 0.3 | 2.0 | 3.0 | 2.7 | 3.8 | 0.2 | 0.9 | 0.4 | 2.2 | 3.2 |
| Մեծ Բրիտանիա | 0 | 0.2 | 0.5 | 1.1 | 0.5 | 2.8 | 4.1 | 3.4 | 5.9 | 10.1 | 5.9 |
| Հունաստան | 0 | 0 | 0 | 0.2 | 0.1 | 0.1 | 0.1 | 1.0 | 0.6 | 0.2 | 0.8 |
| Իռլանդիա | 0 | 0.5 | 0.2 | 0.1 | 0 | 0.1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Դանիա | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Շվեյցարիա | 0.3 | 1.2 | 1.2 | 0.1 | 0.7 | 1.1 | 1.6 | 2.9 | 2.6 | 1.5 | 4.7 |
| Իրան | 3.5 | 6.8 | 13.3 | 15.1 | 18.3 | 14.2 | 14.7 | 9.3 | 9.5 | 6.2 | 3.3 |
| Թուրքիա | 0.2 | 0.1 | 0.1 | 2.1 | 3.1 | 1.3 | 0.5 | 0.5 | 0.3 | 0.2 | 0.2 |
| Արաբական էմիրաքներ | 0.2 | 0 | 0.2 | 0.7 | 1.3 | 2.8 | 1.1 | 1.8 | 2.1 | 2.8 | 2.4 |
| ԱՄՆ | 0.2 | 0.2 | 0.2 | 1.5 | 3.1 | 5.6 | 7.0 | 12.7 | 15.2 | 9.2 | 8.3 |
| Բուլղարիա | 0.7 | 0 | 0 | 0.1 | 0 | 0.5 | 0.4 | 0.2 | 0 | 0 | 0.2 |
| Այլ երկրներ | 3.6 | 2.4 | 5.5 | 17.6 | 7.9 | 6.1 | 5.2 | 12.9 | 19.4 | 22.6 | 24.8 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |

Նպատակահարմար է արտահանման խթանման քաղաքականություն իրականացնել սննդի, թեթև և շինանյութերի արդյունաբերություններում, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից և մետաղներից պատրաստված իրերի արտադրություններում, գեղարվեստական իրերի և գորգագործության բնագավառներում: Այս նպատակով պետությունը պետք է սահմանի հարկային արտոնություններ արտահանման ուղղվածություն ունեցող ձեռնարկությունների համար: Հարկ է լայնորեն ներդնել վարկային և ապահովագրական արտոնյալ պայմանների կիրառումը: Անհրաժեշտ է ճյուղային կտրվածքով ստեղծել արտահանման աջակցման հատուկ գործակալություններ: Տարբեր երկրների շուկաների ուսումնասիրությանը մեծապես կնպաստի միջազգային մարքեթինգը: Այդ տեսակետից կարևորվում է միջազգային շուկաների վերաբերյալ մասնագիտացված տեղեկատվական ծառայության ստեղծումը:

## 5.5. Արտահանման խրախուսման ձևերը

Հայաստանի Հանրապետության համար ապրանքների ներմուծումը կրճատելու հիմնական ուղին ներքին արտադրության զարգացումն է և, դրա հիման վրա, արտահանման ծավալների ավելացումը: Իսկ ներքին արտադրության զարգացումը խթանելու ուղիներից մեկը պետության, բանկերի կողմից ձեռնարկություններին լրահատկացումների տրամադրումն է (սուբսիդավորումը), որը հնարավորություն կտա նվազեցնել ապրանքների թողարկման ծախսերը, ընդլայնել տեղական ապրանքների սպառումը ներքին շուկայում, ավելացնել արտահանման ծավալները միջազգային շուկայում:

Արտահանման խրախուսման ձևերից է նաև ուղղակի ֆինանսավորումը, որը ենթադրում է արտահանվող ապրանքներ արտադրող ընկերություններին պետական բյուջեից ուղղակի ֆինանսավորում: Վերջինս հնարավորություն կտա ծածկելու ապրանքի արժեքի և շուկայական գնի միջև եղած տարբերությունը: Արդի ժամանակաշրջանում մեծ նշանակություն է ձեռք բերում, մասնավորապես, նորագույն տեխնոլոգիաների մշակմամբ և ներդրմամբ զբաղվող ձեռնարկությունների օժանդակումը:

Բացի ուղղակի ֆինանսավորումից, կիրառվում է նաև անուղղակի ֆինանսավորումը, որի դեպքում պետական դոտացիաներ են տրվում առևտրային բանկերին՝ արտահանող ձեռնարկություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքները իջեցնելու նպատակով: Օգտագործվում է անուղղակի ֆինանսավորման ևս մեկ ձև. արտահանվող արտադրանք թողարկող ձեռնարկություններին վերադարձվում են ներմուծվող հումքի դիմաց վճարված տուրքերը:

Սակայն Հայաստանի համար արտահանման ծավալների ավելացման նշված ուղիները անիրական են, քանի որ հանրապետության բյուջեն այդ նպատակների համար միջոցներ չունի:

Արտահանման խթանման մեթոդներից է նաև արտահանող ձեռնարկություններին հարկային արտոնությունների տրամադրումը: Հաճախ հարկերը իջեցվում են՝ կախված արտադրված արտադրանքի ծավալում արտահանման բաժնի մեծությունից. որքան շատ է արտահանման ծավալը, այնքան ավելի ցածր են սահմանվող հարկերը:

Արտահանման ծավալների ավելացմանը նպաստող գործոն է նաև արտահանման վարկավորումը, որը հանդես է գալիս առևտրային և բանկային վարկավորման ձևով: Բանկային վարկավորումը հիմնականում նպատակ ունի արագացնելու արտահանողի կապիտալի շրջանառությունը, այսինքն՝ դրա մի մասի ձևափոխումը ապրանքային տեսքից դրամականի՝ մինչև արտադրանքի իրացումը, իսկ իրացումից հետո՝ վարկի մարումը:

Արտահանման ապահովագրումը նույնպես արտահանման խթանման արդյունավետ լծակներից է, քանի որ ռիսկի գործոնը մեծ ազդեցություն ունի ձեռնարկատիրական գործունեության վրա: Այն կարող է լինել ներքին և արտաքին: Ներքին ապահովագրումը իրականացնում է կառավարությունը, որն ապահովագրում է արտահանման ուղղվածություն ունեցող արտադրություններում խոշոր ներդրումները: Արտաքին ապահովագրության դեպքում պետությունը իր վրա է վերցնում քաղաքական և առևտրային ռիսկերի մի մասը:

Զարգացած երկրներում արտահանման ապահովագրությունն իրականացնում են պետական կազմակերպությունները, և ավելի հազվադեպ՝ մասնավոր ձեռնարկությունները: Ապահովագրական ընկերությունները իրենց կորուստները մասամբ համալրում են

պետական բյուջեից, մասամբ էլ՝ ժամանակավոր ազատ ֆինանսական ակտիվների հաշվին:

Արտահանման խթանման մեթոդները անհրաժեշտ է կիրառել ամենայն զգուշությամբ: Նախ՝ առևտրային գործընկերները կարող են դիմել պատասխան քայլերի՝ լրահատկացումների միջոցով, երկրորդ՝ նրանք կարող են մտցնել փոխհատուցման տուրքեր, որոնք կզրոյացնեն արտահանող երկրի բոլոր ջանքերը՝ հանգեցնելով արտահանումը խթանող պետության առևտրային դիրքի վատացմանը:

## 5.6. ՀՀ արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտները

Հայաստանից ապրանքների ու ծառայությունների արտահանման ծավալների ավելացումը կարելի է ապահովել մի կողմից՝ ներմուծումը փոխարինող արտադրությունների ծավալման, մյուս կողմից՝ այն բնագավառների զարգացման միջոցով, որոնց մեծ տեղ է հատկացնում ԱՀԿ-ն: Այդպիսիք են, օրինակ, ծառայությունների (զբոսաշրջության, կապի, հաղորդակցության և այլն), մտավոր սեփականության, գյուղատնտեսության ոլորտները:

Անհրաժեշտ է հաշվի առնել մեր հանրապետության յուրահատկությունները՝ բնական ռեսուրսների, հումքի ու նյութերի առկա տեսակները, ազգային առանձնահատկությունները, բնակչության ազգային, սեռային և տարիքային կառուցվածքն ու կադրային կազմը, գործունեության այն ոլորտները, որտեղ կարելի է ապահովել առավելագույն արդյունավետություն և այլն: Ընդ որում, արտաքին տնտեսական կապերի ամբողջ համակարգի կատարելագործման հաջողությունը մեծապես կանխորոշվում է այն կարևոր գործոնով, որ արտասահմանում ապրում են շատ հայեր, որոնք Հայաստանի հետ գործարար կապեր հաստատելու նախաձեռնություն են հանդես բերում:

Համագործակցության ձևերը պետք է հիմնվեն հանրապետության ռեսուրսների (բնական ռեսուրսներ, հումք և նյութեր, շինանյութեր, հանքային ջրեր, միրգ, բանջարեղեն, պտուղներ, հատապտուղներ և այլն) առկայության և ազգային տնտեսության մեջ գործունեության այն ավանդական ձևերի (կոշիկի, գորգերի, գե-

ղարվեստի իրերի, ինչպես նաև էլեկտրաապրանքների, բյուրեղապակյա իրերի, կոնյակի, գինու, ծխախոտի արտադրություն և այլն) վրա, որոնց բնագավառում ձեռք են բերվել որոշակի հաջողություններ:

Կարևոր նշանակություն ունի համագործակցությունը գիտության բնագավառում, համատեղ գիտական մշակումները արտասահմանյան ինստիտուտների հետ: Առաջնային կարևորություն ունեն հետազոտությունները աստղաֆիզիկայի, միկրոկենսաբանության, հիդրոպոնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, քիմիական, բժշկական գիտության, տնտեսագիտության բնագավառներում, չնայած չի բացառվում նաև համագործակցությունը գիտության այլ ուղղություններով: Այս խնդիրների լուծումը հանրապետությունում թույլ կտա թողարկել համաշխարհային ստանդարտներին համապատասխան արտադրանք, էապես ավելացնել արտահանվող արտադրանքի ծավալը և ապահովել արժույթի ներհոսքը երկիր:

Գիտական արտադրանքի արտահանման հետ անմիջականորեն առնչվում է ԱՀԿ Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության համակարգը: 1992 թվականին հանրապետությունում ստեղծվեց Արտոնագրային վարչությունը, իսկ 1993թ.՝ Հեղինակային իրավունքի պաշտպանության ազգային գործակալությունը: Այդ նույն թվականից Հայաստանը Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության, իսկ 1996թ.՝ Եվրասիական արտոնագրային կազմակերպության անդամ է: ԱՀԿ-ի բազմակողմ բանակցությունների ընթացքում Հայաստանի օրենսդրական դաշտը համապատասխանեցվել է ԱՀԿ-ի՝ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության և առևտրին վերաբերող հարցերին: Այս ամենը կարևոր նախադրյալներ են գիտական ոլորտում հանրապետության մասնագիտացման և այն որպես արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտ ճանաչելու և զարգացնելու համար:

Արտաքին տնտեսական կապերի կատարելագործումը պահանջում է զարգացնել սպասարկման և միջազգային զբոսաշրջության ոլորտը (որի համար անհրաժեշտություն կառաջանա արմատապես բարելավել սպասարկման ամբողջ ենթակառուցվածքը՝ ճանապարհները, վերականգնել պատմական շատ հուշարձաններ և տեսարժան վայրեր):

Ոչ միայն զբոսաշրջության, այլ ընդհանուր առմամբ ծառայությունների ոլորտի և դրանց առևտրի զարգացումը նույնպես անմիջականորեն բխում է ԱՀԿ պահանջներից: Այդ տեսակետից հանրապետության համար կարևորվում են՝ հեռահաղորդակցության, ֆինանսական, շինարարական, շրջակա միջավայրի պահպանման, առողջապահական, սոցիալական, մշակութային, մարզական, փոխադրման և այլ ծառայությունները:

Հայաստանի բնական պայմանները, հարուստ և նույնիսկ եզակի շինանյութերի հանքավայրերի առկայությունը, հանքահումքային բազայի բազմազանությունը լայն հորիզոններ են բացում արտահանման ծավալման համար: Բնականաբար, պետք է հաշվի առնվեն շրջակա միջավայրի պաշտպանության, բնապահպանության և բնօգտագործման պահանջները, որոնց մեծ տեղ է հատկացնում ԱՀԿ-ն:

Նպատակահարմար է ակտիվ արտաքին տնտեսական համագործակցություն սկսել հանքային ռեսուրսների՝ բենտոնիտի, դիատոմիտի, պեռլիտի, ցեոլիտի արտադրության բնագավառներում: Նախ պետք է ապահովել ակտիվացված բենտափոշիների արտադրությունը՝ ոչ միայն յուղի-ճարպի արդյունաբերության համար սպիտակեցնող փոշիներ, այլև զանազան արտադրատեսակներ թողարկելու նպատակով:

Հանքային ռեսուրսներից կարևոր նշանակություն ունեն դիատոմիտները (Հայաստանում կա դիատոմիտների հինգ հանքավայր), որոնք գլիցերինի, ինսուլինի, մրգահյութերի, գինիների, գարեջրի և ոչ ոգելից խմիչքների զտման ու գունաթափման ժամանակ օգտագործվում են որպես քամիչ նյութեր: Դրանք որպես կլանիչներ են կիրառվում քիմիական արդյունաբերության մեջ, գործածած քսայուղերի վերականգնիչներ՝ նավթավերամշակման արդյունաբերության մեջ և այլն: Ընդլայնելով դիատոմիտից թողարկվող արտադրանքի տեսականին՝ հնարավոր կլինի ավելացնել դրանց արտահանումը:

Լայն կիրառություն ունի նաև պեռլիտը: Դրանք օգտագործվում են որպես լցանյութեր՝ ջերմամեկուսիչ բետոնների, ռետինատեխնիկական իրերի, պլաստմասսաների մեջ, որպես զտիչ նյութ՝ նավթի ու յուղերի համար, կիրառվում են նաև շինարարական, կերամիկական, ապակու արտադրություններում: Հանրապետությու-

նում կարելի է կազմակերպել փքապեռլիտի, մաքրիչ փոշիների, լցանյութերի, հղկանյութերի, պեռլիտամանրաթելային սալիկների զանգվածային արտադրությունը և արտահանումը:

Արտահանման առումով մեծ հեռանկարներ ունի նաև ցեոլիտը (Նոյեմբերյանի հանքավայր), որը կիրառվում է արդյունաբերության (հեղուկների ու գազերի չորացման, բաժանման ու մաքրման համար՝ որպես կատալիզատոր ու լցանյութ), գյուղատնտեսության մեջ (մշակաբույսերի բերքատվության բարձրացման նպատակով, որպես կենդանիների կերախառնուրդներ, նաև՝ դեզոդորանտ և այլն), շրջակա միջավայրի պահպանության նպատակով (ձեռնարկությունների գազային արտանետումների մաքրման համար):

Հանրապետությունում արտաքին տնտեսական համագործակցությունը պետք է ներառի նաև բնական երեսպատման քարերը: Հայաստանում կա դրանց մոտ երկու տասնյակ տեսակ՝ ֆելզիտային տուֆեր, տրավերտիններ, կանաչ մարմար, գրանիտոիդներ և այլն: Անհրաժեշտ է ինտենսիվացնել երեսպատման քարերի արդյունահանումը, կարգավորել դրանցից երեսպատման սալիկների արտադրությունը և արտահանումը:

Բացի այդ, Հայաստանը գունագեղ քարերի՝ ագաթի, օբսիդիանի, օնիքսանման մարմարի մշակման հեռանկարային հնարավորություններ ունի: Ուստի կարելի է ապահովել նաև գունագեղ զարդարանքների, հուշանվերների, դեկորատիվ գեղարվեստական իրերի արտահանումը:

Հայաստանի ընդերքը հարուստ է հանքային ջրերի պաշարներով, որոնք ունեն ֆիզիկաքիմիական տարատեսակ կազմ ու բուժական հատկություններ: Ներկայումս հանրապետությունում գոյություն ունի հանքային ջրերի գերարտադրություն, և դա այն դեպքում, երբ մի շարք երկրներում խմելու և հանքային ջրերի մեծ պակաս է զգացվում, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքի երկրների շուկաներում: Հանրապետության հանքային ջրերի արտահանման ծավալների կտրուկ ավելացման նպատակով պետք է իրականացնել միջազգային մարքեթինգային հետազոտություններ: Բացի այդ, Հայաստանի հանքային ջրերի բազայի վրա հնարավոր կլինի ընդլայնել առողջարանային ցանցը և ստեղծել միջազգային նշանակության նորերը:

Հանրապետության բնակլիմայական պայմանները թույլ են տալիս աճեցնել պտուղբանջարեղենի այնպիսի տեսակներ, որոնք աչքի են ընկնում արժեքավոր սպառողական հատկություններով (ծիրան, դեղձ, լոլիկ), և որոնց պահանջարկը մեծ է համաշխարհային շուկայում:

Հայաստանում կարելի է ստեղծել նաև օծանելիքի, գեղարվեստական իրերի, օճառի, ինչպես նաև զանազան դեղամիջոցների, ներկանյութերի ձեռնարկություններ, որոնց արտադրության համար հումքը հնարավոր է ստանալ հիդրոպոնիկ եղանակով: Եթերային յուղերի արտադրության ավելացման հաշվին հանրապետությունը կարող է դառնալ խորդենու յուղի օգտագործմամբ ստացվող արտադրանքի միջազգային մատակարար:

Ոչ պակաս հետաքրքիր է հիդրոպոնիկ եղանակով հինայի և բասմայի արտադրության ձեռնարկությունների ստեղծումը: Հանրապետությունը կարող է դառնալ այդ բնական արժեքավոր ներկանյութերի, ինչպես նաև դրանց հիման վրա ստեղծվող արտադրանքի համաշխարհային արտադրողներից և արտահանողներից մեկը:

Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ Հայաստանը գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ ԱՀԿ առջև որոշակի պարտավորություններ է ընդունել: Այսպես, գյուղատնտեսական արտադրանքի մաքսային դրույքաչափի վերին սահման է ընդունվել 15%-ը: Բացի այդ, արտահանման լրավճարման մակարդակն ամրագրված է զրոյի վրա: Զրոյական է նաև հիմնային ընդհանուր աջակցության համախառն չափը (ԱՀՉ), որը ներառում է գյուղատնտեսական մթերքարտադրողներին տրված հարկային արտոնությունները, վարկային և ներդրանքային լրավճարները (արտադրության մեջ օգտագործված հումքի և այլ միջոցների համար տրվող լրավճարները): Ավելին, 2009 թ. հունվարի 1-ից հանրապետության գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ ևս կկիրառվի ավելացված արժեքի հարկը:

Այս ամենը կծանրացնի գյուղատնտեսական տնտեսությունների հարկային բեռը, կբարձրացնի գյուղատնտեսական արտադրանքի գինը, կառաջացնի սոցիալական լարվածություն: Այսպիսով, գյուղատնտեսությունը, որպես արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտ, կարող է լիարժեք դրսևորվել միայն հեռանկարում:

Սակայն ներկայումս և մոտ ապագայում անհրաժեշտ է իրականացնել այն բոլոր նախապատրաստական տնտեսակազմակերպչական միջոցառումները, որոնք հեռանկարում կարող են նպաստել գյուղատնտեսական արտադրանքի արտահանմանը:

Հայաստանից արտահանվող ապրանքների անվանացանկը հեռանկարում կարող է ընդլայնվել նաև մեքենաշինական (մեքենաներ, սարքավորումներ, տրանսպորտի միջոցներ, իրեր մետաղներից և այլն) և քիմիական արդյունաբերության արտադրանքի (պլաստմասսայից իրեր, օրգանական և անօրգանական քիմիական միացություններ, քիմիական ապրանքներ և այլն) արտահանման հաշվին, եթե, իհարկե, նշված երկու ճյուղերի անգամ որոշ ենթաճյուղեր առաջիկա տարիներին հանրապետությունում վերակենդանացվեն և զարգանան՝ հաշվի առնելով նաև Ռուսաստանի որոշակի հետաքրքրությունը այդ ճյուղերի նկատմամբ: Մյուս կողմից, մի քանի տասնյակ ներմուծվող ապրանքախմբեր հնարավոր և նպատակահարմար է զգալիորեն կրճատել, քանի որ Հայաստանը ներկայումս ի վիճակի է ապահովել մի շարք արտադրատեսակների թողարկումը:

# ԲԱԺԻՆ 6

## ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄԻՆՉԵՎ ԱՀԿ-ԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ[34]

Քանի որ Հայաստանը փոքր երկիր է, ապա ԱՀԿ-ին անդամակցությունը նրան հնարավորություն չի տա ազդել համաշխարհային տնտեսական գործընթացների վրա: Չնայած դրան, ԱՀԿ-ին անդամակցությունը կարող է նպաստել առևտրի պայմանների բարելավմանը, ավելացնել և բազմազանեցնել արտահանվող ապրանքների և ծառայությունների տեսականին, կայունացնել մատակարարման շուկաները և ապահովել արտադրանքի որակի բարձրացումը՝ հասցնելով միջազգային ստանդարտների պահանջներին:

ՀՀ արտաքին առևտրատնտեսական գործունեության զարգացման հնարավորությունները բացահայտելու նպատակով անհրաժեշտ է.

- կատարել ՀՀ արտաքին առևտրի շարժի վերլուծություն,
- դիտարկել ՀՀ արտաքին առևտրի ազդեցությունը ՀՆԱ աճի վրա:

Նշված նպատակներին հասնելու համար հարկավոր է, օգտվելով միջազգային առևտրի տեսության մեթոդաբանությունից, վերլուծել ՀՀ արտաքին առևտրի վիճակը, ուսումնասիրել այն գործոնները, որոնք կապված են արտաքին առևտրի և տնտեսական աճի հետ: Իսկ ՀՀ արտաքին առևտրի վերլուծության հիմնական խնդիրներն են.

- որոշել արտաքին առևտրի արդյունքում երկրում ձևավորված եկամուտը նախքան ԱՀԿ-ին անդամակցությունը և անդամակցությունից հետո,
- դիտարկել առևտրի ազատականացումը և դրանով պայմանավորված տնտեսական աճը,
- հետազոտել առևտրի սակագնային սահմանափակումները, մշակել ժամանակային շարքերի դինամիկ մոդելներ, գնա-

---

[34] *Տվյալ բաժնում իրականացված վերլուծությունը և տնտեսամաթեմատիկական հիմնավորումները կատարվել են ԵՊՀ Միջազգային տնտեսագիտություն ամբիոնի ասպիրանտ Գ. Հայրապետյանի համահեղինակությամբ:*

հատել սակագների ազդեցությունը եկամուտների և տնտեսական աճի վրա:

## 6.1. ՀՀ տնտեսական աճը և միջազգային առևտուրը

Հայտնի է, որ միջազգային առևտրի առանձնահատկություններից մեկը դրա դինամիկ բնույթն է: Դա պայմանավորված է նրանով, որ պետության արտադրական հնարավորությունները, կիրառվող տեխնոլոգիաները և վարվող տնտեսական քաղաքականությունը, որոնցով պետության ապահովվածության մակարդակը ձևավորում է երկրի համեմատական առավելությունները, և առևտրից ստացած եկամտի մեծությունը կախված են ժամանակի գործոնից: Այսինքն՝ պետության տնտեսական ապահովվածությունը պայմանավորված է այնպիսի գործոններով, որոնք փոխվում են՝ կախված ժամանակից, ինչպես նաև առևտրի վրա ազդող ու առևտրային գործընթացը պայմանավորող ներքին և արտաքին գործոններից: Ստեղծվում են նոր միջազգային կազմակերպություններ, կատարելագործվում են տեխնոլոգիաները, իսկ առևտրային գործընթացներում փոփոխվում են առկա քաղաքականության իրականացման եղանակները:

Հայտնի է, որ ժամանակի ընթացքում երկրի բնակչության թիվը փոփոխվում է, և դրա հետ մեկտեղ փոփոխվում է աշխատուժի ու կապիտալի հարաբերակցությունը: Կապիտալ ասելով հասկանում ենք մարդու կողմից ստեղծված արտադրության միջոցները՝ մեքենաները, տրանսպորտային և հաղորդակցման միջոցները, ինչպես նաև կրթությունը: Պարզության համար ընդունենք, որ աշխատուժի և կապիտալի միավորները համասեռ են: Սա հնարավորություն կտա ուսումնասիրել աշխատուժի և կապիտալի փոփոխությունը Հայաստանի Հանրապետությունում 1995-2002թթ. և 2003 թ. ընթացքում, և կատարել այդ գործոնների դինամիկ վերլուծություն:

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 6.1-ից[35], ՀՀ-ում աշխատուժը փոփոխվել է հետևյալ կերպ՝ բացի 1996թ., երբ աշխատուժի դինամիկան դրական է, մնացած բոլոր տարիներին այն նվազել է նախորդ տարվա համեմատ:

---

[35] *Հաշվարկները կատարվել են ՀՀ ազգային վիճակագրության ծառայության և այլ պաշտոնական նյութերի հիման վրա:*

Արդյունաբերության բնագավառում աշխատուժի փոփոխությունը ունեցել է նվազման միտում, ինչը կարելի է բացատրել նոր կապիտալազինված արտադրությունների ստեղծմամբ, գործազրկության աճով և արտագաղթով: Դրությունը փոխվել է 2002թ., երբ այդ բնագավառում աշխատուժի դինամիկան ընդունել է դրական արժեք, որը սակայն 2003 թ. կրկին ձեռք է բերել բացասական արժեք:

Աշխատուժի փոփոխությունը առևտրի և ծառայությունների բնագավառում, ի տարբերություն արդյունաբերության բնագավառի, ունեցել է տատանողական բնույթ: 1995-1997թթ. ընկած ժամանակաշրջանում աշխատուժը այստեղ ավելացել է, սակայն աճի տեմպը եղել է նվազող: 1998-2000թթ.՝ նվազել է, իսկ 2001-2002թթ.՝ կրկին աճել է և այդ երկու տարվա ընթացքում պահպանել նույն մեծությունը, որի պատճառով աշխատուժի դինամիկան 2001-2002 թվականներին եղել է 0.03: 2003թ. այս բնագավառում աշխատուժը կրկին ձեռք է բերել նվազման միտում:

Կապիտալի գործոնը ՀՀ տնտեսության համար 1995 - 2003թթ. ունեցել է դրական փոփոխություն, բացի 1997թ.: Ինչպես երևում է աղյուսակ 6.1-ից, յուրաքանչյուր հաջորդ տարի, նախորդ տարվա նկատմամբ, գրանցվել է բարձր աճ: Այսպես, արդյունաբերության բնագավառում կապիտալի գործոնը փոփոխվել է հետևյալ կերպ. 1995 - 1998 թթ. ընկած ժամանակաշրջանում այն տատանվել է, ընդունելով դրական և բացասական արժեքներ, իսկ սկսած 1998թ., այս բնագավառում կապիտալի փոփոխությունը ունեցել է աճի միտում, և այդ աճը շարունակվել է մինչև 2003թ. ներառյալ: Առևտրի և ծառայությունների բնագավառում կապիտալի փոփոխությունը, բացի 1996 - 1997 թթ., մյուս բոլոր տարիներին, ներառյալ 2003թ., ունեցել է աճի միտում: ՀՀ միջազգային առևտրի մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկայի վերլուծության ձևակերպման համար պետք է դիտարկել հետևյալ երեք գործոնները.

$\Delta GDP_t$ – ՀՆԱ-ի փոփոխության տեմպը t-րդ տարում,

$\Delta K_t$ - կապիտալի փոփոխության տեմպը t-րդ տարում,

$\Delta L_t$ - աշխատուժի փոփոխության տեմպը t-րդ տարում:

Այսպիսով, կստանանք.

$\Delta GDP_t / \Delta K_t$ - ՀՆԱ-ի առաձգականությունը կապիտալի նկատմամբ,

$\Delta GDP_t / \Delta L_t$ - ՀՆԱ-ի առաձգականությունը աշխատուժի նկատմամբ:

*Նշանակումներ:*

DynLab - աշխատուժի դինամիկան ընդհանուր տնտեսության համար

DnLabInd - աշխատուժի դինամիկան արդյունաբերության բնագավառում

DlabTr - աշխատուժի դինամիկան առևտրի և ծառայությունների ոլորտում

DnCp - կապիտալի դինամիկան ընդհանուր տնտեսության համար

DnCpInd - կապիտալի դինամիկան արդյունաբերության բնագավառում

DnCpTrd - կապիտալի դինամիկան առևտրի և ծառայությունների ոլորտում

EGDPK - ՀՀ ՀՆԱ առաձգականության դինամիկան կապիտալի նկատմամբ

EGDPL - ՀՀ ՀՆԱ առաձգականության դինամիկան աշխատուժի նկատմամբ

EGDPKInd - ՀՀ արդյունաբերության համախառն արդյունքի ծավալի առաձգականության փոփոխությունը արդյունաբերության կապիտալի նկատմամբ

EGDPLIND - ՀՀ արդյունաբերության համախառն արդյունքի ծավալի առաձգականության փոփոխությունը արդյունաբերության աշխատուժի նկատմամբ

EGDPKTr - ՀՀ ներքին առևտրի ու ծառայությունների համախառն ծավալի առաձգականության փոփոխությունը առևտրի և ծառայությունների կապիտալի նկատմամբ

EGDPLTr - ՀՀ ներքին առևտրի ու ծառայությունների համախառն ծավալի առաձգականության փոփոխությունը առևտրի և ծառայությունների աշխատուժի նկատմամբ

ResDn - գիտահետազոտական աշխատանքների մեջ մասնագետների դինամիկան

ResPer95=100% - գիտահետազոտական աշխատանքների մեջ մասնագետների տոկոսը (1995=100%)

ArSpacDn - գյուղատնտեսական հողատարածքների քանակի փոփոխությունը

FrmDn - ագարակային տնտեսությունների քանակի փոփոխությունը

SpperCap - մեկ ագարակային տնտեսությանը հատկացված գյուղատնտեսական հողատարածքների դինամիկան

DnK/L - կապիտալ/ աշխատուժ հարաբերակցության դինամիկան

K/L 94=100 - կապիտալ/ աշխատուժ հարաբերակցությունը տոկոսներով (1994 =100%)

E/Iaver - արտահանում/ներմուծում հարաբերության փոփոխությունը ընդհանուր տնտեսության համար

E/ICIS - արտահանում/ներմուծում հարաբերության փոփոխությունը ԱՊՀ երկրների հետ

E/IOther - արտահանում/ներմուծում հարաբերության փոփոխությունը այլ երկրների հետ

E/Ia93=100 - արտահանում/ներմուծում հարաբերության փոփոխությունը ընդհանուր տնտեսության համար, % (1993=100%)

E/IC93=100 - արտահանում/ներմուծում հարաբերության փոփոխությունը ԱՊՀ երկրների հետ, % (1993=100%)

E/IO93=100 - արտահանում/ներմուծում հարաբերության փոփոխությունը այլ երկրների հետ, % (1993=100%)

DnExp - ՀՀ արտահանման դինամիկան

DnImp - ՀՀ ներմուծման դինամիկան

EIGExp - ՀՀ ՀՆԱ առաձգականությունը արտահանման նկատմամբ

EIIGDP - ՀՀ ներմուծման առաձգականությունը ՀՆԱ նկատմամբ

DnGDP - ՀՀ ՀՆԱ դինամիկան

Աղյուսակ 6.1-ում բերված են տվյալներ, որոնք ցույց են տալիս ՀՆԱ-ի առաձգականության դինամիկան կապիտալի նկատմամբ: Այն, սկսած 1998 թվականից, ընդունել է դրական արժեքներ, իսկ 2001 - 2003 թթ. համապատասխանաբար կազմել է 12, 2.15 և 1.91, ինչը ցույց է տալիս, որ կապիտալի մեկ տոկոս փոփոխությունը համապատասխանաբար բերել է ՀՆԱ 12%, 2.15% և 1.97% աճ:

ՀՆԱ-ի առաձգականության դինամիկան աշխատուժի նկատմամբ ունեցել է բացասական արժեք: Չնայած դրան, սկսած 2000 թվականից, ՀՆԱ փոփոխությունը, մնալով բացասական, արագ տեմպերով աճել է, սակայն 2003 թ. գրանցվել է կտրուկ նվազում: Դա կարելի է բացատրել նրանով, որ աշխատուժը յուրաքանչյուր հաջորդ տարի նվազել է՝ համեմատած նախորդ տարվա հետ: ՀՆԱ աճի վրա ազդել է միայն կապիտալի աճը:

## 6.2. ՀՀ տնտեսական աճի և արտաքին առևտրի վերլուծությունը

Մենք դիտարկեցինք կապիտալի և աշխատանքի փոփոխության գործոնների ազդեցությունը տնտեսական աճի վրա: Այժմ պարզենք առևտրի ծավալի փոփոխությունը՝ կախված այն հատվածների աճի տեմպերից, որտեղ արտադրվում են արտահանման ապրանքներ, ինչպես նաև արտադրության ծավալի փոփոխությունը՝ կախված երկրի սպառման կառուցվածքից:

Քանի որ երկրում տնտեսական աճը կարող է պայմանավորված լինել տարբեր գործոնների ազդեցությամբ, ապա վերլուծության ժամանակ անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպք դիտարկել առանձին-առանձին և որոշել, թե ի՞նչ փոփոխության կենթարկվի յուրաքանչյուր գործոնը որոշակի իրավիճակում:

Այս դեպքում համեմատական տնտեսական ապահովվածությունը ՀՀ-ում ցույց է տալիս, որ.

- կապիտալը 1995 - 2002 թթ. աճել է և շարունակել է աճել 2003 թվականին,
- գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկված մասնագետների թիվը տատանվել է մինչև 1999 թ., սակայն 2000 թ. սկսած, գրանցվել է աճի միտում,

- գյուղատնտեսական հողատարածքների փոփոխության դինամիկան ցույց է տալիս, որ այն ունեցել է աճի միտում, և աճը տատանվել է 0.3% - 2%-ի սահմաններում, ինչը շարունակվել է նաև 2003թ.,
- ագարակային տնտեսությունների քանակի փոփոխությունը նույնպես ունեցել է աճի միտում և աճը տատանվել է 0.7% -4.1%-ի սահմաններում. արդյունքում ագարակային տնտեսությունների ստեղծմամբ, նոր առևտրի ոլորտների առաջացմամբ կարելի է կանխատեսել, որ ԱՀԿ անդամակցության շնորհիվ աստիճանաբար կկատարելագործվեն գյուղատնտեսական արտադրանքի արտահանման մեխանիզմները, կընդլայնվի ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի արտասահմանյան սպառողների շուկան և այլն:

Բացի այդ, կապիտալի հարաբերությունը աշխատուժին հնարավորություն է տալիս մեկ աշխատողի հաշվով գնահատել կապիտալի ֆոնդը և դիտարկել այդ մեծության դինամիկան: Ինչպես վկայում են աղյուսակ 6.1-ի տվյալները՝ կապիտալ/աշխատուժ հարաբերակցությունը 1995 - 2003 թթ. ունեցել է աճի միտում:

Հետաքրքիր է դիտարկել նաև կապիտալի և աշխատուժի հարաբերության փոփոխությունը (տոկոսներով, 1994 թ. = 100%), որը 2002 թ., 1994 թ. համեմատությամբ, կազմել է 212%, իսկ 2003 թ.՝ 285%: Նման աճը բնական է զարգացող երկրի համար և համեմատական է մյուս զարգացող երկրների հետ:

Տնտեսության աճի, նոր արտադրությունների ստեղծման, ինչպես նաև արտահանվող ապրանքների՝ արտաքին, ներմուծվող ապրանքների՝ ներքին պահանջարկի փոփոխության պայմաններում փոփոխվում է երկրի արտաքին առևտրի վիճակը:

Առևտրի փոփոխության վերլուծությունը պետք է կատարել հիմք ընդունելով ՀՀ արտահանում/ներմուծում հարաբերակցությունը: Աղյուսակ 6.1-ում ներկայացված են ՀՀ արտաքին առևտրի *արտահանում/ներմուծում* հարաբերակցության փոփոխությունները ընդհանուր տնտեսության համար, ԱՊՀ երկրների և այլ երկրների հետ:

Մինչև 1998թ. *արտահանում/ներմուծում* հարաբերությունը ընդհանուր տնտեսության համար ունեցել է նվազման, այնուհետև, 1999թ. մինչև 2003թ. ներառյալ՝ աճի միտում:

*Արտահանում/ներմուծում* հարաբերակցությունը ԱՊՀ երկրների հետ ունեցել է տատանողական բնույթ: 1994-1997թթ. այն բարձր տեմպերով նվազել է, այնուհետև՝ մերթ աճել, մերթ՝ նվազել: 2003թ., 2002թ. համեմատ, զգալի աճ է նկատվել ԱՊՀ երկրների հետ հարաբերություններում: Սա վկայում է այն մասին, որ Հայաստանը զարգացնում է իր արտաքին առևտրատնտեսական կապերը ԱՊՀ երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի հետ: Սակայն այս երևույթը տարօրինակ բնույթ է կրում, քանի որ ԱՀԿ-ին անդամակցությունից հետո Հայաստանի արտաքին առևտուրը պետք է կողմնորոշվեր դեպի ԱՀԿ անդամ երկրների շուկաներ: Արտահանում/ներմուծում հարաբերակցության ցուցանիշը այլ երկրների հետ նույնպես կրել է տատանողական բնույթ, սակայն այդ տատանումները, ԱՊՀ երկրների համեմատ, այդքան զգալի չեն եղել: 2003 թվականին, 2002թ. համեմատ, այլ երկրների հետ *արտահանում/ներմուծում* հարաբերակցությունը նույնպես զգալի աճել է: Աղյուսակ 6.1-ում ներկայացված է նաև ընդհանուր, ԱՊՀ և այլ երկրների հետ *արտահանում/ներմուծում* հարաբերակցության տոկոսային փոփոխությունը (1993 = 100%):

Արտահանման ծավալները 1994 - 1996 թթ. ընկած ժամանակաշրջանում ավելացել են, սակայն այդ աճն ունենցել է նվազող տեմպ: Այսինքն՝ աճը ամեն մի հաջորդ տարում, նախորդ տարվա համեմատ, ավելի քիչ է եղել: 1998 թվականից արտահանման ծավալները ավելացել են, աճի տեմպը եղել է տատանվող, սակայն 2003 թվականին, 2002թ. համեմատ, այդ տեմպը զգալիորեն մեծ է եղել:

ԱՀԿ-ին անդամակցությունը ենթադրում է երկրների միջև ազատ առևտրի խթանում, սակայն գործնականում ՀՀ-ն, մյուս ԱՀԿ անդամ երկրների նման, սահմանել է միջազգային առևտրային հոսքերի ազատությունը սահմանափակող ու կարգավորող առևտրային քաղաքականություն: Հետևաբար, ինչպես կարճատև, այնպես էլ երկարատև ժամանակահատվածի համար նպատակահարմար է առաջնորդվել միջազգային առևտրի բնագավառում կիրառվող մեթոդաբանությամբ, ինչը հնարավորություն կընձեռի որոշել փոքր երկրի սակագնային արդյունավետ նորման:

Եթե երկիրը փոքր է, ապա նրա կողմից տարիֆի սահմանումը չի ազդի միջազգային գնի վրա, սակայն ներմուծվող ապրանքի

գինը կավելանա այդ տարիֆի չափով: Ընդ որում, այդ ավելացումը անհատ արտադրողի կամ սպառողի համար ունի էական նշանակություն, ու հետևաբար սակագնային քաղաքականությունը պահանջում է մշակել այնպիսի մոտեցումներ, որոնք կխթանեն ներքին արտադրությունը և կապահովեն ՀՆԱ աճ:

Քանի որ ՀՀ-ն հիմնականում ներմուծող երկիր է, ապա ներմուծման գործընթացի հուսալիությունը և դրա անվտանգությունը ներքին արտադրության համար կարևոր նշանակություն ունի: ԱՀԿ Անվտանգության համաձայնագիրը (Agreement of Safeguards) թույլ է տալիս անդամ երկրներին մշակել և կիրառել տեղական արտադրության անվտանգության ապահովման այն չափաքանակները, որից ավելի ներմուծումը կարող է լուրջ վնաս պատճառել ներքին արտադրությանը:

ԱՀԿ-ի շրջանակներում բազմաթիվ քննարկումներ են անցկացվել, անվտանգության չափերի կիրառման ընդունելի մեթոդաբանություն մշակելու համար: 2002թ. մարտ ամսին, օրինակ, ԱՄՆ-ը անվտանգության չափաքանակներ կիրառեց ներմուծվող պողպատի որոշակի տեսակների համար: Հիմնվելով այդ փորձի և մշակված փաստաթղթերի վրա՝ վերլուծենք անվտանգության չափաքանակների սահմանման խնդիրները ՀՀ միջազգային առևտրում կիրառելու համար:

Անվտանգության չափաքանակների խնդիրն ի հայտ է գալիս այն արտակարգ դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում ապահովել տեղական արտադրության անվտանգությունը: Դրանք հիմնականում իրականացվում են այն ապրանքների ներմուծումը սահմանափակելու համար, որոնք նաև բավականին արագ են սպառվում: Համաձայն GATT (1994) կետ 19-ի և Անվտանգության համաձայնագրի՝ անվտանգության չափաքանակներ կարող են սահմանվել և կիրառվել այն դեպքերում, երբ զարգացումներն անկանխատեսելի են, և ապրանքը ներմուծվում է այնքան մեծ քանակներով, որ կարող է վտանգավոր լինել և վնաս հասցնել ներքին արտադրությանը:

Հայաստանի Հանրապետության կողմից ներմուծվող ապրանքների տեսականու շարունակվող աճը ու տեղական արտադրության ապրանքների քանակական ու որակական զարգացումը հնարավորություն է տալիս մշակել իրականությանը համապատաս-

խանող վերլուծական այնպիսի մոդել, որը թույլ կտա սահմանել և կիրառել սակագնային պաշտպանվածության արդյունավետ նորմեր, ներմուծվող ապրանքների քանակների օպտիմալ ծավալներ, իրականացնել Անվտանգության համաձայնագրում թվարկված պահանջների կատարումը:

### 6.3. ՀՀ առաջարկի ու պահանջարկի շոկերը և մաքսային սակագների կարգավորումը

Դիտարկենք առաջարկի և պահանջարկի միագումար ստանդարտ մոդելը: Այս մոդելն արտահայտում է առաջարկի և պահանջարկի շոկերի ազդեցությունը տնտեսության զարգացման տարբեր գործոնների վրա: Կարճատև ժամանակահատվածում ամբողջական պահանջարկի աճը ապահովում է տնտեսական աճ: Դրա հետ մեկտեղ, ամբողջական պահանջարկի անընդհատ շոկերը պայմանավորում են գների աճ երկարատև ժամանակահատվածում, իսկ ՀՆԱ մակարդակը պահպանվում է հաստատուն: Դրան հակառակ, առաջարկի շոկը ընդգրկում է արտադրության ծախքերը և, որպես հետևանք, կազմակերպությունները իրենք են սահմանում իրենց արտադրանքի գինը: Բարենպաստ առաջարկի շոկի պայմաններում արձանագրվում է գների իջեցում և արտադրության ծախքերի նվազում, սակայն անբարենպաստ պայմաններում նկատվում է արտադրության մակարդակի նվազում և գների աճ: Նշված տարբերությունները հնարավորություն են տալիս առանձնացնել դիտարկվող տվյալները՝ ըստ դրանց ազդեցության:

Նախ և առաջ պետք է ուսումնասիրել, թե ինչպես են արտահայտվում առաջարկի և պահանջարկի շոկերը Հայաստանի Հանրապետության տնտեսությունում: Տարբեր շոկերի ազդեցությունը առաջին անգամ դիտարկվել է 1989 թվականին,[36] երբ ուսումնասիրվում էին պահանջարկի և առաջարկի շոկերի ազդեցությունները ՀՆԱ-ի և գործազրկության վրա, ապա հրապարակվել են նաև այլ գիտական ուսումնասիրությունների արդյունքներ (1992[37] և

[36] *Blanchard O. and Duah, 1989, The Dynamics Effects of Aggregate Demand And Supply Disturbances, American Economic Review, Vol 79, pp. 655-673.*
[37] *Bayoumi T., 1992, The Effect of the ERM on Partcipating Ecomomies, Staff Papers, International Monetary Fund, Vol. 39, pp. 330-356.*

1993[38] թվականներին): Քանի որ նշված հեղինակների կողմից մոտեցման մանրամասն նկարագրությունը արդեն կատարված է, կարելի է դիտարկել միայն հիմնական մեթոդաբանությունը, որպեսզի հնարավոր լինի նկարագրել մեզ հետաքրքրող մոդելը: Ստանդարտ միագումար առաջարկի և պահանջարկի մոդելին համապատասխան ՀՆԱ-ի փոփոխությունը ($\Delta GDP_t$) կարելի է ներկայացնել որպես ֆունկցիա՝ կախված գների միաժամանակյա փոփոխությունից և ՀՆԱ-ի ու սղաճի մեկ քայլանի ուշացումներից: Օգտագործելով համապատասխան ֆունկցիոնալ կախվածությունը գների փոփոխության ($\Delta P_t$) համար և սահմանափակելով համակարգը մեկ քայլանի ուշացումով՝ կստանանք երկու փոփոխականով վեկտորային ռեգրեսիայի համակարգ (VAR system):

$$\Delta GDP_t = b_{10} + b_{11}\Delta CPI_t + b_{12}\Delta GDP_{(t-1)} + b_{13}\Delta CPI_{(t-1)} + edt \qquad (1)$$

$$\Delta CPI_t = b_{20} + b_{21}\Delta GDP_t + b_{22}\Delta GDP_{(t-1)} + b_{23}\Delta CPI_{(t-1)} + est \qquad (2)$$

Այս հավասարություններում հանդիպող սխալն արտահայտող երկու փոփոխականները՝ edt և est, ներկայացնում են պահանջարկի ու առաջարկի շոկերը և ենթադրում են չկոռելացված սպիտակ աղմուկներ: Հավասարումները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

$$\begin{vmatrix} 1 & -b_{11} \\ -b_{21} & 1 \end{vmatrix} \begin{vmatrix} \Delta GDP_t \\ \Delta CPI_t \end{vmatrix} = \begin{vmatrix} b_{10} \\ b_{20} \end{vmatrix} + \begin{vmatrix} b_{12} & b_{13} \\ b_{22} & b_{23} \end{vmatrix} \begin{vmatrix} \Delta GDP_{(t-1)} \\ \Delta CPI_{(t-1)} \end{vmatrix} + \begin{vmatrix} edt \\ est \end{vmatrix} \qquad (3)$$

Այս համակարգը կարելի է բերել հետևյալ տեսքի.

$$\begin{vmatrix} \Delta GDP_t \\ \Delta CPI_t \end{vmatrix} = \begin{vmatrix} a_{10} \\ a_{20} \end{vmatrix} + \begin{vmatrix} a_{11} & a_{12} \\ b_{21} & b_{22} \end{vmatrix} \begin{vmatrix} \Delta GDP_{(t-1)} \\ \Delta CPI_{(t-1)} \end{vmatrix} + \begin{vmatrix} e1t \\ e2t \end{vmatrix} \qquad (4)$$

[38] *Bayoumi T. and B. Eichengreen, 1993, Shocking Aspects of Monetary European Monetary Unification, The transistion to Economic and Monetary Union in Europe, ed.by F. Giavazi and F. Torres (Cambridge University Press), pp. 193-222.*

որտեղ՝ $a_{ij}$ տարրերը, ինչպես և սխալը արտահայտող նոր *e1t, e2t* փոփոխականները ստացվում են (3) արտահայտության ձևափոխությունից: Ընդունում ենք, որ *e1t, e2t* սխալների մաթեմատիկական սպասումները հավասար են զրոյի: Քանի որ *e1t, e2t* փոփոխականներով վեկտորը ստացվում է (edt, est) վեկտորի և (1) համակարգի մատրիցայի ինվերսիայի արտադրյալից, ապա *e1t, e2t* հանդիսանում են edt, est շոկերի կոմպոզիցիա: Այսպիսով, առաջարկի և պահանջարկի շոկերը ստանալու համար նախ կստանանք VAR համակարգը, որը հնարավորություն է տալիս հաշվել սխալները: Օգտագործելով սխալը արտահայտող փոփոխականը՝ այն կարելի է վերածել պահանջարկի և առաջարկի edt, est շոկերի:

Կիրառենք այս մեթոդաբանությունը Հայաստանի տնտեսության համապատասխան մոդելի մշակման համար: Տվյալները տեղադրելով համապատասխան մոդելի մեջ՝ ստանում ենք ՀՀ տնտեսության համար անհրաժեշտ առաջարկի և պահանջարկի շոկերը, որոնք արտահայտված են 6.1 և 6.2 գծապատկերներում:

**Գծապատկեր 6.1. ՀՀ տնտեսության պահանջարկի շոկը**




Գծապատկեր 6.1-ը ցույց է տալիս, որ 2001թ. սկսած նկատվում է դրական ամբողջական պահանջարկի շոկ: Այն կարելի է բացատրել այն հանգամանքով, որ մինչև 2001 թ. տեղի ունեցած տնտեսական անկմանը հաջորդել է տնտեսական աճ, որը շարունակվել է մինչև 2003 թվականը:

**Գծապատկեր 6.2. ՀՀ տնտեսության առաջարկի շոկը**




Գծապատկեր 6.2-ը ցույց է տալիս, որ դրական և բացասական ամբողջական առաջարկի շոկերը հավասարապես են բաժանվել 1993 - 2003 թթ. ժամանակահատվածում: Դա կարելի է ընդունել որպես ՀՀ տնտեսության ամբողջական առաջարկի շոկի բնութագիր:

Արտահանման և ներմուծման ֆունկցիաների օգնությամբ կարելի է որոշել այն կախվածությունները, որ տեղի ունեն Արտահանում - ՀՆԱ և ՀՆԱ - Ներմուծում զույգերի միջև: Այդ ֆունկցիաները ունեն հետևյալ տեսքը.

- Արտահանում - ՀՆԱ ֆունկցիա՝

$$\Delta GDP = 0.02\,\Delta Exp + 0.05$$

- ՀՆԱ - Ներմուծում՝

$$\Delta IMP = 0.2\,\Delta GDP + 0.09:$$

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ արտահանման 1% աճը կպայմանավորի ՀՆԱ-ի 0.02% աճ, իսկ ՀՆԱ-ի 1% աճը կապահովի ներմուծման 0.2% աճ: Շարունակելով Արտահանում - ՀՆԱ և ՀՆԱ - Ներմուծում զույգերի ուսումնասիրությունը՝ կարող ենք գնահատել ՀՆԱ առաձգականությունը արտահանման նկատմամբ և ներմուծ-

ման առաձգականությունը ՀՆԱ-ի նկատմամբ: Համաձայն աղյուսակ 6.1-ի՝ տեսնում ենք, որ.

- ՀՆԱ առաձգականությունը արտահանման նկատմամբ, սկսած 2000թ., ունեցել է աճի տեմպ. 2001թ. տեղի է ունեցել առաձգականության կտրուկ աճ, սակայն 2003թ. գրանցվել է առաձգականության նույնպիսի կտրուկ անկում,
- ներմուծման առաձգականությունը ՀՆԱ-ի նկատմամբ, սկսած 2001թ., ունեցել է աճի տեմպ, որը 2003թ., 2002թ. համեմատ, կտրուկ աճել է. 2002թ. և 2003թ. աճը համապատասխանաբար կազմել է 0.93% և 2.97%:

Համեմատության համար կարելի է դիտարկել մի քանի երկրների ներմուծման առաձգականությունը ՀՆԱ-ի նկատմամբ, որ ներկայացված է աղյուսակ 6.2-ում:

*Աղյուսակ 6.2*

**Ներմուծման առաձգականությունը ՀՆԱ - ի նկատմամբ**[39]

| Երկիր | Առաձգականության ցուցանիշը |
|---|---|
| ԱՄՆ | 1.94 |
| Անգլիա | 2.51 |
| Գերմանիա | 1.88 |
| Կանադա | 1.84 |
| Ճապոնիա | 0.35 |
| OECD-ի այլ երկրներ | 2.03 |
| OPEC-ի երկրներ | 1.07 |
| Թույլ զարգացած երկրներ | 0.40 |

Այսպիսով կարելի է նշել հետևյալը. 2003թ. արտահանման դինամիկան հավասար է եղել 0.34, որը, համեմատած 2002թ. 0.02 դինամիկայի հետ, ավելի մեծ է: Ներմուծման դինամիկան 2003թ. հավասար է եղել 0.29, որը, համեմատած 2002թ. 0.12 դինամիկայի հետ, նույնպես ավելի մեծ է: ՀՆԱ-ի 2003 դինամիկան հավասար է

[39] *Աղբյուրը՝ J. Magueg. Bilateral Trade Elasticities. Review of Economics and Statistics, February 1990, p.75.*

եղել 0.145, որը գերազանցում է 2002թ. 0.129 կազմող դինամիկան: Օգտվելով Արտահանում - ՀՆԱ և ՀՆԱ - Ներմուծում ֆունկցիաներից՝ կարելի է եզրակացնել, որ արտահանման աճը նպաստել է ՀՆԱ աճին, իսկ վերջինս իր հերթին պայմանավորել է ներմուծման աճը:

Հետևաբար, ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան խիստ կապված է արտաքին առևտրի գործոնների հետ: Ուստի ՀՀ արտաքին առևտրի ուսումնասիրությունը անհրաժեշտ է կատարել մակրոտնտեսական ցուցանիշների միջոցով և առևտրի վիճակը բնութագրող փոփոխականները հետազոտել մեկ միասնական մոտեցման հիման վրա: Միջազգային առևտրի մեթոդաբանության կիրառումը ՀՀ արտաքին առևտրի հետազոտման համար ցույց է տալիս, որ այդ բնագավառում դիտարկվող գործոնները, փոփոխականներն ու մեծությունները կարելի է հաջողությամբ կիրառել ՀՀ արտաքին առևտրի գործընթացը գնահատելու և ներկայացնելու համար:

Module Abstract

## Effects of WTO Accession on Armenia's Foreign Trade Policy

In 2003 Armenia became a full member of the World Trade Organization (WTO). It was a long process that lasted more than 9 years and included numerous amendments and improvements in the Armenian legislation that were directly and indirectly related to the foreign trade. Yet, there still remains much to be done to fully meet Armenia's obligations undertaken as a WTO member and to make Armenian foreign trade policy both more effective and consistent to the WTO rules and regulations.

Overall, the main objective of WTO is to assist foreign trade to flow smoothly, freely, fairly and predictably by administering trade agreements, acting as a forum for trade negotiations, settling trade disputes and reviewing national trade policies according to its multiple agreements. Membership into WTO fosters the integration of any given country into the World economy, opening a wide range of opportunities using scarce resources more effectively.

Taking into consideration the advantages provided by WTO to its members, in 1993, Armenia applied to join to GATT, later on re-formed into the WTO in 1995. The membership process required numerous changes in various areas of the Armenian economy.

After independence, Armenia started to create a market-oriented economy for which a comprehensive economic stabilization and structural reform program had to be implemented. To promote exports, a 0 % tariff rate was introduced for exporting products, while for importing products the tariff rates were 0, 5, 10, 30 and 50 %. The importing tariff rates have been simplified in 1997 according to the first requirements of WTO working team.

Based on recommendations by the WTO working team, a new customs code was developed and ratified in 2001, the provisions of

which were consistent with most WTO requirements. According to the new customs code, import tariffs were applied on 99 product items, whereas previously the schedule included more than 300 items. The new Code brought several changes, namely, in particular, new customs evaluation methods were introduced and import/export documentation was simplified.

According to WTO requirements several essential changes have been made in non-tariff regulation to further shape Armenia's new foreign trade policy. Those are related to import/export labeling, standardization and licensing, which have been brought into conformity with the WTO requirements. Of course, there still remains much to be done.

To guarantee the efficiency of WTO's MFN clause, Armenia made several other changes in its taxation system such as VAT and excise taxes schemes to ensure that foreign importers have the same market conditions and are granted equal treatment as domestic producers.

The changes made in foreign economic policy of Armenia based on the requirements of WTO have positive impact on the economy of Armenia. During the last 4 years Armenia has steady economic growth accompanied by export growth.

To sum up, it can be stated that the foreign trade policy of Armenia meets the requirements of WTO but there are still weak spots in policy implementation system. More improvements and further negotiations and consultations are to ensure better conditions for the development of the country's economy and bring stronger positive impacts on foreign trade of Armenia.

Module Abstract

## Compliance of Armenia's Foreign Trade Agreements with WTO Requirements

After independence in 1991 Armenia's trade and economic systems were paralyzed due to the breakdown of the Soviet system. Developing trade relations with other countries became a vital issue for smooth economic recovery. Today, Armenia has economic relations with more than 100 countries. With most of these, Armenia signed different agreements to effectively regulate the transfer of goods, services and knowledge.

During the first years of independence, economic relations were sporadic and basic trade rules and internationally accepted principles were not taken into consideration. After submitting an application for membership into the World Trade Organization (WTO), all agreements and foreign economic relations were brought into compliance with the requirements of WTO.

Between 1991 and1995, after effectively regaining political independence, Armenia tried to re-establish economic relations with former Soviet countries, and in 1993 the Agreement for Economic Union has been signed with Azerbaijan, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Moldova, Russia, Tajikistan and Uzbekistan. At the same time, bilateral free trade agreements were signed with Kyrgyzstan, Kazakhstan, Georgia, Moldova, Russia, Tajikistan and Uzbekistan. Armenia became a member also of the Black See Economic Cooperation Organization (BSEC).

In 1991-1995 Armenia signed many economic, cultural and other agreements with countries like Lithuania, Estonia, Romania, Iran, China, Germany, GB, France, etc. But in most cases these agreements did not correspond to the basic requirements of WTO.

During 1996-1998 period, Armenia signed new agreements with several other countries and organizations such as Italy, Egypt, Canada, Israel, Switzerland and European Council, etc., this time taking into consideration the requirements of WTO.

During 1999-2003 all bilateral and multilateral agreements that Armenia signed were strictly consistent with the requirements of WTO.

There are neighboring countries that Armenia has no economic relations with, for example, neighboring Turkey and Azerbaijan, because of political problems.

As to its Southern neighbor Iran, there is a need to improve existing economic and political agreements should be improved in order to block the inflow of low quality products.

The fourth neighbor, Georgia, became a WTO member earlier than Armenia. Georgia plays an important role in Armenia's foreign trade relations because it represents major gateway for Armenian trade.

Membership in the WTO assists Armenia in reviewing all former agreements with other countries, thus, creating equal conditions for foreign businesses in its markets and providing new advantages for Armenian businesses in WTO member countries. This will create a healthy competitive environment for businesses and will foster foreign trade and economic ties that allow the further integration of Armenia in the global marketplace.

Module Abstract

## WTO Accession and Foreign Trade Relations with Neighboring and Main CIS Partner Countries

Here an attempt is made to present how WTO accession may influence Armenian foreign trade, and to evaluate the possible impact of Armenia's membership to the WTO on the country's trade orientations and directions in the short period.

The first of three parts investigates WTO membership aspirations and efforts in the neighboring countries (Iran, Georgia, Turkey) and Armenia's main CIS partners (Russia, Ukraine, Belarus). Particularly, for each country the negotiation process is described, and the difficulties that arise in those negotiations are discussed.

The second part examines Armenian foreign economic relations with its neighboring countries, particularly with Iran, Georgia and Turkey. Due to the absence of relevant data, Armenian economic relations with Azerbaijan are not dealt with. Hence, the potential impact of WTO accession on Armenia's trade relations with the neighboring countries is analyzed. It is assumed that WTO accession has slowed down and in the future may further reduce Armenia's foreign economic relations with Iran, as a result of changes in Armenian foreign trade directions. Yet, WTO membership makes it possible for Armenia to access new markets providing better and more favorable conditions. After becoming a WTO member Armenian foreign trade with Georgia and Turkey has increased, but this growth cannot be estimated yet as a direct result of the WTO accession. Foreign trade with these countries started to increase from 2001 and can be explained by the changes that have taken place in Armenia's foreign trade trends. In this respect it is important to state that before Georgia's accession to the WTO

Armenia's bilateral trade with Georgia tended to decrease, but certain growth has been noted following accession. Despite political tensions between Armenia and Turkey, foreign trade with that country also shows signs of development. According to estimates based on objective criteria, Armenia's membership to WTO outlines a more promising future in the development of Armenian-Turkish bilateral trade and economic relations.

The third part of the module studies Armenian economic relations with Russia, Ukraine and Belarus. Foreign trade with these countries subsequent to their membership to the WTO is analyzed. Immediately after Armenia's independence the countries foreign trade was mainly directed toward CIS countries and Iran. Starting from 1998 there was a shift toward the European countries, mainly EU members, and yet starting from 2001 Armenian economic relations with CIS countries and particularly with Russia are again on the rise. Although Russia is not a member of WTO, after Armenia's accession bilateral trade with Russia show a tendency to substantially grow, in terms of both import and export. With Belarus, there is an increased volume of imports, but Armenian-Ukrainian trade has been showing signs of decline.

To sum up, it is unrealistic to expect that WTO accession will bring tangible short-term advantages for Armenia. This assumption is also substantiated by statistical data. Yet, it is also a fact that WTO accession has already triggered changes in Armenian trade patterns and practices, and will pave Armenia's way to new markets. Hence, it is important to develop Armenia's domestic industry in order to ensure broad perspectives for future growing exports.

Module Abstract

## The Impact of WTO Accession on Armenia's Trade Balance

The overall objective of this module is to provide a thorough knowledge on issues related to Armenia's trade balance, its trends in the last ten years, compared with other WTO members and non-member countries, as well as export/import trends after Armenia's WTO accession and advantages and disadvantages of WTO membership. It provides students with a basic understanding of how accession to the WTO may effect trade balance improvement in the short- and long-terms.

The analysis of trade balance is conditionally divided into two parts: before and after WTO accession.

The first part of this module is devoted to the general description of the current trade balance issues of Armenia. The Armenian economy, with its small domestic market economy is very dependent on export performance. Statistical data provided by the Armenian National Statistical Service give evidence that the country's exports have been strongly growing in the last two years. Although trade balance in 2002 continued to be negative, the deficit decreased substantially in comparison with 2001. This has positively affected the overall macroeconomic situation.

The second part involves the analysis of commodity composition of the trade balance. The country's exports grew substantially in the "Precious and semiprecious stones, precious metals", "Machinery and equipment", "Prepared foodstuffs" and other categories. Armenia has only a few commodity subgroups that can be considered export top-riders, at least in the short run. These are mainly diamonds and stones, preserved tomatoes, canned fruits and vegetables, alcoholic beverages, machinery and equipment. Prospects of expanding these exports are substantial. However,

enterprises involved in these sectors experience several problems, mostly, the lack of efficient marketing and a weak cost control management. Generally, the exporting enterprises in these industries have strongly benefited from the foreign direct investment inflows in the recent years. Armenian exporters are experiencing problems with the exploration of new markets. To have a more diversified exports structure is crucial for the sustainability of export growth.

The third part of the module describes the regional (by country) structure of the trade balance. In the last two years, exports substantially grew to the CIS region, mostly due to a stronger demand in the Russian markets, as well as the economy growth and substantial increase of real incomes in Russia. The EU also has a quite significant share in total exports, mainly Belgium, UK, Germany, and the Netherlands. Main exports here are precious and semiprecious stones, which benefit from quite low transportation costs. Instead, the rate of imports grew substantially from CIS, EU and Israel. The share of USA in total imports decreased due to the reduction of volumes of humanitarian aid.

The forth part elaborates how accession to WTO could effect and improve the trade balance in the short and long runs. Taking into account that Armenia's foreign trade regime of goods and services (except telecommunication and financial services sectors) is already very liberalized, there will be probably no substantial shifts in trade flows or new foreign competition in the short run. But, predictability and clarity provided by WTO rules, i.e. binding tariffs, application of MFN and national treatment principles by all the Members, are likely to bring substantial benefits for Armenia's manufacturers and exporters in the long run. Additionally, foreign competition may increase in a number of services sectors along with further liberalization and the development of those sectors. This scenario would be more realistic if Armenia maintained a developed infrastructure.

Module Abstract

## Effects of WTO Accession on the Development of Export Oriented Sectors in Armenia

Export promotion and development of that important economic engine depends, first and foremost, on the legislative framework and foreign economic and trade relations. To date, much has been done to create, through adoption and enforcement of appropriate laws and regulations, a favorable and liberalized economic environment for the development and management of the exports sector.

Membership in WTO offers a number of advantages and positive factors for exports promotion in Armenia, thanks to existing WTO export regulation mechanisms.

Armenia underwent a long process of accession to the WTO. During this period, the bases for its membership agreement were forged through lengthy negotiations, consultations, and extensive question-and-answer and other paperwork. As expected, in the process of acceding to the WTO, Armenia undertook certain responsibilities and obligations, and it was rightfully anticipated that WTO membership might have both positive and negative effects in the short run on the national economy. This included Armenia's exports, as well as imports sectors.

The analysis and comparison of the dynamics and structure of Armenian exports before and after the membership in WTO reveal some important positive changes. Thus, for instance, during January-November, 2003, as compared with January-November, 2002, Armenian exports increased by 36% and the whole export turnover was 35% against 25% in 2000. Russia, among the CIS countries, and Belgium from Armenia's European trading partners has the greatest share in the Armenian exports.

Of course it would be incorrect to assume a direct correlation between the above with Armenia's one-year-long WTO membership. For this, it is necessary to undertake a certain mechanism of export promotion, in tune with WTO requirements and rule.

Subsequent to Armenia's membership in the WTO, it is now possible to assess the main export oriented sectors and spheres both in the short- and long-term perspectives.

In estimating the state of affairs in Armenia's export oriented sectors it is important to give a careful consideration to issues like raw materials, national privileges, ethnic, sex and age composition of Armenia's population and many other factors and indicators. It is especially important to focus on the sectors that are supported by WTO, such as the intellectual property rights and their protection within the framework of WTO. Tourism and other services sectors are also given much attention under the WTO.

Additionally, Armenia has undertaken certain obligations and responsibilities in the agricultural sector. The implementations of these commitments will bring about certain problems related to taxation, as well as instigate an increase in prices of agricultural products. This could mean that Armenia may become a serious and competitive exporter of agricultural and agro-food products only in the future.

Module Abstract

## The Macroeconomic Situation in Armenia before and after WTO Accession

This module analyzes Armenia's macroeconomic indicators before and after WTO accession. It is argued that Armenia's membership in the WTO provides new opportunities for expanding Armenia's foreign trade and identifying new international trade partnerships. The approach adopted in this module allows determining the main macroeconomic factors that are important for trade policy analysis.

The following main macroeconomic indicators were studied: GDP, Consumer Price Indexes, Unemployment, Capital, Labor, Export, Import of Armenian Economy before and after WTO accession, precisely for the period 1994 - 2002 and 2003. The study of macroeconomic indicators of the Armenian economy helps in implementing comparative macroeconomic analysis of Armenian international trade before and after WTO accession. Thus, the application of the methodology of international trade and the analysis of impacts on the economy provide a basis for macroeconomic modeling of Armenia's international trade. The models developed here allow for a better implementation of Armenia's foreign trade policy. Models developed in the current study allow for expansion and application as basis for the investigation of Armenian economy during the years following the period 1994 -2003.

We have found that Armenian macroeconomic indicators are interrelated and have demonstrated that macroeconomic indicator dynamics depends from the variables characterizing international trade. Therefore, with the study of Armenian international trade and policy analysis, we should implement the investigation of macroeconomic indicators according to a tailored model. This

approach should provide the study of international trade and characterize its efficiency on the basis of the macroeconomic situation of the Armenian economy.

Next, we demonstrated that the existing methodology in International Trade allows the application for the study of activity during involvement with WTO. Explanations of changes in the Armenian economy following WTO accession show its benefits for Armenian economic growth, as well as for other countries participating as Armenian trade partners. Thus, WTO membership is mutually beneficial for both sides - Armenia and its partners because Armenia:

- Expanded the geography of its foreign market;
- Established new sectors of economy, providing high quality and competitive products in foreign markets;
- Reduced unemployment;
- Attraction of foreign investors.

Models devoted to the study of vector auto-regression system showed the dependence between Armenian Gross Domestic Product and Consumer Price Indexes, allowed the study of the dynamics of demand and supply shocks in the Armenian economy. However, one year of Armenian WTO membership is short to determine trends and will not provide basis for implementing a more substantial analysis. Nevertheless, the methodology and approaches developed in the current study can provide the application for time series analysis by gathering more and more additional data.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

# ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ

(ուսումնագիտական ձեռնարկ)

*Աշխատանքների ղեկավար և գիտական խմբագիր՝*
*տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*
**Թ. Շ. Թորոսյան**

Շապիկի ձևավորումը Հ. Համբարձումյանի

Ստորագրված է տպագրության՝ 15.04.2004 թ.:
Չափսը՝ 60 x 84 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրություն՝ օֆսեթ:
9.3 պայմ. տպ. մամ., 7.2 հրատ. մամ.:
Տպաքանակ՝ 500:

«ԱՌՏ» հրատարակչություն

«Երևանի առաջին տպարան» ՓԲԸ, Երևան - 10, Հանրապետության 65
Հեռ. 52.36.80